


ՀԱՅՈՒԹԻՒՆ

1993
Պ - Ժ



Ծ
ՏԱՐԵ

Էջմիածն



ՊԱՇՏՈՆԱԿԱ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱ
ԱԹՈՌՈՅ
Ա. ԷՋՄԻԱԾՆԻ

ԱԵՂՋԻ ՖԵՐ ԽՈՂՋԻ ՖԵՐ

1993



ՀՐԱՄԱՆԱՀ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՃԱՓԱԼ ԵՒ ՍՐԱԱՁԱԿՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՒԹ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



71-95

18245 ահ



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈԼԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ
85—ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ S. S. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ,
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեհափառ Տեր,

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ ծննդյան 85-ամյակի կապակցությամբ և մաղթում առողջություն ու ամենայն բարին:

Օգովում ենք այս գեղեցիկ առիթից և մեր խորին հարգանքը հավաստում Ձեզ՝ առաքինապաշտ մի անձնավորության, որն իր ողջ ուժն ու ավլումը, սերճ ու հավատու նվիրաբերել է Սատծուն ու իր ժողովրդին: Լինելով Հայոց Հովկապետ՝ Դուք հուսուն և ճշմարտության անսպաս աղբյուր եք եղել Ձեր հուսի համար, միանության ու հայրենայց վերածննդի խորհրդանիշ: Հայտական հոգատարությամբ ու խոհեմ խուրով ոգեանդել եք նրան և օգնել դիմակայելու բազում փորձություններ: Ձեր աստվածահասա աղոթքներն ու իմաստուն քարոզները սպեղանի են եղել նրա վերքերին, ափոփանք ու ուղեցույց՝ դժվարին պահին: Այսօր էլ Դուք Ձեր ոգու կայունությամբ զորավիզ եք մեր նորանկախ պետության հաստատմանը:

Խորին հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅՍՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՂՋՈՒՑՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՍՆԴՍՄ, Ն. Ս. Օ. Տ. Տ.
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Վեհափառ Հայրապետ,
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային
ակադեմիայի նախագահությունը հայոց գիտության մշակմերի ա-
նունից ի խորոց սրտի շնորհավորում է Զեզ՝ Զեր ծննդյան 85-րդ
տարելիցի առջիվ:

Զեր ողջ կյանքը հարազատ ժողովրդին անձնանվեր ծառա-
յելու անզուգական օրինակ է: Անձնանվեր ու անձնուրաց: Մեր
ժողովուրդը զգում է դա իր հոգու բոլոր եկաէջներով, Զեր մեջ
տեսնում մեր ազգային իդեալների մարմնացումը, ուստի և Զեր
հանդեպ տածում անսահման սեր ու հարգանքը:

Բարդ ու դժվարին է եղել մեր ժողովրդի կյանքի ուղին Զեր
կաթողիկոսության տարիներին ևս: Զարմանալի հմտությամբ, որ
բացառիկ անհատներին է տրված ի վերուստ, Դուք կարողացել
եք գտնել հայ ազգին հոգևոր սատար կանգնելու բոլոր եղանակ-
ները:

Դուք դարձել եք մեր ժողովրդի հավատը: Հավատը՝ ժողո-
վորդի կեցության նոյնիսկ ամենադժվարին պահերին, լավի ու
վատի, լուսի ու մթան աղջամուղջում լավը տեսնելու, լուսին ա-
պավինելու, իր ապագան սեփական ձեռքերով կոնլու հավատը:

Այս հավատը հուզ կարևոր է հատկապես մեր օրերում, եթ

Հայոց երկրի անկախությունը մեր ժողովուրդը ստիպված է պաշտպանել ամեն օր, ամեն ժամ իր որդիների արյան գնով:

Զարմանալի եռանդով Դուք լուծում եք հայ մարդուն հոգոյ բազմաթիվ հարցեր և այնաւու խղճի մտոք, խղճաբար, որ հրավամբ համարվում եք մեր ժողովրդի հավաքական խիղճը: Եվ՝ նաև ազնվությունը, բարոյական վսեմ նկարագիրը:

Չեզ ողջ քրիստոնեական աշխարհն է ճանաչում և բարեբախտաբար Չեր միջոցով է պատկերացում կազմում հայ մարդու մասին: Եվ դա մեծ պատիվ է ամեն մի հայի համար:


Հայ գիտնականները հապատակում են, որ Դուք Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամն եք: Դա մեծ պատիվ է նաև և առաջ մեզ համար:


Յանկանում ենք Չեզ, Վեհափառ Հայրապետ, ուժ ու կորով, ավյուն ու եռանդ, երկար տարիների կյանք՝ ի փառ անկախության ուղին բռնած Հայ հայրենիքի և բռնադակ ժողովրդի հայոց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ**

Երևան,

20 սեպտեմբերի 1993 թ.





ԼԵՇԱՅԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
ՕԾՈՒԹՅՈՒՆ S. S. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՍԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝
S. S. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Մայր Աքռո Սուրբ Էջմիածին

Վեհափառ Տեր,

Զեր աղոթքները, Զեր անմնացորդ նվիրումը արցախյան աղատագրական պայքարին, Զեր բարոյական և նյութական օգնությունը շոշափելի է ամեն մի արցախցու համար: Զեր աջակցությունը սիրագործություն է: ԼՂՀ Մայրության Հիմնադրամի Նախագահության որոշմամբ, Զեր ծննդյան 85-ամյակի առիթով, Դուք պարզմատրվել եք «Մայրական երախտագիտություն Երցախի Քաջորդիներին» մեղալով, որին արժանացել են մեր ժողովրդի կավակներից առավել արժանավորները՝ Արքուր Մկրտչյանը, Ցվետանա Պասկալովան, Մոնթե Մելքոնյանը, Քերոլայն Քոքսը, Աշոտ Բեկորը և ուրիշներ: ԼՂՀ Մայրության Հիմնադրամի Նախագահությունը Արցախի մայրերի անունից շնորհավորում է Զեր այս պարզեցի առթիվ, համբուրում Զեր Սուրբ Աջը, ցանկանում դարարաղյան երկարակեցություն, քաջառողջություն: Թող Զեր հոգատար Հայրական սիրտը երկար ու երկար բարախի համայն հայության բարօրության համար: Թող Զեր Սուրբ Աջը անպակաս լինի համայն հայության, ինչպես և արցախահայության գլխից: Համոզված ենք, որ այսուհետ նույնազն Զեր աղոթքներում կհիշեք Արցախի որդեկորույս մայրերին, որոնք բազում դարեր ի վեր մեր սուրբ հողի աղատագրման համար երկնել ու ծնել են քաջորդիներ հանուն հայրենյաց:

Աստված օգնական, Վեհափառ Տեր,
Հարգանոք՝

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀ

ԳԵՐԱԶՆԻՎ ՎԵՀԱՓՈՐ

այստեղի խաղաղության Ֆենդը, նրա բազմահազար համականոց բոջանիկ և պրտի խորքից զնորհավորելու Ձեր ծննդյան 85-ամյա տարեվեց:

Այս գեղեցիկ առիթով մօնք Երախտագիտության զգակմունքով նորի անդրադառնում մնք այն վկրթարի ու անգնահատելի ներդրմանը, որ Դուք կատարու և կատարում եք Հայ ժողովորի Կյանքի հոգուոր վերածննդի գործում, ինչպա՞ս նաև նրա Ճակատագրի բախտորոց պահպան: Ձեր իմաստուն գործով և ազնվական բարձր կենացքով Դուք վայելում եք մեր ժողովորի մերն ու հարգանքը:

Այսու ուզում ենք նշել նաև Ձեր մարդասիրական և բարեգործական մասնակցությունը խաղաղության պահպանման գործին, որի հայաստանյան կազմակերպության Երկարամյա պատվավոր անդամն եք Դուք:

Անկագին և սիրելի Ամենայն հայոց կաթողիկոս Ալեքսան Առաջին, մաշտում ենք Ձեզ քաջառողջություն, պատմական Ձեր առաքելության նոկար տարիներ, ի փառ Հայ ժողովորի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂԱՉՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ



Հ. Ա. Արքայի
Ա. Հարուրովովի
Գ. Խաչյան
Շ. Առաջին
Կ. Մերժով



ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱԾՐՈՒԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻՅԱՅԻ ՆԻՍՏԵՐԻ
ԴԱՀԼԻՇՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԱՄԵՆՍՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

1993 թվականի մեպտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմների դահլիճում տեղի ունեցավ գիտական նատաշրջան՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի ծննդյան 85-ամյակին։ Նատաշրջանը կոչված էր մեկ անգամ ևս ներկայացնելու Վեհափառ Հայրապետի հոգևոր, հասարակական, մշակութային գործունեությունը նորովի մեկնաբանություններով։

Նատաշրջանին ներկա էին Հայ Եկեղեցու բարձրաստիճանի հոգևորականներ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսներն ու թյուակից-անդամները, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Լուիզ-Սիմոն Մանուկյանը, մտավորականներ և այլ հասարակական ու մշակութային գործիչներ։

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ պրեզիդենտ Տ. Տ. Սարգսյանը, որը սեղմ գծերով ներկայացրեց Վեհափառ Հայրապետի երիտարդ տարիներից մինչև այսօր անցած ուղին և գործունեությունը։

ՑԱՌԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Մեծարգու Վեհափառ Հայրապետ,

Հարգելի տիկնայի և պարսեայի, բանկագիր հյուրեր,

Մեպտեմբերյան այս օրերին հայ ժողովարքը ամենուրեք՝ Հայաստանում թե Սփյուռքում, մի առանձին շուրջով նշում է Ամենայն Հայոց Հայրապետ նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի ծննդյան 85-ամյակը։ Դեռևս 38 տարի առաջ, երբ Վազգեն Ա. Հայրապետն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, մեծ ուրախություն ունեցանք երան տեսնելու Ա. Էջմիածնի կամարների տակ։ Այն ժամանակ նա հավաստիացրեց մեզ, որ Մայր Աթոռը,

Հայաստանիաց Առաջելական Եկեղեցին իր մեկուացված, աճշում վիճակից բարձրանալու է համաշխարհային նաևաչման աստիճանին:

Կարողիկոսական գահակալության անցած 38 տարիների ընթացքում հայ ժողովուրդը ականատես եղալ Վեհափառ Հոք ամբողջական հմիւրվածությանը ի սեր Աստուծո, ի սեր հայրենիքի և ի սեր ազգի: Աշխարհով մեկ կատարած իր շրջագայություններով և ոգեշունչ խոսի զորությամբ, ճգնելով ու տառապելով նա բարձրացրեց հայ անունը, նաևաչել տվեց ամենու երա մեծ ցավը:

Այսօր ի սրտ կարող ենք ասել, որ մենք ազգովին հպարտ ենք մեր սիրելի Վեհափառ Հայրապետով, ազգովին երախտապարտ ենք երան՝ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած իր մեծ սիրու և նմիւրվածության համար:

Տակավին երիտասարդ ուսուցիչ, Առն-Կարապետ Պալեյանը իր շուրջը հավաքված մի խումք նմիւրյալ երիտասարդների հետ խմբագրում էր «Հերկ» ամսագիրը: Գենևա 1937 թ. նա, խորապես համոզված, կոչ էր անում իր հայրենակիցներին՝ լինել ժողովրդի հետ՝ որպես կենսարանական արժեք, նոյնանալ ազգի և մշակույրի հետ՝ որպես բարոյական, հոգևոր արժեք, նոյնանալ հայրենիքի հողի, ջրի հետ՝ որպես աշխատող, ստեղծագործող արժեք, վերջապես նոյնանալ հայ պետուրյունը ամրացնող և երա ապագան իրականացնող իդեալների հետ՝ որպես հաղաքական արժեք: Ամա, մեր կարծիքով, պատկերը նշարտիտ հայի: Այսպիսի հասուն, կարգավորված գաղափարներով Ս. էջմիածնի նմիւրական միջավայրում վայլատակեց Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգեն Ա-ի միտքը:

Եկան ու անցան տարիները, և ձյունը Արարատի գագարից իջալ նաև Ամենայն Հայոց Հայրապետի զիմին՝ ավելացնելով երա իմաստությունը, սերը իր ժողովրդի հանդեպ:

Ամենայն Հայոց Կարողիկոսին սովորաբար կոչում են «Հինարար» և շեն սխալում: Իրավամբ նա Հայ Եկեղեցու պատմության մեջ հանդես եկալ որպես բայցանի շինարար Կարողիկոն, ի կատար ածեց հայի շինարարական ու կառուցողական սիրանեները: Վազգեն Ա-ի դեկալարությամբ են վերականգնվում և կյանքի կաշվում կիակործան ու լված մեր վանեները, որոնց կամացների տակ կրկին հնչեցին հայոց շարականները: Երա նաշակով վերականգնվեց Վեհառանը, երա նախաձեռնությամբ կառ ուցվեց «Ա-եք և Մարի Մանուկյան Գանձատունը», վերակառուցվեցին Ս. Հոփիսիմեն, Ս. Գայանեն, Ս. Շողակարը և Ս. Գեղարդը, Հաղարծինն ու Սևանը, Տարեն ու Խար Վիրապը:

Մեծարգ Վեհափառ Հայրապետ, Դուռ երկր երկիր, զաղոզախից գաղողախ տարածեցիք հայ ժողովրդի միասնության ու հավերժության գաղափարները, Ձեր անձնական օրինակով ոգեստեցիք հայրենիքից հեռու, սակայն մեշտ հայրենիքի հոգսերով ապրող մեր բույրերին ու եղբայրներին, Ձեր խոսերով լոյս սփոյցիք աշխարհով մեկ հայերի հոգիների վրա:

Այսօր Ամենայն Հայոց Կարողիկոսը իր իմաստությամբ ժողովրդին է ներկայանում որպես մտավորական և գիտական զործի: Բավական է նշել, որ վերջին 60 տարիների ընթացքում երա գրչի ուժով ստեղծվել են մոտ երկու հարյուր տարբեր բնույրի գիտական աշխատություններ և հարյուրավոր հայրապետական կոնդակներ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, բարձր գիտական բնույրելով Ամենայն Հայոց Հայրապետի գիտական վաստակը, միանալին նրան բնաւեց ակադեմիայի պատվավոր անդամ: Մեզ բոլորիս բախտ է վիճակվել ակադեմիայի ժողովներում լսել Վեհափառի իմաստալից երոյթները և կանխատեսումները ազգային գիտական գաղացման մեծ հեռանկար-

ների մասին: Այժմ էլ հաստատում կամքով և մեծ ոգեռությամբ նա շարուհակում է հայ ժողովրդին պարզելի իր մտի արգասիթի՝ նորանոր աշխատություններ, որն է հարուստ կենսափորձ ունեցող մարդու փիլիսոփայական մտածումներն են: Հաստատ համոզումով կարող ենք ասել, որ Վեհափառ այսօր հայոց պատմության ձայնն է, որ ամեն տեղ հնչում է, մենք զգում ենք մեր ժողովրդի՝ հազարամյակների խորքը հասնող պատմության արձագանքը հանդիսացող այդ ձայնը որպես անփոխարինելի մի կամուշ, որ հայոց հին դարերը կապում է մեր ժամանակների հետ:

Ազորենք բոլորս, որ Աստված բաշառողջություն պարզելի մեր հարազատ Հայրապետին, որպեսզի դեռ երկար ժամանակ վայելենք նրա ներկայությունը ազգովին, և ամեն մեկս ներշնչվելով նրա հավատելով՝ մեր ուժերն ու կարողությունները ի սպաս դնենք մեր հայրենիքի և հայ ժողովրդի բարգավաճակները:

Այնուհետև Հայաստանի Հանրապետության ԳԱԱ ոլջունի ուղերձը կարդաց ակադեմիկոս Գևորգ Բբուտյանը:

Մեծ հետաքրքրություն առաջարցրեցին նաև գիտության դոկտորներ Պ. Հ. Հակոբյանի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ի գիտահետազոտական վաստակը» և Հ. Մ. Թուժունջյանի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ի գործունեությունը փիլիսոփայության, տրամաբանության և հոգեբանության բնագավառում» գեկուցումները:

Վերոհիշյալ գեկուցումներից հետո ներկաներին իր շնորհակալական խոսքը և հայրական օրհնությունը բաշխեց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՈՍՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Մեծահարգ Տիար նախագահ,

Հարգարժան գիտնական Տիարք, ներկաներ և սիրեցյալ հոգևոր եղայրներ,

Խորազգաց զգացումներով ես շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, Պարոն Նախագահ և Զեր վարչության, որոնք կազմակերպեցին այս հավաքույթը՝ նվիրված իմ համեստ գործունեության վերջին տասնամյակներին: Անկեղծ ասած՝ ես բնակ չեմ սպասում նման հանդիսավորության: Ես ինք ինձ չեմ նկատում, բնականարար, գիտնական և հետևաբար երախտապարտ եմ, որ այդ պատիվը ինձ մատուցվում է այստեղ, այս գիտության տաճարի կամարների տակ, որ Հայաստանի ազգային ակադեմիայի հաստատությունն է:

Անշուշտ պայօթ, այս պահին ես իմ մասին չեմ որ պիտի խոսեմ, ոգում եմ միայն մի պահ ընդգծել իմ անձի՝ հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ կապված: Խնչակու գիտեք, ես սիյուռքահայ եմ, ծնվել ես Ռումինիայում, Բուխարեստ քաղաքում, 1908 թվականին, այստեղ եմ մեծացել, իմ ողջ ուսումը մինչև համալսարան եղել է ուսմինական և բնական կերպով ես հաղորդակցության մեջ եմ գտնվել տևապես ուսմեն մշակույթի հետ, ուսմեն դրականության, գիտության և քաղաքական կյանքի հետ և որոշ չափով մասնակից դրան: Գուցե հայաստանցիներդ լրիվ կերպով չեք հասկանում հոգեկան վիճակը արտասահմանի հայ մտավորականի, որ մասնավանդ հումանիստական ոգով զարգանում է և բնական կերպով իր հոգին շա-

դախում տեղի ժողովրդի հոգևոր արժեքների հետ: Համենայն դեպ, ես այդ հոգեկան իրավիճակում եմ եղել, մի տեսակ տատանվող, և այդ ճամապարհով շարունակել եմ իմ կյանքը՝ ոռոմինական և հայկական: Այս ողբերգական վիճակը շատ երիտասարդներ են ապրում արտասահմանում և շատեր կորչում են, բնականաբար, հեռանալով հայկական կյանքից: Իմ կյանքի պայմաններն այնպես դասավորվեցին, որ ես կապված մնացի հայկական կազմակերպությունների հետ, և հետևաբար այդ տատանման շրջանում իմ մեջ ավելի ծանր կշիռ ստացավ հայկական ուղղությունը, եթե այսպես կարելի է ասել: Եվ իսկապես ես ամբողջպես հայկական գագումներով սոգորվեցի և կերպարանափոխվեցի, կարող եմ ասել՝ վերածնվեցի 1945 թ., երբ առաջին անգամ այցելեցի Հայաստան, Ս. Էջմիածին՝ հանգույցալ կուսողիկոսի ընտրության արիթրով: Եվ հակառակ որ պատերազմը նոր էր վերացել, և երկիրը ծանր վիճակի մեջ էր գտնվում, գրեթե այնպիսի վիճակ էր, ինչպես այսօր և նույնիսկ ավելի վատ, բայց և բոլոր ինձ համար երկրորդական եղան, ինձ համար բավելով, որ Արարատը տեսնեմ, Ս. Էջմիածինը տեսնեմ, տեսնեմ Երևանը և մեր ժողովրդի փայլուն աշբերը:

Ես սիրում էի առանձին ման զալ Երևանում, շուկաները մտնել, փողոցում խոսակցել հայ պարզ մարդկանց հետ: Այսպիսով ես կարող եմ ասել, որ վերածնվեցի, կարող եմ ասել զԱստված փետրելու ճանապարհի վրա ևս գտա Ս. Էջմիածինը, և այդ օրվանից իմ անձը, իմ կյանքը, իմ ողջ հոգեկան աշխարհը միացավ Ս. Էջմիածնի և հայրենիքի հետ, և այդ հոգեկան վիճակով է, որ, կարծում եմ, կարողացա իրագործել իմ կաթողիկոսական գահակալության շրջանին այն, ինչ որ ծանոթ է ձեզ: Ես երախտապարտ և՛ ճակատագրին, որ սխալ ուղղությամբ չառաջնորդվեցի և մնացի հարազատ զավակը իմ սիրեցյալ մար ժողովրդի: Ինչպես բիշ առաջ ասացի, իմ մասին չէ որ պիտի խոսեմ այսօր:

Արդ, ուզում եմ այս առիթն օգտագործել մի քանի խոհեր, մտածումներ արտահայտելու Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին, որ նոր օրերում կոչված է նոր ճանապարհներ բաց անելու դեպի ապագան հիմնված այն մեծ իրագործումների վրա, որոնք տեղի ունեցան վերջին տասնամյակների ընթացքում, հատկապես Վիկոր Համբարձումյանի հախագահության տարիներին: Խսկապես Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան հայ ժողովրդին պատիվ բերող հաստատություն է տասնյակ տարիներից ի վեր: Բազմաթիվ գիտական արժեք ներկայացնող գործեր գնահատանքի արժանացան արտասահմանի ծանոթ ակադեմիաների կողմից: Ակադեմիան պարզապես գիտությունների հավաքածու չէ, մի տեսակ արխիվային հիմնարկություն, որտեղ գալիս-հավաքվում են գիտնականների բոլոր գործերը: Ես ալեապես եմ ըմբռնում, և ճիշտը այդ է, որ ակադեմիան կենդանի հաստատություն է համադրոշ, սինթեզող բոլոր գիտությունների նվաճումները: Եվ կարո՞իմ, թե այս ուղղությամբ պետք է զարգանա հետապու Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան դառնա իսկապես գիտությունների տաճար, ազգային տաճար և կարողանա իր նպաստը բերել համաշխարհային գիտության գանձարանին: Սա պետք է լինի, իմ կարծիքով, հայ գիտնականների ինեալը: Մեր ժողովուրդը իր անցյալը, իր անցյալի արժեքներով ապացուցը տված է, որ ի վիճակի է առաջադիմ ազգերի հետ քաղելու, նոյնիսկ երբ դժվարին բաղաքական պայմանների մեջ է գտնվել: Հետևաբար այս լավատեսությամբ ես մաղթում եմ, որ մեր ակադեմիան բայց առ քայլ, աստիճան առ աստիճան բարձրանա այդ

բարձունքին: Ավելին, մեր օրերին է, կարծում եմ, թիշ-շատ խոսվում է համաշխարհային կամ միջազգային մի ակադեմիայի մասին: Այդ գաղափարը իբրև որոշում հրապարակվել է Բրիտանական Ակադեմիայի կողմից, Մոյալ Սոսայթի անունով, 1990 թվականին, սակայն մնացել է չիրագործված: Այս գաղափարը կենդանի է մնացել մինչև մեր օրերը, և մարդկությունը սպասում է այն օրվան, եթե իրավես հնարավոր կատանա կազմակերպումը, կյանքի կոչումը միջազգային մի ակադեմիայի, որին կմասնակցեն բոլոր ազգությունների գիտությունների ակադեմիաների գիտնականները իրենց նվաճումներով՝ իրենց նպաստը բերելու ընդհանուր առաջադիմության: Սա մի իդեալ է, որ ոչ միայն զուտ գիտական արժեք է ներկայացնում, այց նաև՝ համամարդկային և նոյնիսկ քաղաքական, որովհետև գիտությունը խաղաղադրար գործոն է, գիտությունը մարդասիրական գործոն է, գիտությունը մարդկության բարօրությանը նվիրված աշխատանք է, և հետևաբար այդ իդեալը անհրաժեշտ է, որ իսկապես իրականանա:


Այդ մտածումները ես ունենում եմ մանավանդ այս օրերին, աշխարհի այս տագնապալի իրավիճակում: Մեր օրերին, ավելի քան քառասուն շրջաններում երկրագնդի վրա, պատերազմական գործողություններ են տեղի ունենում, երբ մարդիկ իրար են կոտորում: Այսպիսի վտանգի առաջ գրտնվող մարդկությունը բնականաբար պետք է փնտրի խաղաղության, փոխադր հասկացողության, համեմաշխության ճանապարհը, և գիտությունը, հետևաբար նաև ակադեմիաները, իրենց աշխատանքի կարևոր բաժինը պետք է բերեն՝ իրականացնելու համար այդ համամարդկային խդեալը: Եզ մտրով տակավին առաջ եմ գնում և պատերազմում, որ, չգիտեմ երբ, զուցե տասնյակ տարիներ հետո, իրականանա Բրիտանական Ակադեմիայի երազանքը՝ ստեղծելու համաշխարհային մի Ակադեմիա: Իմ մաղթանքն է, որ մեր հայրենիքի գիտությունների ազգային ակադեմիան այնուղի միշտ ներկա լինի իր գիտնականներով, իր գիտական նվաճումներով:

Այս մաղթանքով էլ ուզում եմ վերջացնել իմ խոսքը՝ կրկին շնորհակալություն հայտնելով ձեզ և մաղթելով, որ Աստված պահի-պահպանի ամբողջ, անվտանգ և միշտ առաջադիմության մեջ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան:

Հարգարձան Տիարք, իմ օրինությունը ձեզ ամենքիդ: Ամեն:

Վեհափառ Հայրապետի օրինության խոսքից հետո համապատասխանաբար իրենց զեկուցումներով հանդես նեկան գիտությունների թեկնածու Ս. Ս. Ծովիլյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի գրական-հրապարակախոսական գործունեության մասին», ակադեմիկոս Գ. Ս. Խանջյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի օրոք Մայր Մթոռում ստեղծված արքեստի նոր գործերի մասին», գիտությունների դպրոցը Վ. Մ. Հարությունյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի և հայ ժամանակակից ճարտարապետների համագործակցությունը» և արվեստագիտության թեկնածու Մանկա Ղազարյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի թանգարանային գործունեությունը»:

Բոլոր զեկուցութերը մեկ առ մեկ շեշտեցին և ընդգծեցին Վեհափառ Հայրապետի շանքերն ու նվիրումը Հայ ներկեցու և ազգային արժեքների անաղարտ պահպանության համար:



ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԳԻՏԱՀԵՏՍԶՈՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

«...զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք»
(Մատթեոս, Ի, 16):

Ընտրյալները միշտ ել սակավաթիվ են: Ամբողջ կյանքում ապրում, խորհում, տառապում են ազգի ու հայրենիքի համար՝ մնալով հախանձնի անանձնական ու անթերի բարոյական: Երկնային շնորհները, որոնք ի հայր են գալիս նրանց մեջ վաղ տարիներից, չեն մղում երբեք փառքի ու երանության կամ գարթակղում երկրային վայելքներով: Ընդհանականը, մշտապես տրամադրում են տքնության ու արարման, ինքնամաքրման ու կատարելության՝ աշխարհին ու մարդկանց պարզ հայացքով հայելու, բարություն ու արդարություն ցանելու համար:

Նրանք հառաջադիմության ու վերաշինության գինվորյալներն են՝ մասուկների սիրելի ուսուցիչները դպրոցներում, և օրինակելի հովիվներն ու բաղձակի քարոզիչները եկեղեցիներում, հրապարակային թեժ պայքարների բովում թրծված համազգային դաստիարակներ և համբարային մորին ուղղություն տվողներ, մի խոսքով՝ իսկական առայլներ... Խճճանվիրումը ցոլանում է նրանց առօրյա գործունեության յուրաքանչյուր դրսերումից, նրաց կատարած յուրաքանչյուր քաղից, նրանց արտասանած յուրաքանչյուր բաղից...

Վեհափառ Հայրապետ Վագգեն Առաջինն այդ ընտրյալներից է:

Նախ նա հայտնի դարձավ որպես հրապարակագիր ու գիտնական և հետո նոր՝ հոգևորական:

Երկու շրջանի կարելի է բաժանել Վեհի ցարդ ծավալած հանրային և գիտահետազոտական գործունեությունը: Մեկը սուաշին հոդվածները լույս

տեսնելու տարիներից, այսինքն՝ 1933-ից մինչև 1950-ական թթ. կեսերը, երբ նա տակավին ստեղծագործում էր սիյուռում, և մյուս՝ 1955-ից առ այսօր, երբ իր անսպառ եռանդով ու փորձառությամբ ընթացք է տալիս Հայաստանյաց Սուբեկական Եկեղեցու գործերին, իբրև նրա 130-րդ Հայութեալու:

Սուածին շրջանում մեր Ընտրյալը, առավելապես դեռ աշխարհական և իր մկրտության անոն-ազգանունով՝ Լուս-Կարապետ Պալճյան, նախ շարունակում էր ուսումնառությունը Բուքրեշի համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում, որ տևում է չորս տարի, 1932—1936 թթ., ոչադրությունն առավելապես կենտրոնացնելով հոգերանության, մանկավարժության և հասարակական գիտությունների վրա, զուգահեռաբար, մասնավոր դասերի միջոցով, հաղորդակից դառնալով նաև դասական հայրենի գաղտնիքներին անմասն չմնալու համար հայց հին ու միջնադարյան մատենագրության գանձերից: Վերջին շրջանում, մեկ ուսումնական տարի էլ, 1936-ի մարտից, հաճախում է համալսարանին կից Տիրու Մայորեսկովի անվան փորձառական մանկավարժական ինստիտուտը և ավարտում այն ևս՝ առավել խորանակով տվյալ բնագավառում:

Սլորինակ համակղղմանի նախապատրաստությունից հետո միայն Լ. Կ. Պալճյանը մտնում է կյանք՝ որպես հանրային կրթության և հրապարակային գործունեության անխոնց աշխատավոր, որպես իմաստաեր ու հետազոտող, որի գիտական հետաքրքրությունները ծավալվելով՝ ավարտուն տեսք էին ստանում ուսանողական միության հավաքներին կարդալիք դասախոսությունները և իր իսկ խմբագրած «Հերկ» երիտասարդական համենի հերթական համարների հյույսերը պատրաստելով ընթացքում:

Բնելուն էր առաջին տարիների հունձը: Կարճ ժամանակամիջոցում իրար են հաջորդում թեպետ ո՞չ ստվար, սակայն բովանդակությամբ հարուստ և շարադրանքով միանգամայն հնքնություն ու ինքնաւիպ հրա գըռքերը՝ ըստ ամենայնի նախորդը չունեցող մեր իրականության մեջ: 1943-ից սակայն, երբ փոխվում է Լ. Կ. Պալճյանի կյանքի ողին ու գործունեության դաշտը, մինչ նա դառնում է կուսակրոն արեղա և երկամյա նոր ուսումնառությամբ տեղի համալսարանում լրացնում գիտելիքները աստվածաբանությունից, ապա՝ Աշանակվում նախ ոսումնամասա, իսկ հետո էլ բոլղարահայ հոգերու թեմների առաջնորդ, գրեթե արդեն ժամանակ չի ունենում սկսել ու ավարտել գիտահետազոտական նոր աշխատություններ: Հայրենի գիտությունը դրանով կորցրեց իր ամենաինքնաւիպ և խորապես աշխատավորներից մեկին, իսկ Հայաստանյաց Եկեղեցին մեծապես շահեց, որվենուն վերջինիս պատմության մեջ շատ շեն իսկական գիտնական հայրապետները և լայնախու ու հառաջիմաց մտածողները:

Հետևաբար, մեր բննության առարկան գիտափորապես աշխարհական Պալճյանի 1930-ական թթ. վերջերին և 40-ականների սկզբներին հայ սիյուռում, բացառապես Բուհարեստում գրած ու հրատարակած գիտական աշխատություններն են, որոնց բոլորին ոժ ու կենացնություն է տալիս մի վեճ, տիրական ողի, որոնք բոլորն ունեն ոժի, հայեցության և նախանակառողդվածության միանություն ու բոլորն էլ գրված են զուսպ ու խիտ խոսքով, մեթելանքներից միանգամայն զերծ, անթերի արևմտահայերնեով:

Գրքերից առաջինը թվագրված է «հոկտ. 1938», և առնչվում է իմաստափական-հասարակագիտական այնպիսի հարցերի, որոնք մարդկային միտքը հոգում էին արդեն քանի դար, քանի աշխատացի լուսավորիչների ժա-

մանակներից սկսած՝ շարժանանալով գոհացուցիչ լուսաբանման: «Անձնավորության գաղափարի մասին» խորագիրը և «մտածումներ» ենթավերնագիրն ունի այդ մետապոտոթյունը, որ սկզբնապես լոյս է տեսել Բայիսարեստի «Գաղութահայ տարեգրքում», 1938-ին, իսկ նույն տարի արտատպվել նաև առանձին գրքով՝ արդեն վաղուց դառնալով բաղդապի ու անգնահատելի մատյան: Շիշու է, ավելի վաղ, 1935-ի երկրորդ կեսին և հաջորդ տարվա սկզբներին Հ. Կ. Պալճանը պատրաստել էր «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» խորագրով մի դիսերտացիոն աշխատություն, այն էլ ո՞չ հայերեն, այլ ռուսիներեն, և ներկայացնելով Բովարեստի համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի հանձնաժողովին, ինչպես նաև բարձր միջերու հանձնելով պահանջվող քննությունները՝ լիցենցիատի (մեր ըմբռնումով՝ մագիստրոսի) տիտղոսով ավարտել այն («Diploma de Licenta», No. 4798, տրված 17 հունիսի 1936 թ.): Բայց այդ աշխատությունը հրատարակված չէ, ու բովանդակությունն էլ մեզ ծանոթ չէ, հետևաբար քննական չենք լինի, եթե մեր քննությունն սկսենք արդեն հիշված «Անձնավորության գաղափարի մասին» իմաստափրական մուսումներից, որոնցով մեղինակը առաջին անգամ ներկայացված ախյուրի ու հայրենիքի գրական շրջաններին*:

2

Լուսավորիչները թեպետև առաջիններից մեկը հոչակել են անհատի ազատության իրավունքը՝ բանաձևած ժամանակական ժամանակու աշխատությամ՝ «Հասարակական դաշինքի» մեջ առաջին տողում. «Մարդ ծննդում է ազատ», սակայն, ըստ երկույթին, մարդ-անհատը նրանց համար տակավին անըմբռնելի արարած էր: Ինչպես նկատում է մեր մեղինակն էլ՝ իրապես այդ մարդուն նրանք չեն ել տեսնում, այն նրանց համար գոյություն իսկ չտներ, «ան վերացական մարդն էր», մարդու ընդհանուր գաղափարը, «որ տրամարանությամբ կառուցեր էին քանի մը նրազապաշտ մը-տածողներ», մինչդեռ միշտ հայեցակետը մարդուն իրու անձնավորություն դիմելն ու քննելով պիտի լիներ, մանավանդ, որ մարդն երկար դարերի ծանրը ու դժվարին ճանապարհ անցնելուց հետո միայն շանում էր հասնել ինքնանաշման, իր «ես»-ի զգացման գիտակցմանը՝ տակավ առ տակավ ձերքազամփելով հափաքական ես-ի զգացմից և զգտելով գտնելու իր տեղը հանրության մեջ: Մարդն անվերջ պարապում էր ինքնաքննությամբ, որոնում ինքն իրեն, իր անձնավորությունը, որ բնության իրականություններից մինչ է և նպատակներից բարձրագույնը՝ «գոյության բարձրագույն գագաթը» (36): Որքան էլ անհավատապի, այնուհետեր անվիճելի է, որ լուսավորիչներից շատ ու շատ հետո միայն, իմաստաներներն զգում են, որ անհատը ո՞չ միայն չի հասել ու չի կարողանում հասնել ազատության, այն, ընդհակառակը, մենց ազատություն որոնելու ճանապարհին այլասերվում է աստիճանաբար, որի պատճառը, ամենայն հավանականությամբ, մարդ-

* Հ. Կ. Պալճանի ալս գրի վաճառքի մասին հայտարարություն է տպագրվել Փարիզում թիվ 1, 1939, էջ 64, պուն 1):

անհատի՝ իր բուն միջավայրից, իր օրգանական հոգեկան աշխարհից, վերջապես՝ այն հավաքականությունից, որին անմիջականորեն պատկանում էր ինքը, աննկատելիորեն հեռանալու, արմատախիլ լինելու մեջ է:

Հետևաբար, անհատի ազատությունը չէ, որ պիտի լինի կյանքն ու աշխարհը վերափոխողների նպատակը, որովհետև անհատն ինքն իր մեջ և ինքն իր համար, իր ներքին ազատության մեջ թողնված՝ դատապարտված է այլասերման, այլ անձնավորության ազատությունը՝ հավաքականության սահմանների մեջ, որովհետև անձնավորությունը մարդու հոգին է, որա ես-ի կատարելագործված վիճակը: Այս իմաստով է Վեհափառ մեկնաբանել է Գյորեի խորիմաստ ասույթը.

«Nur das Gesetz kann uns Freiheit geben»

(«Միայն օրենքը կրնա մեզի ազատություն տալ»)**

(էջ 38)

Արդեն ուժունեամյա հասակում, շարունակելով խորհրդածել մարդու դերի ո կոչման շուրջ, Վեհը նկատում է: «Մարդկային բնությունը տատանանան հսկայական լայնություն ունի: Մարդը կարող է մեծ վերելք և խոր անկում ունենալ: Գեղարվեստական մեծ ատելագործություններում այդ լավ է երևում: Մարդը հսկայական է, փոփոխական: Հոգեւոր ուժ է պետք՝ հավաքարկշոելու մարդու բնությունը: Եվ իմ կարծիքով՝ հավատն ունի այդ ուժը: Ես կարծում եմ, որ Քրիստոսի ուսմունքը կարող է օգնել ժամանակակից մարդուն ինքնակարգապահություն դաստիարակելու հարցում: Պետք չէ ազատությունը հսկանալ որպես ձերքազատումն ամեն կրդի սահմանափակումներից ո նորմերից: Պետքու առարյալը այսպիսի միտք ունի. ապրեցե՛ք որպես ազատներ և ազատությունը իբրև չարիքի պատրիսկ մի բռնե՛ք («Երբեմ զազաւու լինել, և մի՛ իբրև պատրիոտ չարութեան ունել զազաւութիւնն») (Պետրոս, Ա. Կայսուղիկէ, Բ, 16)***:

Մարդ անհատի կյանքն ու աշխարհն են կազմում իր ապրած բնակավայրը, ցեղը, որին պատկանում է, ոգին, պատմությունը և մշակույթը, որոնցով սևկում է նա: Փոխվում են այս բոլորը, փոխվում է նաև մարդը, ու հայ մարդը, և բռնում օտարացման ճանապարհը. «Անոնք,—նկատում է մեր հեղինակը...—նոր միջավայրի մը ու մթնոլորտի մը մեջ փոխանակ իրենց հոգին մեջ պամելու հայրենի, ցեղային մթնոլորտը, որ բնական ու հարազատ է իրենց, և ապրելու անոնց մեջ, կուգեն օտար կյանքը և օտար հոգին ընդորինակելու ո փոխադրվիլ այդ «նոր» իրականությանց» մեջ (էջ 39—40), որի հետևանքով օտարացումն ու այլասերումն անխուսափելի է: Հետևաբար «Անհատի ազատագրում, ես-ի ազատագրում ըսելով՝ պետք է հասկնալ գիտակցականացումը և բանականացումը այն հարաբերությանց, որ կան անհատի ու ընկերության միջև և բնալ երեք խզումը այդ կենսաբանական, հոգեբանական և ընկերաբարության կապերուն» (էջ 41): Մեծ նշանակություն է տալիս հեղինակը հստկապես անհատի ինքնանահմանը, եթե միայն այն ընթանում է նիշտ ճանապարհով և չի վերանում ինք-

** Տակապին անսիսա գրառումների մեջ (1976 թ.) սույն եղանակումն ստացել է ավելի հնկուն կերպարներ. «Մարդ լինել՝ հշամակում է ազատ լինել: Ազատ լինել՝ հշամակում է հպատակնել բարյալան օրենքներին ազատ կամրդ» (ինքնագիրը՝ «Մուծումների») աշխատանքային օրինակի վերջուն, մեր հավաքած հրութերի մեջ—Պ. Հ.):

*** Տե՛ս Վազգեն Ա., Աշխարհի բարօրությունը մարդկանց միասնությունն է: — ԱՊԽ-ի իրատ., Մոսկվա, 1988, էջ 15 (սրբագրված է ըստ ուստերեն տարրերակի—Պ. Հ.):

Անկերծման, այսինքն՝ անհատին չի մղում պլաստերման ու կործանման: Այս դեպքում էլ մեր խորագետ հետազոտողը հշմարում է փրկության ուղիներ, գլխավորապես ճիշտ դաստիարակությունը և գրական անձնահ կերպարների օրինակը, ինչպիսիք են՝ Եղիպատ արքան, Կարամազով եղբայրները և Ֆատատը, որոնք անհատին տրամադրում են՝ ինքնանաչման, ինքնարձնադատության և ինքնակերտության: Նրանցից առաջինն ի վերջո են՝ տարկվում է ճակատագրին, երկրորդը համառորեն որոնում է փրկություն, իսկ վերջինը իրականացնում է իր երազակը. «Ֆատատը մարդն է, որ Կը պայքարի ճակատագրին ու ինքզինքին դեմ: Ֆատատը մարդկացին գիտակցության և կամքի ուժերու միջամտության հաղթանակն է: Ան ինքզինքն դուրս կելլ ու հասարակաց բարիքին մեջ, ընկերության երշանկության մեջ կը գտնեմ փրկություն» (43):

Սշխատության եզրում քննության են առնվում հավաքականությունն իմաստափական եզրույթների ներքին կամերն ու առնչությունները և խոսուն օրինակների վկայակոչմանը ցուց տրվում, որ իրականության մեջ խիստ քարդ են այդ փոխարարելությունները. ո՞չ հավաքականությանը սովորական ձևով տրոհելով կարող ենք ստանալ անհատականություններ, ո՞չ էլ անհատների մեխանիկական գումարից կարեի է ստեղծել հանրություն, որովհետև, ինչպես գրում է հետազոտողը, տրաքանչյուր առանձին դեպքում հանրությունն իր ներթին և անհատականությունն իր, ունեն ընդգծված ու տրահատուկ բռվանդակությունն. Մի դեպքում տվյալ ազգության առանձին անհատներ, և մյուս դեպքում տվյալ ժողովրդի ազգային բնավորություններ, որ կարող են շշափելի տարբերություններ ունենալ: «Անհատական հոգիները հավաքվելով, իրար թափանցելով, ձուլվելով՝ ծնունդ կու տաճ գոյության մը, հոգեկան եթե կուգեք, որ, սակայն, նոր տեսակի անհատականությունն մը կը ներկայացնե: Ուրեմն այս հավաքական անհատականության մեջ և ո՞չ թե անոր բաղկացուցիչ միավորներուն մեջ պետք է փառունք անմիջական ու պայմանավորող պատճառները այն երևույթներուն, որ հառաջ կու գան այդ հավաքականության մեջ: Հավաքականությունը կը մասած բոլորովին այլ կերպ, քան իր անդամները առանձին-առանձին առնված» (Եջ 48): Այսպիսի անհատներն են, որ իրավունք են նվաճում «անձնավորություն» կոչվելու:

Անձնավորություն կարող են դառնալ ո՞չ թե բացառիկ օժնված անհատները, այլ այնպիսի մարդիկ, որոնք ունեն նկարագիր՝ կամքի ուժ, դատողության հստակություն, զգացումի նորություն և ոգերույթը կրակ՝ նենց դրանցով էլ մեծապես ծառայելով իրենց հայրենիքին ու հայրենի մշակութին. Այս է հետինակի վերջնական եզրակացությունը՝ քարմ ու ուշագրավ:

Սրբեն առաջին տուննասիրության մեջ երևում էին բոլոր հախանըշանները նրազգաց ու սրատես գեղագետ-բանակերի, որի հետաքրքրասիրություններն ավելի ու ավելի ծավալվելով՝ վերածում էին գրական-պատմական քննության «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» խորագրով «վերլուծական փորձի» մեջ, հրապարակ հանված այս անգամ, մենց սկզբից, առանձին գրքով, 1940-ին, դարձալ Բորբեչում:

Հեղինակին այսօրինակ «վերլուծական փորձի» պարտադրողը կյանքն ու իրադրություններն էին, որոնց մեջ նա ապրում ու հասակ էր առնում: Գաղտնիք չէ, որ Մեծ եղենն ինչողությունները հայ մարդու սրտի և հայրց պատմության տարեգրության ամենացալուն տեղերն են: Նրանք փորձիկն են հայի, առավելապես աղետից հրաշքով վերապրած տարագիր

հայի հոգում ու մտքում նրա գիտակցական կյանքի ողջ ընթացքում, անկախ նրանից՝ հետևանքը կամ արդյունքն ինչ է դառնալու սերունդներին փոխանցվող սահմոկեցուցիչ գրուց, քնարական գողտրիկ պատո՞ւմ, եղերե՞րդ, թե՝ ճակատագրական անցքերի ու դասերի հրապարակային վերագնահատման փորձ:

Հիշյալ բոլոր առումներով էլ լ. Կ. Պալճյանն անձաւուի իրեն արագածում էր իր գալիք գիտահետազոտական մտահղացման արարման ժամը:

Այս էլ ասենք, որ հայրենիքի կորադրան անամոր վիշտը թեպեսու շարունակում էր ծխալ հայի հոգում, բայց և, միաժամանակ, առավել սրահներին պարուադրում էր որոնել երեկվա անցքերի բուն պատճառները՝ ձըրանց դասերի անձաւական քննության և իմաստավորման ճանապարհով, այսուհետև նոյնպես, թեկուզ հյուրընկալ, բայց դարձալ օտար հողմերի չերանում դիմակացելու ո հայ մնալու համար:

Ֆրանց Վերֆելի վեպն այդ առումով բուժիչ սպեղանի էր հիշեցնում: Օտարի աշքը ավելի անսաւը էր նշանառում մեր առաքինություններն ու արաւները, մեր սիրաներներն ու ճակատագրական սիսպենքը, եթե ինչ-ինչ հանգամանքների թեկադրանքով գործել էինք ու թանկ հատուցել...

Հիշենք և այս, որ Եղենից հետո, մի կարճ ժամանակ, ճակատագրիը, կարծես, բարեհաճ եղավ հայոց հանդեպ. անմեղների ծով արյունն իզուր շրափվեց. ստեղծվեց Հայատանի Հանրապետությունը, հայոց մեր ժամանակների առաջին անձանի պետականությունը, որն երկուսուկես տարի հագիւ գոյատեղուց հետո, ի վերջո, հարկադրված էր տեղը զիշել Խորհրդային կարգերին: Սրանք էլ հարկադրեցին տարածքային նոր զիշումներ անել թուրքերին, իսկ երկրով մնկ ծավալից կարմիր տեռորը: Ո՞վ էր արդարը և ո՞վ՝ մեղավորը, ինչպիսի՞ն կիներ մի բուռ հայության վաղվա օրը ոռուս տերության տակ... Ահա՝ հարցերի մյուս խումբը...

Վերֆելի վեպը հնարավորություն էր տալիս խորանալու այս հարցերի մեջ ևս, իսկ եզրահանգումներ անելիս, որքան կարելի է, խոսափել հուզախով դրդապատճառների պարտադրանքներից:

1936-ի սկզբներին ապագա աշխատությունը մասամբ արդեն գրված էր, և Բուրքեցի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու գավթում գումարված՝ Հայոց ուսանողների միության հերթական հիսուսում լ. Կ. Պալճյանը հանդես եկավ «Ֆրանց Վերֆելը և նրա «Մուսա Լերան քառասուն օրերը» վեպը» գեկուցումով, չշուապելով, սակայն, պատրաստ մասերը տապարության հանձնել: Ռուսումները նորից են շարունակվում, որոնց արդյունքը 1938-ի գարնանը լույս տեսած հոդվածներն էին՝ մերսորեն կապված Վերֆելի վեպի ու հարակից հարցերի հետ, որ ապագա գրի առանցքն էին լինելու:

Մեծ եղենից տարելիցից առթիվ մտորումները բաժանելով «Հերկ» ամսագրի ընթերցողների հետ (1938, ապրիլ), լ. Կ. Պալճյանը ասում էր. «Այսօր մեր աշքերուն առջև կուրպագծվի «Մուսա Լեոն»... Մենք հոն ենք: Այո՛, հոն ենք բոլորս: Մեր կյանքը՝ քառասուն օրերն են... Ինոր, ի՞նչ տարբերություն... Մենք ալ ձգած մեր բնակլարը, հավարված հոն լերան մը վրա, որ պես է կազմակերպենք ինքնապատպանությունը: Լերան վրա ենք: Կը պաքարինին»: Այսուհետև պարմշալու վեպի հրական ու բացասական կերպարներին՝ ուսապիհներին, ԱԱԱՅՆ լուներին, դավողներին, վանակուտներին, նաև կովուներին, բութվածներին, վարչապահներին ամենատիրական կերպարներ Տեր Հայկացուներ, միտքն եզրափակում է մի

խորիմաստ կոչով՝ կապված Եկեղեցու վճռական դերի հետ սիյուռքահայության կյանքի կազմակերպման մեջ: «Տեր Հայկազոնի ձայնը երկրորդ Մովսեսի մը նման կը գոռա՝ միաբանություն, կարգապահություն, կազմակերպություն... Օ՛, ո՞ւր ես դուն, Տեր Հայկազոն... Զայնդ կը լսենք» («Հերկ», Ա. տարի, թիվ 11, էջ 1):

Պակաս ուշագրավ չէ Լ. Կ. Պալճյանի երկրորդ հոդվածը՝ լույս տեսած մեկ ամիս անց, դարձյալ նոյն հանդեսում (1938, մայիս), որը պթափ ու իրատես հայեցությամբ նժարվում էն Հայաստանի Հանրապետության վերելքի ու անման պատճառները՝ ներբող չկարդալով կամ ցեխ շշպրտելով ո՞չ նրա ստեղծողների ու առաջին վարչին ների, ո՞չ էլ նոյնմերեյան «ժառանգորդների» հասցեին, որպիսի առաջինություն ժամանակին չունեցանք մենք՝ այս գիտական կանոնի աստիճանավոր ու տիտղոսավոր աշխատավորներս, մինչ հայ ժողովրդի և գրականության ակադեմիական պատմությունների մեջ գնահատում էինք 1918—20 թթ. և հնտագու տասնամյակների անցքերը:

«Այսօր վեր կենալ ու հայինոյել թուրքին, որովհետև հարձակվեցավ Հայաստանի վրա, հայինյել ոուսին, որ չպաշտպանեց Հայաստանի անկայս հանրապետությունը, հայինյել դաշնակիցներուն, որովհետև օգնության շիստ հայերուն, անհծել մեր հակատագիրը կամ հանցավորներ ու պատախանատուններ փետող հայ դեկավարներու մեջ, առնվազն միամիտի գործ է: Դեռ չէ կորսնցնենք իրատեսության զգացումը»,—զգուշացնում էր ժամանակակիցներին հրապարականուս Կ. Պալճյանը և համբերությամբ բացատրում, թե ինչու, այնուամենայնիվ, կործանվեց Հայաստանը.

«Թուրքը հարձակվեցավ, որովհետև մեր դարավոր թշնամին էր և կուգեր վերապրոյ հայության դիմակներու վրայով իր ճանփան բանալ դեպի Աստրակեցան ու թուրանական ժողովուրդները: Խ. Ռուսաստանը չօգնեց Հայ Հանրապետության, որովհետև ստիպված էր թուրքին բարեկամությունը պահել, ան կրցավ մնացած հայության միայն ֆիզիկական գոյությունը փրկել՝ գրավելով ու զոհելով հայ պետության անկախությունը: Անգիսա, Ֆրանսա չմիջամտեցին ու լոեցին, որովհետև շահ ունեին թուրքիան սիրաշահելու տևանական և քաղաքական նկատառությներով»:

Այստեղից մի հետևություն կարելի է անել, և այդ մասին իր կարծիքը չի զլանում հայունել հետազոտողը. «Այս պայմաններուն մեջ միայն ոիրս ուժը կրնար փրկել հայ պետությունը: Խոկ Հայաստանը այդ ուժը չուներ» («Հերկ», Ա. տարի, թիվ 12, էջ 2): Վաղ թե ուշ ժողովուրդը կվերագտնի այդ ուժը, խոկ մինչ այդ պետք է զինվի հոգեպես՝ «պատմության ոգիով ու խորհուրդով» (Ա. տ., էջ 3) և սպասել իր ժամին, իր պահին, որոնք «ազգեր կը ստեղծեն»: Արդյոք նոյն ուժի, նոյն պահի թելադրանքով չէ, որ պիտի լուծի այսօր Արցախյան հարցը:

Լ. Կ. Պալճյանի աշխատության մեջ Յ. Վերֆելի վեան արժեքավորված է նախ և առաջ իրեն գեղարվեստի արտահայտություն, որը ոչինչ ընդհանուր չունի սովորական բարոյախտական ու մարդասիրական շարադրությունների մեջ: Նրա հեղինակը հասու է արվեստի «համիլտենական կենդանության» գաղտնիքներին և կարողանում է իր հանճարով անմահացնել հայ ժողովրդի ողբերգության մեկ պահը, ընկալելով այս վերջինը որպես «մարդկային բարձր արժեք ներկայացնող համաշխարհային երևույթ»: Բայց ներկայացնե թուրքը, հնչքան հայրը: Ավելին, այդ առումով այն մերժենում

է շեքսպիրյան ուլքերգություններին, որը «Օթելլոն Օթելլո չէ և չի կրնար ըլլա առանց Յակովի»:

Այս ոգով բննելով վեպը՝ Լ. Կ. Պալմանը նկատում է այնուհետև, որ «Մուսա լերան քառասուն օրերի» մեջ «Հայր հայ է, որովհետև նակատագիրը անոր դեմ հաներ է թուրքը՝ մեկը ընելով նահատակ <և> մյուսը նահատակող, և սակայն, երկուքն ալ հավասարապես խաղալիքներ են իրենց նակատագրին ձեռքը: Երկուքն ալ հավասարապես մարդեր են, որոնք իրենց վիճակված ձևով կը տառապին» («Մուսա լերան հայերը», վերանայված հրատ., էջ 7):

Եզրափակիչ խոսքերը վերստին Շեքսպիրի աշխարհի կրակներից են առնված, որոնք ծավալվելով՝ վերածվում են վիթխարի խարույկի ու իրենց մեջ են առնում ողջ Հայաստան աշխարհը.

«Վեպին աշխարհի դժոխք մըն է, որը մարդիկ կը տանչվին: Հայր կը փրկվի, սակայն, մեռնելով, իսկ թուրքը մեռնելի ալ չի կրնար:

Վեպի մեջ հայն ու թուրքը մարդկային հոգիներու երկու բներներ են: Հեղինակը կրցած է հասնիլ այս բներներուն, թափանցած է եռթյան ու որպած անոնց հոգիները իրենց խոր խսկությամբ» (Ա. տ., 7—8):

Այսպես գրելու համար ոչ միայն պետք էր ունենալ գեղագիտական բարձր ճաշակ, գրականագիտական բազմակողմանի ու հարուստ գիտնիքներ, արվեստի խնդիրները ճիշտ ըմբռնելու և մեկնելու բնասոր կարողություն, այլև բաղարացիական արհություն և համարձակություն, որովհետև մեր կյանքի ու պատմության այս ցավուու հիշողություններն, այն էլ ՅՈՒՆԻՏԱՐ թթ. վերչերին, ամենազգաստ հիշատակողին անգամ կարող էին շեղել բանականության շավդից:

Կարևոր մյուս խնդիրը, կամ խնդիրներից մասնավորապես մեկը, որ, հեղինակի կարծիքով, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, գրի խավոր հերոսի ընտրության հարցն է: Խնչակն երևում է, մի ժամանակ Լ. Կ. Պալմանն ենթադրել է, թե այդ կերպարը Տեր Հայկազուն է: Բայց բուն վեպի հետագա ըննության ընթացքում նա հիմնովին (և իրավացիորեն) փոխում է տեսակետը և կանգ է առնում Գարրիել Բագրատյանի վրա (էջ 18), ուշադրություն հրավիրելով միաժամանակ, որ Վերֆելը Մուսա լեռան հայության ինքնապաշտպանությունը կազմակերպող հերոսին որոնել է ո՞չ թե Մայր երկրում, այլ գաղթահայության մեջ, ուստի էլ անելով մի այսպիսի շեղում.

«Արդյոք պիտի կարենա՞նք ըսել, թե Ֆրանց Վերֆելն ալ իրականությունը կը կանխէ իր վեպին մեջ՝ ստեղծելով այն գաղութահայերը, որոնք իրապես պիտի ծին մեր գաղութներուն մեջ և պիտի ծաղկին ու պատու տան հայրենի հողին վրա: Պիտի ծին՝ արդյոք իրական Գարրիել Բագրատյաններ, Ավագյաններ ու Ստեփաններ, որոնք անոնց ձևով կամ այլ ձևերով կարենան ստեղծել իրենց նախահայրերու աշխարհին մեջ կյանքի և արժեքներու նոր կոթողներ՝ ի փառս հայ հոգիին և պատմության» (էջ 51—52):

Այս բաղձանքի մեջ անբնական ու անիրականանայի ոչինչ չկա, ատելի ճիշտ՝ Վեհափառ Հայրապետը, դեռ աշխարհական ուստիշ, կանխատեսում էր հայոց պետականության և Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու գալիքը, երբ վերջիններիս դեկը ախուրքահայերի ձեռքին էր լինելու, ուստի ուսուցչի ու դաստիարակի իր կոչումից ելնելով՝ գգուշացնում ու զգաստացնում էր սիյուռի հոծ հայության՝ ընթանալ առողջ բանականության ճա-

նապարհով, առանց պարփակվելու սեփական պատյանի մեջ կամ կամովին մեկուսանալու, որոնք վտանգավոր են նոյնքան, ինչքան և օտարացման ընդունած վագելու կուր մղումը.

«Ծրապատեն բացարձակ մեկուսացումը, կյանքի արտաքին աղբյուր՝ ներեն կամովին զրկվիլը անխոսափելիորեն կը տանին դեպի աշխատերում», հետևաբար առողջ ճամփան ո՞չ թե մեկուսացման մեջ է, այլ «եվրոպական մշակույթին, իսկական մշակույթին հաղորդակցվելու մեջ»: «Ծշմարիտ մշակույթը,—շարտնակում է Լ. Կ. Պալճյանը,—չօտարացներ, այլ, ընդհակառակը, կը զորացնե քու մշակույթը: Ան կը մտուցնե մեզ մեր ազգային, սեփական, մնայուն արժեքներուն: Եթե հայր իր ազգային արժեքներով զինված՝ ծննդրանա Արևմուտքի մշկույթի հրաշալիքներուն ու գնահատել գիտնա զանոնք, չի կրնար չսիրել ու չհպարտանալ հայ մշակույթի հրաշալիքներով» (Էջ 54):

Վերֆելի վեպն աշխարհ գալով Արևմուտքում՝ ըստ ամենայնի փոյտորկեց եվրոպական և ամերիկյան իրականությունները և սիլուքահայությանը, բայց փակի տակ ու, գրեթե, անձանոթ մնաց բուն Հայաստանում. այսուղի ընդունված չեր միշել ու խոսել Մեծ եղենի տարիների դեպքերի ու դեմքերի, այդ կյանքն արտացոլող գրական ստեղծագործությունների մասին, մի կողմ յոդենով ազատագրական պայքարի գործիների ու հրանց համակիրների ըկատմամբ գործադրվող բռնություններն ու հալածանքները... Մայր Հայրենիքում, բնականաբար, նոյն ճակատագրին էին արժանանում նաև Վերֆելի վեպի մասին գրված գրքերը նույնական, ներկա դեպքում՝ Լ. Կ. Պալճյանի սոյն աշխատությունը: Ահա՛ ինչու, եթե այն փոքր տպաքանակով ու վերանայված տարբերակով 1986-ին բազմացվեց, իսկ 1987-ին միաժամանակ ֆրանսերեն ու ռուսերեն թարգմանություններով լույս տեսավ Փարիզում և Մոսկվայում (վերջինը՝ «Ծրուժքա Նարոդով» ամսագրի մեջ, 1987, № 8), իսկական հայտնություն դարձավ: Ուստի գրական շրջանները անվերապահ բարձր կարծիք հայտնեցին Վեհափառի այս աշխատության մասին:

Սուսա լերան դասերի սթափ հմարմամբ՝ հետազոտող-իմաստաեռն ինչպես ավելի քան կես դար առաջ, այնպես էլ ալսօր, օգնում է սերունդներին նորույս իրադրությունների մեջ ճիշտ կողմնորոշվելու համուն ազգության վերածնության, արդարության վերահստատման, հանուն հայի ազգային դիմագծի պահպանման, հանուն կորցրած հայունիքի փրկության ուղիների տեսնդագին որոնումների՝ վառ պահելով բոլորի էլ հավատն ու հուսերը, և բոլորին էլ ոգեկոչելով իմաստուն ու գեղեցիկ կերպով ապրելու այս կյանքը, յորովհանն նպաստելու մեր ազգի պատմական մեծ առաքելությանն ու հոգևոր հայութակներին համաշխարհային քաղաքակրթության մեջ:

«Ազգ մը չապրի միայն իր պարուական բարիքներով,—բացատրում է Լ. Կ. Պալճյանը, —չապրի միայն իր մտքի և զգացումի արտահայտություններով, ինչպես են արվեստներն ու գրականությունը, չապրի միայն հանաւարել անհատներու գործերով, այլ կապրի նաև իր պատվի ու արժանապատվության գեցցումներով, իր «Մենք»-ի գիտակցությամբ ու զոհարերության ոգիով, իր ազգուն և հպարտ ապրելու կամքով, մեկ խոսքով՝ իր բարյական մկարագրով» (Ա. տ., 60):

Ֆ. Վերֆելի անմահացրած հերոսները հենց այդպիսի մարդիկ էին, ոչ թե խեղված, այլ «հարազատ հայեր», որոնք իրենց մեջ կրում էին «հայ ժողովական մկարագրով» (Ա. տ., 60):

դովորի բարյալկան դիմագիծ՝ տոկուն, առողջ, վեճ և գեղեցիկ», ընդունակ՝ հետնորդների մեջ զարթնեցնելու նոր իդեալներ և սովորեցնելու, որ դժբախտությունից ու մարտիրոսությունից բացի, որոնք հայ ժողովողի մշշտական ուղեկիցներն են եղել դարերի նորովոյցի մեջ, հայն ունեցել է իրենից անբաժան մեկ այլ ճակատագիր նույնակերպ տոկալու և հաղթելու և ապրելու ճակատագիրը, ատեղծագործելու և հայերժ գոյատելու անմարկությունը: Կարծես հայերի մասին ասված լինի ավատրիացի մեծ քերթող Ռ. Մ. Ռիլքեի թևավոր խոսքը. «Այն ո՞վ է, որ հայութանակների մասին է խոսում, բազությունը դիմանալն է...» („Wer spricht von Stegen? Überstehen ist alles“— „Requiem“, 1908):

4

Երրորդ աշխատության հրապարակ գալու տարեթիվը ինչ-որ չափով հորելյանական էր: Եթե հիշենք, որ Լ. Կ. Պալճանի առաջին հոդվածներն սկսել են լուս տեսնել 1933-ի մարտից, Փարիզի «Մարտկոց» օրաթերթի էջերում, իսկ խնդրու առարկա գրքի տպագրությունն արտոնվել է 1943-ի ապրիլին, ապա ճիշտ որ այդ տարի լրացնում էր նրա հրապարականուական-գիտահետազոտական գործունեության տասնամյակը՝ ճախանձելի իր արգասապերթյամբ, մի կողմ թողած, որ գրքի հասացարանը թվագրված է «1942, սեպտեմբեր, Պուրբեց», իսկ վերջինից ելնելով՝ անհիմն չի լինի կարծել, որ այս լուրջ ու ծավալուն հետազոտությունը պատրաստվել է ինչպես նոյն թվականի նախորդ ամիսներին, այնպես էլ ամենի վաղ, մեկ կամ երկու տարիների ընթացքում, իսկ մտահղացումը գույք և գալիս էր համայստարանական ուսումնառության օրերից:

Խորագիրը խիստ առարկայական է: «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ»: Ըստ որում՝ եթե հեղինակի նախորդ երկու աշխատությունները կոչված էին օգնելու ընթերցողին ճիշտ պատկերացնելու խմատափրական և պատմա-գեղագիտական մի քանի խնդիրներ՝ կապված հայ մարդու, առավելապես սփյուռքահայության բնավորության ու հոգեբանության և նրա նորագոյն պատմության մեջ կատարված ճակատագրական ու ողբերգական փոփոխությունների հետ, ապա նոր գրքի հոլովը հոդի ու ժողովրդի, մարդու ու բնության, բնաշխարհի ու ազգության անխօնի կապի, իրական ուսուցչի և դաստիարակության բովանդակության հարցերն էին: Լ. Կ. Պալճանն առավելապես խորհիծ ու խոսել է տալիս անմահ Հայրիկին՝ իրեն վերապահելով միայն եղանակումները: Սուստ են այս աշխատության մեջ Խրիմյանի տարբեր երկերից արիմած կարծ ու ընդարձակ մեջքերումները: Հետուգոտուղը, կարծես, սրբազնություն է համարում վերաշարադրել այդ բացառիկ անձնավորության ու մեծ անհատականության խրատներն ու խորհրդագորությունները, փոխել նրա բառն ու բանը, նրա խոսքի բնական հոսքն ու կշուոյթը:

Եկ պայսես՝ ազգության գոյաւունան և բարյալկան դաստիարակության, հայ ժողովողի ազգային բնավորության հատկանշական գծերի բացահայտման բուն ձգությունը, տարիների անհագ հարցափրությունը ՅՈ-ական թթ. վերջերին Լ. Կ. Պալճանին հանդիպադրեցին Խրիմյան Հայրիկի լեգենդներով պարուրված կերպարին և մայր ժողովրդին կտակված գրական վիժիսարի ժառանգությանը, որոնց բուն էության մեջ այնքան էլ դյուրիհ չէր միանգամից թափանցել:

Երբ մեր հեղինակն աշխարհ եկավ (1908, սեպտեմբեր 20), Խրիմյանը այլևս կենդանի չէր (վախճանվել էր 1907-ի հոկտեմբերին), բայց շարունակում էր նրա ազգեցությունը մեր հոգևոր կյանքի ու ազատագրական պայքարի վրա, որպես անգրեն պատգամ շարունակում էին հնաշել նրա խըրատներն ու խորհուրդները՝ առմիշտ հրաժարվել ողբերից ու աղերսագրերից և ապավիճել սեփական բազկի ուժին ու սրբին: Այո՛, այս ամենին և Կ. Պալճյանը տեղյակ էր բանավոր գրուցելերից, բայց նրա համար իսկական հայտնություն դարձավ Վասպորականի Արծվի բարոյագիտությունը՝ կրթական ու լուսավորական ծրագրերն իրենց անհասանելի խորքով ու տարածման ընդարձակ շառավիդներով, որոնք անուղղակիորեն արձագանքում, իսկ որոշ դեպքերում էլ ավելի առաջ էին անցնում եվրոպական լուսավորիչների հմանորինակ հայեցություններից, հակառակ որ Խրիմյանն իրական կյանքում հնարավորություն ու ժամանակ չէր ունեցել ուսումնասիրելու նըրանց երկասիրությունները և առաջնորդվել էր լոկ իր առողջ բնագրով, իր զարմանալի եերբնաւեսությամբ:

Հանգամանորեն քննելով Խրիմյան Հայրիկի ըմբռնումներն ու հայացքները ընդհանուր և ազգային կրթության և դաստիարակության, մարդու կոչման և անհատի կատարելազգործման, համայնքի ու ընկերային կյանքի, ընտանիքի ու դպրոցի, գիտության ու տնտեսության, բնության ու աշխատանքի, ազգի ու բնաշխարհի, հողի ու մարդու անսպելի կապի և ածանցյալ այլ խնդիրների մասին, անհրաժեշտության դեպքում զոգորդելով դրանք մեր հոգևոր ու քաղաքական գարգացման պատմության և անձամբ իր՝ Հայրիկի վարչական ու քաղաքական գործունեության կարևորագույն փովերի և կենսական ու անհետագելի հարցերին տված լուծումների հետ, հեղինակը գալիս է այն ուշագրավ եզրահանգմանը, որ Խրիմյան Հայրիկը ոչ թե սովորական կրթական, վարչական ու քաղաքական գործիչ է եղել, «այլ հեղափոխական մը՝ իր ավելի լիիլ իմաստով, իր ամբողջական իմաստով», ընդվզող ու բողոքող անհատականություն, որն երագել ու մտածել, ձեռնարկել ու աշխատել է վերականգնելու և վերանորգելու համար հայ ժողովրդին և հեղաշրջելու նրա տնտեսական, ընկերային, քաղաքական ու բարոյական կյանքը՝ «գիտության ու սիրո ուժով, իսկական մեծ դաստիարակի մը ոգիով» (տե՛ս «Գալիքի տեսկիլով», էջ 82): Հետևաբար, բնավ չափազանցություն չի լինի, եթե Խրիմյանը հոչակվի «մեծագույն դաստիարակներն մին» ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային չափանիշներով, որը «իր մեծ գալափարներով ու ոգիով... միշտ կրնա իբրև ուղեցուց ծառալել որևէ ժողովրդական դաստիարակության՝ պատշաճելով ընկերային-տնտեսական նորագույն պայմաններուն» (Ա. ա., էջ 86, 187):

Խրիմյանը միայն կյանքի ու մտածողության հեղաշրջող, ավելի ճիշտ՝ սրահանդական-հեղափոխական չէր, այլև գրչի մարդ ու մտածների բարեկամ սեռն առած հայկական ու համաշխարհային կլասիցիզմի ու ոռնանությամբ ակունքներից, բայց առօրյայում ավելի իրատես ու շրջահայց, քան հայ իրապաշտներից շատերը: Այս անսովոր մարդու մեծ կրծքով բարախում էր մի մեծ սիրո, որի գորովալից շունչն ու տագնապալից զարկերն օգացվում էին տասնամյակների հեռավորություններից, մասնավորապես հայրենի կարուով ու հայրենադարձության գգտումով հազարավոր հայերի շրջանում: Խրիմյանի բանաստեղծական հանձնարի զարմանահրաշ կարուությունների մասին նուրբ դիտողություն ունի հան Լ. Կ. Պալճյանը:

«Խրիմյան կը մտածե միաժամանակ մտքով ու սրտով, ու կը խոսի բանաստեղծի գգայնությամբ՝ պատկերներով ու գովաներով և առաջալի շունչով», — եզրակացնում է Ասա («Գալիքի տեսիլքով», էջ 87):

Խրիմյանին նվիրված ազգային և օտար գրականությունը հարուստ չէ, մի քանի գրքով ու հոդված միայն: Վեհափառ Հայրապետի երիտասարդական տարիներին գրած սովոր հետազոտությունը հայրենի խրիմյանագիտության հիմնաքարերից մեկն է և անկրկնելի՝ բոլոր առումներով:

Իր այժմեականությունը պահպանում է Լ. Կ. Պալճյանի եզրականգումների մեծ մասը, հատկապես «Հողի սեր» գրովը իր վերլուծական դրսվագներով, որ, կարծես, դառն կշտամբանք լինեն հողից ու բնաշխարհից օրավոր խորթացող մեր ժամանակակիցների համար ևս: Թարգմանը հանդիսանալով Խրիմյան Հայրիկի մտածումներին՝ Լ. Կ. Պալճյանն ասում է.

«Հողը... Կենդանի իրականություն մըն է, մարմին և շոնչ ունի, կը խոսի ու կը շարժի: Հողը կապրի ու կրնա և մեռնի: Հողը կյանքի աղբյուր է, որին կը ծննի ցորեն ու պտուղ, որին կը հոսին մեղը ու կաթ: Հողը մարդկային կյանքի ալ արգանդն է, հոն կը թաղվին մարդիկ՝ հոնկե ալ ծնելու համար» (էջ 163): Բայց հող ասելով՝ Խրիմյանը չի հասկանում ինչ-որ անորոշ բան, այլ հայրենի հողը՝ «իր գյուղին, իր համայնքին հողը», այն հողը, որ հայ մարդու ծննդավայրն է, «որոշ պատկերով, որոշ աշխարհագրական դիրքով, որոշ բուսականությամբ, որոշ ծաղիկներով ու կենդանիներով, որոշ հարստություններով, որոշ աշխատության ձևերով, որոշ սովորություններով, երգերով, գալապարաբռառով, որոշ անցյալով, որոշ ուրախություններով ու ցավերով» (էջ 164):

Ի վերջո՝ հայ շինականի հայրենիքը հենց այդ հողն է, որին պետք է Աս կապված մնա իր գգացմունքների բոլոր ուժով, իր կյանքով, հավիտեապես:

«Եվ Խրիմյան իր խոսքով ու գրչով կուգե հայուն գգացնել տայ հողին կենդանությունը, հողին զարկը, հողին աղմեքը, հողին անմահությունը» և «ամեն գնով ու բոլոր միջոցներով կը պայքարի այն հայկական դրժրախսության դեմ, որ պանդխսություն կը կոչվի»: Բնավ ուշացած չէ, անգամ մայր հարենիքում ապրողներին համար, ունկնդելու Խրիմյանի խորիմաւ և փրկարար պատգամները, որոնց վրա ուշադրություն է հրավիրում նաև հետազոտողը՝ քաղելով նրա հայրապետական առաջին կոնդակից (1893 թ.):

«Ողջո՞ւն ձեզ, բնակիչը դաշտաց և լեռանց, շինական երկրագործ ժողովուրդ, որ սիրեք զիոնը և մաճ, զոշաբն և տավար. դուք աշխարհի բարի և անխարդախ վաստակին աշխատավոր մշակն եք, դուք հարազատ որդիք եք հայասոր մերում. գործեցնե՛ք զերկիր և պահեցնե՛ք՝ գիտնալով թե միայն երկիրն է ձեզ կյանք և զրություն. միշտ ջանացեք անկորուտ պահել այդ հայրենատուր ժառանգություն» (էջ 168):

1943-ին, ասացինք, փոխվեցին Լ. Կ. Պալճյանի կյանքի ուղին, ամենօրյա հոգսերն ու տագնապները: Թեև հիմա էլ (1943, սեպտ. 30) վարդապետ, իսկ հետո եպիսկոպոս (1951, հուլիս 8) Վազգեն Պալճյանը չի դադարեցնում իր գրականագիտական-հրապարակախոսական գործունեու-

թյունը, սակայն արծարծվող խնդիրները գերազանցապես կապված են կրտսեական աշխարհի հետ: Այնուամենայնիվ, նրա գրիչը վերստին ստեղծել է վառ ու ինքնատիպ երկեր, թերևս, առավել հասուն, որոնց ամենալավան արտահայտությունը «Մեր պատրագը» գիրքն է՝ լոյս տևած 1945-ին: Բնույթով այն վերլուծական-մեկնողական աշխատություն է և եկեղեցական մատենագրության երեսնմի ժամաներից մեկի վերածննան փոքր՝ արդեն նոր պայմաններում ու սկզբունքներով:

Պատարագի հին մեկնությունները խթժնարան աշխատություններ էին իրենք իսկ կարու կրկին մեկնության: Միշին դարերից մեզ են հասել Գրիգոր Նարեկացու հոր, Խոսրով Անձնացաց եպիսկոպոսի (X դար), Ներսես Լամբրունցու (XII դար), իսկ փոքր-ինչ ուշ՝ Հովհաննես Արճիշեցու մեկնությունները: Այս վերջինը նաև երկու անգամ տպագրվել է XVIII դարում և տարբեր խորագրերով. «Մաղթանք ձեռնատութեան առ Կոյսն Երանուի» (Կ. Պոլիս, 1717) և «Մեկնութիւն ահաւոր Խորհրդյան Սրբոյ Պատարագին» (Կ. Պոլիս, 1799)***:

Վեհափառ Հայրապետն ստեղծագործական ազդակ է ստացել XIV դարի հեղինակ Հովհաննես Արճիշեցու այս մեկնության հառաջարանից՝ ձեռքի տակ ունենալով նրա 1799 թ. հրատարակությունը:

«... Հավատացալները անտարբեր են Սուրբ Գրոց համեմեա կամ կրկարդան, բայց կարդացածներուն միտքը չեն քններ և կամ բնավ իսկ չեն հասկնար» («Մեր պատրագը», էջ 2):

Սրանք իրողություններ էին, որ եկեղեցի մտնելու և, որպես հոգևոր հովիվ, հավատացյալների հետ շփվելու առաջին օրերից մտահոգում էին Վազգեն վարդապետին՝ պարտադրելով վիճակը գեթ մասմբ փոխելու համար կրթական-լուսավորական, ավելի ճիշտ՝ հոգևոր կրթության և լուսավորության հարցերով գրադիվելու, որպես առաջին բայլ պատրաստելով մեկնությունը հայոց պատրագի, որի հաշմակություննը անշափ կարևոր էր վերջինին առնչվող դավանարանական և ծիսագիտական որոշ խորհուրդներն ու հարցերը ճիշտ պատկերացնելու, իսկ վիճակարույց դառնալու դեպում՝ հշմարիտ լուծումներ գտնելու համար:

Եվ, հիբալի, Վեհափառ Հայրապետի սույն աշխատության մեջ ընթերցող գտնում է ընդհանրապես քրիստոնյա աշխարհի և Հայրապահայց Առաքելական Ս. Եկեղեցու խորհուրդներից ու արարողություններից մեծագոյնի՝ Սուրբ Պատարագի կարգի ու ընթացքի դյուրմբունելի բացատրությունը՝ հարկ եղած դեպում շատկապելով դրանք մեր Եկեղեցու դավանարանական սկզբունքների և ազգային ավանդների, մեր ժողովրդի կրոնական զգացումների հետ: Եվ ամեն անգամ՝ հասուն ու խորիմաստ լուսաբանություններով: Հեղինակն ուսուցանում է, որ թեպետն կրտսական զգացումն իր խորքի մեջ ազգային բնոյց չունի, սակայն իր պատմական զարգացման մեջ ձեռք է բերում տվյալ ժողովրդի, ներկա դեսպոտմ՝ հայ ժողովրդի պատմական մակարագրով պայմանավորված ուրուն ձևեր ու երանգներ, որոնք իրենց որոշակի դրույն են թողնում հայ մարդու հոգեկան կերտվածքի ու բնավորության վրա՝ միշտ ու ամենուր կանգնեցնելով:

*** Հայտնի է նաև անանուն հեղինակի 1759-ին Զմյունիայում) «Գիրք մեկնութեան, ընդ որում պարտնակի պաշտօն Աստուածային անգատում պարգևացն») և 1795-ին Կ. Պոլոստ տպված աշխատությունը (արդեն «Մեկնութիւն ժամանակարգութեան»), բայց վեհին ավելի համարու և անհաջող գրամքը է:

նրան խոճի դատաստանի առջև, պարտադրելով անկեղծորեն քննել երկրային կյանքում իր կատարած բարի ու չար գործերը և ձգտելու բարուն ու կատարյալին, որովհետև իսկական բարդական հերոսությունը բացարձակ անկեղծության մեջ է (տե՛ս էջ 9—10, 18):

Համակողմանիորեն քննելով պաշխարության, մեղքերի քավության և հնարակատարելագործման հնարավոր ուղիները, որոնց ընթացքում շատեր՝ սարսափած իրենց խկ գործած մեղքերից, փարուն նև մահվան գույնափարին ու հանցափորձության, հայոց պատարագի այս խորատենչ Մեկնիչն իր ծանրակշիռ առարկություններն է մեջտեղ թերում, հայոց պատարագի բուն խորհրդից բխող կենսահաստատ հետևողություններ առնում: «Մասի պատիծ մը չի կրնար ըլլալ,—ասուն է նա,—այլ՝ պատիժն փախուստ մը, խկ անձնասպանությունը ո՞չ թէ հերոսություն է, այլ՝ տկարություն, դասալքություն: Իսկական հերոսությունը ապրիլն է, և մեղքերն և սխալներն իսկապես ազատվելու միակ ճանապարհը բարի գործքով զանոնք հատուցանելը... աշխարհի չարը բարի վերածելը»: Իրապաշտ ու վեճ են հնչում Վեհափառ Հայրապետի եղուսիակից խորքերը. «Միայն բարի ու արդար գործի ու ստեղծագործ, շինարար աշխատանքի ճամրուն վրա է, որ մարդը պահ մը գոնեն կը զգա արարչական ուժերու զարթնումը իր մեց» (էջ 20—21):

Մենք գրեթե չծանրացանք բուն աշխատության կամ գրի երկրորդ մասի վրա, որ հենց հայոց պատարագի մեկնությունն է և ուր, զուգահեռ նարար, քննության են առնված կրօնական-եկեղեցական ծեսերին ու արարողություններին առնչվող հարցեր՝ թևածելով նաև տեսական ոլորտ: Հեղինակի այդ դիտողություններից կարող են մեծապես շահել ոչ միայն հարցի նեղ մասնագետները, այլև, ընդհանրապես, ազգագրագետները՝ ժողովրդական ծեսերի ու ստվորությունների մեջ քեկված հնագույն պաշտամունքների աղոտացած հետքերը պեղելու և ուսումնասիրելու ընթացքում:

Պատարագը, Ենրկա ղեաքում հայոց պատարագը, թեպետև ազգային հավատալիքների նետ կարգված արարողություններից կամ ծեսերից համեմատարար ամենաերիտասարդն է, ձեավորված լինելով Հայաստանում քրիստոնեության տարածման և պետական կրոն հոչակվելու առաջին դարում և հետագայում էլ համեմատարար քիչ փոփոխություններ կրած, բայց վերստին ունի խորհրդավոր ու ամրութեալի գաղտնիքներ: Այդ գաղտնաբանների դուները բաց անելու համար մենք, գրեթե ամենուր, հակված էինք նյութական, առարկայական ազդակներ որոնել, հնագույն առասպելներն ու պաշտամունքները, հավատալիքներն ու խորհրդապաշտական իրողությունները անգրագետ երևակայության մեջ քեկված՝ բնական ո հասարակական ուժերի արտացոլանք համարել, գիտովին անտեսելով Ոգու և Հոգեկանի մեծ խորհրդը: Մինչդեռ Վեհի մեկնության մեջ կարդում ենք. «Եկեղեցինեն ներս ամեն բան խորհուրդ է, սիմբոլ է, ո՞չ բարը բար է, ո՞չ փայտը փայտ, ո՞չ աղոթքը՝ լոկ խոսք, ո՞չ երաժշտությունը՝ պարզ երգ, ո՞չ ալ Սուրբ Պատարագի հացն ու գինին՝ հաց ու գինի: Ով որ կարող չէ հոգեկան նյութական իրականութեմեն անդին անց-անը և անոնց խորհուրդը տեսնել, անոր համար բնական է, թէ հացը հաց կը մնա, և գինին՝ գինի: Եվ, սակայն, մարդկային հոգեկան կյանքին հատուկ երևուց մըն է նյութական աննյութական իրականությանց բարձրանալը, երևույթ, որ հատուկ է, մանավանդ, մարդկային մտավոր ու հոգոր աշխարհին» (էջ 79):

Այս էլ չմոռնանք, որ «կրոնքը ինքը, իր էությամբ և բովանդակությամբ, զուտ հոգեւոր երևույթ մըն է՝ մարդկային անհատական ու ընկերային կյանքին հոգեկան <ու> բարոյական անհրաժեշտություններին բխած» (էջ 80), հետևաբար կրոնի, ծիսակարգի հետ կապված հարցերը քննելիս ուշադրության առարկան նախ «հոգեկան երևույթները», «հոգեկան ու բարոյական անհրաժեշտությունները» պիտի լինեն: Որ այս գնահատականի մեջ բնակչափական չկա, կուգենքը հիշեցնել տակալին Պլուտարքոսի «Յաղագու յորջորջման երանց և գետոց» գրվածքի մեջ նկարագրված՝ հեթանու հայերի մի ծես կամ արարողություն, դարձյալ կապված զոհաբերության կամ պատարագի հետ և տարածված քրիստոնեությունից շատ առաջ: Աղբյուր ունենալով Դորոքնու Քաղենացու երկը, Պլուտարքոսը հաղորդում է՝ «թե Երանին մոտ կար սև քար մը՝ սիրի՛ոն (Վարտնօդ) կոչված: Եթե պատգամը մարդկային զոհ մը հրանայեր, երկու մասադ կույսեր այդ քարը կը դնեին պահապան աստուծո բազինին վրա: Քուրմը հազիվ թե կը հաեր անոր իր դանակը, և ահա արյան ապածով մը կը հոսեր անեկե: Այս սնապաշտ արարողության ներկա գտնվողներն մեծ ճիշեր կը բառնալին և քարը մեխյան կը տանեին» (Ե. Դորյան, Մարդագոհ, տե՛ս «Անահիտ», 1947, № 2, էջ 15—16): Ծիշու որ ամեն ինչ խորհրդանշական է այստեղ. և՝ կոյսերը, և՝ քարը, և՝ արյունը, և՝ հայ հավաքականությունը շատ հին ժամանակներից կրոնական ծեսերին ու հավատալիքներին ինքնաբերաբար տալով նման գունավորում՝ հոգին մաքրում եր վայրենության և բարբարության արյունալի մեջերից և որոշակի քայլ կատարում դեպի «բարոյական անհրաժեշտության» գիտակցություն:

«Մեր պատարագի» եզրահանգումներն, իբրև թևափոր խոսքեր, նորովի վերափականացումներով, մեղմ կամ ծավալուն, ցրված հան Վեհափառ այլ նաև գրությունների՝ քարոզերի, կոնդակների ու 1976-ին հրատարակված «Մտածումների» մեջ: Նա ուշադրություն է հրավիրում հատկապես հայոց մշակութային բազմահուն կանքի ու ազգային Եկեղեցու գործումներին միասնության, համազային արժեքների անբաժանելիության վրա, որոնք ժողովուրդն ու Եկեղեցին պահել են կյանքով ու արյունով:

«Ծխմաբիտ քրիստոնյա են այն ժողովուրդները,—ընդգծել է Վեհը,— որոնք դարերու փորձով ստեղծված են քրիստոնեական ինքնատիպ մշակույթ և իրենց ծոցեն ծնունդ են տված վավերական սուրբերու» («Կոնդակներ, քարոզներ», III, էջ 289): Հայաստանաց Եկեղեցին նեաց այդպիսին է, քան ամենայնի՝ Ծիշու շնասկացված օտարենից, որը սակայն ո՛չ թե արաւ, այլ սուպելություն է. «Թո՞ն՝ շմելադրի մեր Եկեղեցին որպես ազգանական, ո՛չ՝ Մենք պարզապես կուգենք ապրիլ իբրև ազգի իբրև ազգություն, այնպես, ինչպես մեզ ստեղծեր են Աստված և պատմությունը: Մենք պարզապես կուգենք ապրիլ մեր քրիստոնեական-ազգային մշակույթի արժեքներով» (էջ 295):

Կեհի մշտական հրավերներն ու հորդորները՝ ուղղված սիրելի ազգին, վեհացնող են, ոգեշնուն են և արարումների մղող. եզրափակներ մեր խոսք միայն մելք վերիշելով.

«Ապրեցնը և գոյատնեցնը այնպես, ինչպես Աստված է ձեզ ստեղծեր, և այնպես, ինչպես մեր Եկեղեցին ու դարերն են կերտեր ձեզ և ոգեշներ: Մենք հոգի կրող և հոգի ստեղծող ազգ ենք: Մեր հոգիի հայելին մեր կրոնական հավատքն է, մեր ազգային մշակույթն է, աշխարհի կյանքով ապրելու

ու գործելու մեր ազատ կամքն է՝ աստվածակառուց Ս. Էջմիածնի օրհնության ներքև:

Հայ ըլլալ և հայ ապրիլ, ամա՞ աշխարհի նոգուր-բարոյական գեղեցկություններեն մին» (էջ 292):

Ինչոր առումով ընդհանրություններ կան Վեհափառ Հայրապետի՝ Սփյուռքում հրատարակած առաջին և վերջին ուսումնափրությունների մեջ: Ե՛վ մեկը, և՛ մյուսը գրված են օտար, ուսմին լեզվով, որը նա գիտեր մայրենու հավասար (ի դեպ, Բուքրեցի հայոց «Միսաքան-Քեսիմյան ազգային կարմարանում» աշխատելիս՝ նա երկար տարիներ ուսմին լեզու և գրականություն էր ավանդում): Ե՛վ մեկի, և՛ մյուսի առաջին ընթերցողները, նաև արժեքավորողները օտարներ էին: Մասնավորապես վերջինը սկզբնապես, որպես դասախոսություն, կարդացվել է Բուքրեցի հայոց Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում, ուսմին բարձրաստիճան հոգևորականների, հանրային մշակութային գործիչների և բազում հավատացյանների առջև, 1950 թ. դեկտեմբերի 10-ին, վերածնության դարաշրջանի հայ հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ծննդյան հազարամյակին նվիրված հանդեսում, ապա որոշ վերանայումներով՝ տպագրվել ուսմին կրոնական-գրական-հասարակական «Ortodoxia» հանդեսում (1955, հոկտ., էջ 166—181), արդեն խորագրված՝ «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը և գործը»: Վերջուծական սույն ակնարկի մեջ և նրան կից՝ ուսմին ընթերցողին էին ներկայացվում նաև տասներկու հատված «Մատղան ողբերգության» պոեմի տասնմեկ գլուխներից, աշխատահրովի համարձեք թարգմանություններով*****, իբրև ճաշակ Նարեկացու հանճարի փառատակման և ստեղծագործական կարողությունների:

Նկատի ունենալով լարանի կամ ապագա ընթերցողների իրազեկության չափը՝ աշխատության առաջին մասում ընդհանուր տեղեկություններ են հանդորդվում Հայոց պատմական կյանքի վայրովըերությունների, իին ու միջնադարյան մշակույթի անցած ուղղությունը կյանքի ու գրական գործություններում մասին, նետու միայն սկսելով վերլուծել գորիսործոցը՝ «Մատղան ողբերգության» պոեմը, որը աշխատահրովի ընկալմամբ աղոթամատյան է՝ բարիս ամենախորութեակ հշանակությամբ, որպես միատիկ կրոնավորի գգացմունքների արտահայտության ծներից մեկը:

Աղոթքը, նկատում է Վեհը, ծնվում է «մարդկային սրտի իսկական ու անկեղծ ապրումներից, սպառնում դեպի անձայրածիր անսահմանություն, և այնտեղ, հեռուներում, տիեզերական անդրաշխարհի անհունության մեջ հանդիպում է մի Սրտի, որը սիրում է մեզ, և ապա վերադառնում ու նորից իշնում մեր հոգու մեջ՝ միմիշարական օրինություն քերելով մեզ... Ո՞չ մի մոլեգին քամի չի կարող ցրել և ո՞չ մի անել ալիք չի կարող խեղել անկեղծ աղոթքի անմահ ոդին» («Գալիքի տեսիլքով», էջ 202—203):

Նարեկացու աղոթքը դավանարանական խոթին բանաձերի կաղապար չէ, ո՞չ էլ հավատացյաններին անգիր անել տալու համար հանճարարվող

***** Առաջին անգամ ուսմիններն թարգմանված այդ հատվածներն են՝ Բան Գգ, Դք, ԺԲդ, ԼԱգ, ԽԱս, ԾԵր և գ, ՄԶԲ, ԿԶԲ, ՀԱԲ, ԶԱԱ և ԶԳԲ:

աղերսանք՝ զուրկ ներքին կրակից ու կշռութից: Այն ծնվում է հոգու խորքերում, որպես աղեկեղ հառաշանք ու ներքին խորք, իսկ այնուհետև ծափալվելով՝ վերաճում իրական բանաստեղծության և գեղարվեստի անգերազանց արտահայտության:

Նարեկացին ամենաշերմեռանդն է բոլոր ծանոթ Սղոթողներից, գիտակցելով իր արած ու չարած հանցանքները, իր ծանրագին մեղքերը, բայց և ճանաչելով Աստուծոն անպարփակելի մեծությունը և անկեղծորեն փառաբանելով նրան՝ չի կորցնում հույսը, որ, այնուհանդերձ, արժանանալու է բողոքության: Հեղինակից չի տարբերվում նաև իր քնարական հերոսը, «մեղքերից կազմված մի մարդ, կերտված հուրը, փիսրու նլութից, ընդամենը ուկ մի ոչչություն, որ ենթակա է հողեղեն մարդու գործած բոլոր սխալներին և որն իր մեջ գտում է իր նման բյուրավորների գործած մեղքերը և խորապես տառապում դրա համար, ինչպես պիտի հանդգնի նայել Աստուծոն երեսին»: Միմիայն իր երկրային մեղքերն ու թերությունները նկարագրելով ու ողբարով, դաժան ու անողոր անկեղծությամբ իր հոգին մերկացնելով համայն մարդկության առջև, զջումի խարազանով անգոթորեն ու անընհատ իրեն գանակոծելով, որովհետև մեղքի բոլոր ճանապարհներին կարողի է թողություն գտնել, Աստուծոն Սերը մարդկանց հանդեպ ի վերջո պիտի հաղթանակի, և թողություն ստացած մարդն, ի վերջո, պիտի միանա Աստուծոն հետ (հմմտ. էջ 203):

* * *

1955-ից սու այսօր գիտահետազրտական նոր աշխատությունն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետություն գուցե և գրել կամ ուրվագծել է, բայց չի հրատարակել: Իսկ այն մտքերը, որոնց շուրջ առաջներում կարող էր ծափալվել, այժմ անսակելի սեղմությամբ հանրության են մատուցվում բազմ եղությների ու հարցազրուցների ժամանակ, կոնդակների ու քարոզների միջոցով կամ է՝ գերխստացած մտածումների ձևով:

Դրանց ուսումնասիրությունը տևական գործ է, ո՞չ պակաս կարևոր՝ Վեհի բացադիկ անհատականության ճանաչման և ազգային կյանքի ու պատմության շատ հարցերում ճիշտ կողմնորոշում ունենալու համար, սակայն տվյալ խնդիրները դուրս են մեր ներկա ծրագրից:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ի
ՀՈՎԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բազմաբնույթ հետաքրքրությունների, ընդունակությունների և բազմամյա գործունեության արգասիք են նրա ոչ միայն քարոզչական, կրոնագիտական, մանկավարժական-դաստիարակչական, հրապարակախոսական, հայրենասիրական-քարոյական ուսումնասիրությունները, հոգվածները, մտածումները, այլ նաև հոգեբանական աշխատությունները: Հողվածների և գրուցների, գրեթե և դասագրքերի ձևով լուս տեսած նրա գիտա-հոգեբանական հայացքները սկսել են ձևավորվել դեռևս 30-ական թվականների կեսերից, երբ սուսալով իմաստափրական և գրականագիտական բազմակողմանի կրթություն Բուքունչի պետական համալսարանում, ուսմինահայ մասնություն Վեհափառը հանդես էր գալիս ինքնուրույն հոգեբանական մտածողությամբ: Ծիշու է, դրանք քանի չեն կազմում նրա հոգելոր-մշակութային գործերի մեջ, սակայն ասկալաթիվ լինելով հանդերձ գիտական և գիտա-ուսումնական արժեք են ներկայացնում հայ հոգեբանության զարգացման և Հոգեւոր ձևարանի ուսանողների կրթության բարելավման գործում:

Վեհափառի հոգեբանական, ինչպես ինըն է ասում, «մտածումները» բնութագրուում են ոչ միայն շարադրանքի և տրամաբանական կերտվածքի պարզութամբ և մատչելիությամբ, օրինակների և փաստերի համոզությամբ, այլ նաև նախապատերազմյան և ետպատերազմյան հոգեբանական գիտության իմացությամբ, նրա հաջողությունների և նվաճումների անշուապ, բազմակողմանի վերլուծումներով և երբեմն է գուազ ընդհանրացումներով, փաստարկված եղբակացություններով և մտահանգումներով: Այլին շատ հաճախ նրա հոգեբանական իմացությունը չի սահմանափակվում հոգեբանական պրոբլեմների ոլորտներում, այլ ներթափանցում է բնականորեն և անկաշկանդ ձևով նրա մանկավարժական, կրտսագիտական, քարոզչական, հայրենասիրական հոգվածներում, ճառերում, աշխատափրությունների մեջ: Սա հշանակում է, մեր համոզումով, որ Վեհափառի ընդհանուր մտածողության մեջ հոգեբանական բաղադրամասը հաճախ է իրեն զգացնել տալիս և գրավոր, և բանվոր խորում:

Վեհափառի ուսումնասիրությունները վերաբերում են ընդհանուր և հայ-

ազգային հոգեբանությանը, հոգեբանական ուսումնական գրականությանը և մասմբ մանկավարժական հոգեբանությանը:

Նախապատերազմյան տարիներին ուսուցչական գործումնեության զուգահեռ մշակել է ընդհանուր հոգեբանության այնպիսի հիմնական հարցեր, ինչպես «հոգի», «ոգի», և «անձնավորություն», «քննազդ» և «գիտակություն», որոնք տպագրվել են Հուրբենջի «Հերկ» ամսագրում (1937—1938 թթ.):

Հոգեբանության տրամաբանական նախասկիզբը՝ նրա առարկայի ոչ միայն սահմանումը, այլ նաև գիտական մեկնաբանությունը թեկադրում են պարզաբանել «հոգի» հասկացությունը: Վեհափառ այդպես էլ մոտենում է սույն հարցին՝ նկատելով, որ՝ «Այսօր, սակայն, հոգի գիտությունը, այսինքն՝ հոգեբանությունը, նրկար ճամփա մը բակելն ու ժամանակի ընթացքին բազմազան տեսակներու վրայեն անցնելու վերջ, մոտեցած է ճշմարտության, գոնեն ինչ կվերաբերի հոգիի բնորոշումին» (Վազգեն Ա. Կաթողիկոս, Գալիքի Տեսիլով, ուսումնասիրություններ, հոդվածներ, ուղեգրություններ (1933—1954), Ա. Էջմիածին, 1988, էջ 235): Այսուհետև, շարունակելով իր բացատրության միջու եղանակը, նաև շարունակում է. «Ուրեմն՝ հոգի ըսելով այսօրվան գիտությունը կհասկնա զգացական, մտավորական, կամքի արտահայտություննը՝ մեջը ըլլալով նաև ենթագիտակիցը» (Առյօն տեղում, էջ 236):

Խեկապես, հոգեբանությունը իր պատմական զարգացման ընթացքում երկար ճանապարհ է անցել տարբեր գիտությունների ընթերքում, տարբեր անվանումներով: Այսպես, միջնադարյան աստվածաբանության մեջ այն կոչվում էր «անհիմսատիկա» և երբեմն՝ «շնչագիտություն» (անմատողոգիա), սկսած հունական սկեպտիկներից մինչև Ս. Օգոստինոս: Սյուս չենք հշում, որ 16-րդ դարից մինչև Էմ. Կանտ այս գիտությունը մտնում էր իմաստափության և մարդաբանության մեջ: Ահա այս նկատի ունի Վեհափառ, երբ տեղին միշտառակում է, որ «հոգի» հասկացությունը սերտորեն կապված է «զունչ» եզրի հետ, մի փաստ, որ մի շաբը լեզուների (օրինակ, արաբերենի) մեջ «հոգեբանությունը» կոչվում է գիտություն շնչի (հաֆասի) մասին:

Ծավալելով իր մտածումները «հոգու» մասին, Վեհափառն ընդգծում է ընդհանուր բնությանը և նույնիսկ մարմնին նրա մաս կազմելու հանգամանքը, «քանի որ հոգին տեսակ մը շարունակությունն է, կատարելագործված ու այլափոխված ձևի մը տակ, մարմնով» (Առյօն տեղում, էջ 236): Հետեւ վերով ժամանակի առաջավոր բնագիտական և ընկերաբանական մորքի շարժումներին նա իրավամբ շերտավորված մոտեցում է ցուցաբերում «հոգի» երևույթի նկատմամբ և տարբերակում է հետևյալ մակարդակները.

Սուաշին՝ անկենան (ինձ՝ անօրգանական) մակարդակ:

Երկրորդ՝ բուսական-կենդանական իրականության մակարդակ:

Երրորդ՝ հոգեկան իրականության մակարդակ:

Այս վերջին մակարդակում զատորոշվում են անձնական և ընկերային հավաքական հոգու ենթամակարդակներ: Հեղինակը գրում է. «Անհատական հոգին անհատական հոգեկան ապրումներուն և արտահայտություններուն ամրողությունն է» (Առյօն տեղում, էջ 237), իսկ ընկերային-հավաքական հոգին «պարզապես անհատներու հոգեներուն գումարը չէ, այլ անոնց համադրությունն է, այսինքն՝ գումարեն ավելի և տարբեր քան» (Առյօն տեղում, Առյօն էջում):

Այստեղ շեշտը դրվում է ոչ միայն ընկերային-հավաքական հոգեկանի անհատականի հոգեկանից ունեցած որակական տարբերությունների վրա,

այն նաև այն գաղափարի վրա, որ «զատ մը անհատական նկատված հոգեկան արտահայտություններ ու հատկություններ հնարավոր պիտի չըլլային առանց ընկերային կյանքի մը, ինչպես է, օրինակ՝ լեզուն և այլն» (նոյն տեղում, էջ 238): Սա հշանակում է, անհատական հոգեկանը պայմանավորվում է հասարակականով՝ հատկապես բովանդակությամբ: Այդ երկուսի միջև հարաբերությունները բազմապիսի են և բարդ: Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ առաջնայինը հասարակական դերն է անհատական հոգեկանը և նրա ձևավորման վրա:

Վեհափառը հատուկորեն զատորոշելով «հոգի» և «ոգի» հասկացությունները, որոնք հաճախ շիփորվում են, կանգ է առնում այս վերջինի բազմաթիվ լինելու հանգամանքի վրա, միաժամանակ ընդունում է նրա ճշշգրիտ, գիտականորեն ստույգ իմաստ չունենալը: Այս առջիկ նա տարբերում է. 1. «Ոգի» հասկացությունը կրոնական իմաստ ունի այն առումով, որ անհատը կամ ժողովորդը ապրում է ոգեկան (ոգեոր) կյանք... «Մենք՝ Բայերս, —ավելացնում է Վեհափառը, —սակայն, ոգեորի իմաստով «հոգևոր» բառը կործածենք. ինչ որ թյուրիմացություն մըն է, թյուրիմացություն նը, որ և վիշտագործված ըլլալ կթվի»: («Ինչ կը անանակն ոգի»: «Հերկ», 1987, հոկտեմբեր): 2. «Ոգի» եզրն հաճախ էր նույնանում բանականության մեն՝ գոնե պատմական Հունատանում, որը նաև «հոգ» էին կոչում, որը բանականության («Աղոռ») համարյա հոմանիշ էր: 3. «Ոգի» բառը ունի նաև անանձանական իմաստ՝ հակադիր լինելով նյութին. այն հշանակում է մտածական իրականություն, որն իր բնույթով բնազանցական է: «Ոգի» եզրից է առաջացել ոգեպատություն և ոգեպաշտ փիլիսոփա կամ հոգեբան հասկացությունը. 4. Փոխարերական առումով այս բառը ցուց է տալիս նաև մի հավաքականության կամ իմացության, դասակարգի կամ աշխարհայացքի գաղափարը, համոզունքի եռթյունը (ազգային ոգի, դասակարգային ոգի, բանաստեղծական ոգի, սպորտային պարարի ոգի և այլն): Այսպիսով, «ոգի» բառը, ի տարբերություն «հոգի», «հոգեկան» հասկացությունների, ոչ միայն բազմիմասն է, այլ նաև սերտորեն կապված մարդու ներքին վերաբերմունքի, դիրքորոշման, ընկալման և համոզունքի մեն:

Այս պարզ և ցատկներյան հասկանալի թվացող տարբերությունը «հոգի» և «ոգի» եզրերի միջն, որը գտնում ենք Վեհափառի աշխատահրություններում, միշտ չէ, որ զատորոշվում է հոգեբանության դասագրքերում և մենագրություններում անհրաժեշտ հստակությամբ և հանգամանորեն:

Այս զատորոշումից անմիշապես հետո նրան հետաքրքրել են բնազդի և գիտակցության և՝ պատմագիտական, և՝ հոգեբանական հիմնահարցերը անհատ մարդու և մարդկության զարգացման մեջ, երբ նա դեռևս անենին չեր մտածում հոգեորական դասնական:

Լինելով ժամանակի առաջադիմական գաղափարների ագդեցության տակ՝ Վեհափառը գիտական լայն ըմբռնումով և միաժամանակ զգուշավոր, անշուտապ մոտեցումով մշակում է վերոինիչյալ հարցերը, առանց որոնց տեսաշարժերի հետ, «Բնազդ և գիտակցություն» հոդվածի հեղինակը (տես «Հերկ», Բնախարեւու, 1938, փետրվար) ընդհանուր է համարում բնազդները իմաստային կենացանու, այնպես և մարդու համար, թեև նշում է գոյություն ու-

րը իմաստի կենացանու հիմնահարցը:

Այդ երկու հարցերը ճիշտ կերպով առնչելով նյարդային համակարգի և բնաշրջման, նրա զարգացման տարբեր փուլերի և տեսաշարժերի հետ, «Բնազդ և գիտակցություն» հոդվածի հեղինակը (տես «Հերկ», Բնախարեւու, 1938, փետրվար) ընդհանուր է համարում բնազդները իմաստային կենացանու, այնպես և մարդու համար, թեև նշում է գոյություն ու-

Աեցող տարբերությունները մարդու և կենդանիների բնազդների և համապատասխան գործողությունների միջև։ Նյարդային համակարգն է, որ լավագույն կանոնավորում է և ապահովում օրդանիզմի հարաբերությունները արտաքին աշխարհի հետ։ «Զնային դրույթներ այն միակ գիրքն են, որուն մեջ կրնար կարդալ մի տեսակին» (ըրեւե) ամբողջ անցյալը» (Յովն տեղում)։ Այս դրույթը հավասարապես վերաբերում է կենդանուն և մարդուն, սույն այն տարբերությամբ, որ առաջինը առաջնորդվում է բնազդներով, երկրորդը՝ գիտակցությամբ, որի մենաշնորհն ունի։ Զուգահեռ անցյացնելով և նրանց վարքագին տարբեր կողմերը մերը վերլուծեղով, մերթ նրանց առանձնահատկությունները համարելով, հեղինակը ժամանագրար փոխանցված կենդանու բնազդների նոյնանաման կրկնություններին, որոնք շատ քիչ են հարստանում սեփական կյանքի ընթացքում ձեռք բերածով, տրամադրուեն հակադրում է մարդու գիտակցությանը, որը սահմանում է որպես «նոր հենարավորություն մը, որ ստեղծված է մարդուն ջրային դրույթան նոր զարգացման շնորհիվ» (Յովն տեղում) և որը բնութագրում է որպես «ուտում» բնույթան մեջ։

Այս տեսակետը նոյնիսկ իր ժամանակին ունեցել է իր «թեր» ու «դեմ» կողմնակիցները, և Վեհափառ տեսական դիրքորոշումն ունի, անտարակոյս, իր բնագիտական, հասարակական և իմաստափական պատճառաբանությունները։ Կարևոր այսուղ այն է, որ մարդը գիտակցությամբ օժիվելով՝ թոյթքածն զարգացավ, ազատության տարբեր ոլորտներ նվաճեց, թեև այս ազատությունը, ինչպես Վեհափառն է հզում, բացարձակ չի եղել, քանի որ մի շաբթ այլ գործոնների հետ միասին, մարդը «իտիսանակ մերենական ձևով ենթարկվելու և հետևելու անոր (իմա՝ ազատությանը—Հ. Թ.), այժմ շղային դրույթուն է, նախկին բնազդներու դրույթունն է, զոր ան կծառայեցնե օրգանիզմի գիտակցականացած պահանջներուն և նոր հպատակներուն» (Յովն տեղում)։

Մինչդեռ նյարդային համակարգի հետ կապված կենդանիների անցյալը, նկատում է հետինակը, այսինքն՝ բնազդը, որպես տեսակային ամրակու կենսափորձ, պահպանվում է կենսարանական մեքենաներուն (տեսակալին) գործողությունների ժառանգական կառանձեկիլությամբ, ապա գիտակցությունը, որը պայմանավորվում է նաև հասարակական կյանքով, հաղորդակցումով, աշխատանքով, լեզվով և հոգեկան այլ բարձրակարգ հատկություններով, հաշիամարդու մոտ եղել է մշուշապատ և միայն բնապատմական և մշակութային երկարատև և բարդ զարգացման շնորհիվ դարձել է հստակ, նպատակավոր և ստեղծարար։ Այս միտքը հիշեցնում է Փրանսիացի աշխարհականական մասնակարծ և իմաստակեր Հանրի Վալոնի այն գիտական հայցաքը, որի համաձայն անհատական զարգացման ընթացքում (օնտոգենեզում) գիտակցությունը լինում է «միջամած», հոգական։ Ի դեպ, Վեհափառը կամքանա է եղել 30-ական թվականներին է. Հեղգելի «կենսագենետիկական օրենքի» (1866) դիրքերի վրա, այսինքն՝ անհատական զարգացումը բազմաթիվ առումներով կրկնությունն է մարդկության պատմական զարգացման ընթացքի։ Այս տեսակետը նոյնպես այժմ ևս ունի իր կողմնակիցները և հակառակորդները։

Գիտակցությունը ընդունելով որպես անձնական «ես»-ի զարգացումի դրսերում և լորախատով ձերբագատում բնազդների, ապակե կոչված, «կաղապարից», հեղինակը անհրաժեշտ է համարում հրա զարգացումը ըստ տարիքային միջվերի, որոնցից լորաքանչյուրի առաջացումը ո՞չ թե մին-

տումն է հայորդի, այլ նրա հիման վրա նոր հարաբերությունների հաստատումը միջավայրի և ինքն իր հետ: Խնչպիսի գիտական օրինաչափորչան հաստատումն է այն խորը, որ՝ «Մարդը, սակայն, իր գիտակցությունով բնության մեջ կյանքի նոր իրականություն մը կհանդիսանա: Գիտակցության միջոցով մարդը կձեռքազատվի բնազներեն, կրածնվի հողեն ու կմոտենա աստվածության, առանց սակայն անոր հասնի կարենալու, որովհետև իր անցյալ կենդանական կյանքովը, բազմարիվ թեկերով կապված կինա հողին, կենդանականին: Մարդը ո՞չ կենդանի է, ո՞չ Աստված: Ու հու է մարդուն և՛ փառքը, և՛ ողբերգությունը» (նույն տեղում, ընդգծումը մերն է—Հ. Թ.):

Հոգու, ոգու, գիտակցության, կենդանականի և աստվածայինի կրողը կոնկրետ մարդն է:

Անձնավորության պրոբլեմը հոգերանության հանգուցային, եղանակային պրոբլեմներից է, որն ունի տեսական և կիրառական կենսական շշանակություն: Նրա մասին առաջացել են մի քանի տասնյակ տեսություններ, վարկածներ տարբեր ուղղությունների և դպրոցների պատկանող հոգերաների կողմից: Անձնավորությունը լինելով բազմաբնույթ՝ նրա տարբեր կողմերի բացահայտմանը ձեռնամուխ են եղել ոչ միայն հոգերանությունը, մանկավարժությունը, հոգերուժությունը և կենսարանությունը, այլ նաև կրոնագիտությունը, աստվածաբանությունը, իմաստափրությունը, բարոյագիտությունը, ընկերաբանությունը, մարդաբանությունը, իրավագիտությունը, ինչպես նաև արվեստները: Ավելին, հոգերանական գիտությունների համակարգի ոչ մի ճյուղ անտարբեր չի գտնվել մարդու անձի բազմապիսի և բազմարիվ կողմերի նկատմամբ՝ սկսած նրա նորմալ և ախտաբանական վիճակներից մինչև ստեղծագործական, աշխատանքային, կրոնական, հասարակական գործունեության դրդապատճանները և գաղտնաբանները:

Անձաւ առումով սկզբներուն շահեկան է Վեհափառի ընթանուր հոգերանությանը վերաբերող առաջին հոդվածներից մեկը՝ «Անձնավորության գաղափարի մասին» վերնագրված տեսական բազմիմաստ աշխատությունը:

Վեհափառը իր ամենատարբեր աշխատափրություններում, հոդվածներում, ճառերում և մտածումներում առաջ է բաշել մարդու անձի և անձնավորության, հատկապես հայի, քրիստոնյայի, մտավորականի, Եկեղեցականի, բաղաքացու, ծնողաց, հայրենասերի անձնավորության, նրանց հոգերանական կառուցվածքի, բովանդակության, առանձնահատկությունների առաջացման և ձևավորման հարցերը, որոնք կապում է բարյական, հասարակական, ազգային, իմաստափրական, իրավական, պատմական գործուների հետ: Անձաւ առումներով անձնավորության մասին նրա հայացքները պետք չեն որությունում, այլ նրա համարյա բոլոր գործերում և մտածումներում:

Ծիշու է, Վեհափառը իր հայացքներում օգտվել է համաշխարհային գիտա-հոգերանական, ընկերաբանական և հայագիտական աղբյուրներից և հատկապես ուսմինական և ֆրանչական հոգերանների երկասիրություններից անձնավորության պրոբլեմը մշակելիս (Ս. Ռադովելսկո-Մուտրո, Ս. Ռազելա, Ժ. Ժ. Ռուտ, Է. Դյուրգինելը և ուրիշներ), սակայն նա ինքնուրում, ստեղծարար և, մենք կատեինք, հայադրոշմ ձևով է մշակում այս հիմնահարցի բազմապիսի կողմերը:

Տարբերակելով վերացական, իրական մարդ-անհատը և նրա իրավունքը ների պատմական ձեռքբերումը՝ Վեհափառ միաժամանակ անձնավորությունը դիտում է կենսարանական, ընթարային և հոգեբանական միանության մեջ՝ որպես նախապայման նրա պատության և բարքենիտրության։ Հոգեբանական վերլուծան ենթարկելով, նա նշում է, որ «մարդը գտած չէ դեռ ինքինը, գտած չէ դեռ իր ճշգրիտ տեղը այս կյանքին մեջ։ ... Մարդը կշարութափ դեռ ինքինը ինտոնել, ինքինը գտնել և հանչնալ» («Գալիքի Տեսիլը», Ուսումնասիրություններ, հոդվածներ, ուղեգործություններ (1933—1954)։ Ս. Էջմիածն, 1988, էջ 17)։ Հենց հաստկապես հոգեբանությունը, որպես գիտություն, օգնում է անհատի անձնավորության ինքնանականացմանը, անձնավորություն, որը դառնում է «տիեզերական ուժին գերագոյն նպատակը ու գոյության բարձրագույն գագաթը» (նոյն տեղում, էջ 18)։

Վեհափառ անձնավորության բազմարովանդակ պրոբլեմը կապում է նրան ձևավորման, կատարելագործման և ինքնակերտման գաղափարների հետ՝ դիմելով պատմությանը, գեղարվեստական գրականությանը, մշակությանը հիմք ընդունելով իրար պայմանավորող և իրար մեջ ներթափանցող ընկերական-հավաքական և հոգեբանական (միջանձնային և ներանձնային) գործուները և իրադրությունները։ Նա սահմանում է ինքնակերտումը որպես «խվական Վահագնյան վերածունդ» (նոյն տեղում, էջ 24), ինքնակերտում, որի մեջ տարբերում է գիտակցության պայքարի երեք հանգրվան (տիպար), ա. Էդիակ Կիպարտակի ճակատագրին, թ. Կարամազովները կրթմունք միջությունը և գ. Ֆառուսը կգտնելու կիրականացնելու միջությունը՝ ասելով. «Կանգ առ, վայրկյան, քանզի դու շատ գեղեցիկ ես»։

Անձնավորության դժվարագույն պրոբլեմի լուծումը, հետևաբար, այն իդեալի որոշումը և կենսագործումն է, որը համապատասխանում է անհատականության բոլոր ուժերի և հնարավորությունների ծաղկմանը, նրա ստեղծագործական ընդունակությունների լիակատար ինքնախրականացումը բաղաբանության մեջ և նրա միջոցով, ենթարկվելով միաժամանակ նրա օրենքներին և պահանջներին։

Անհատի և անհատականության անձնականացած գաղափարից Վեհափառը անցում է կատարում դեպի անձնավորության ավելի ծավալուն և խոր ըմբռնումը, եթե, ընդգծելով, ասում է, որ՝ «Ազգային կարգապահություն ըսվածք ուրիշ բան չէ, եթե ոչ այդ հավաքական անձնավորության գիտակցությունը» (նոյն տեղում, էջ 27)։ Եվ սակայն ընդունելով հանդերձ անհատականության և ազգի անձնավորությունների մեջ իմացական ընդունակությունների, մերհայեցողության, տաղանդի անհատական և ազգային բայուղամասերը՝ Վեհափառը իրավացիորեն վճռական հշանակություն է տալիս այս երկուսի հկարագրին, առաքինություններին, բարուա-կամային գրքոնքներին, որնք ողջաշարն են կազմում հկարագրի և ազգային, և անհատական։ Այս է օրինաչափ հշմարտությունը բոլոր ժամանակների, ազգերի և մեծերի համար։

¹ Վեհափառի՝ ընթանուր հոգեբանությունից ուսումնական ձեռնարկի ստեղծումը Հոգենր Անմարանի ուսանողների՝ համար հիմնականում անհայտ է «Հոգեբանության դասեր» դասագրքի լուս ընծայման հետ։ Առաջին հրատարակությունը եղել է 1961 թ. Սուրբ Էջմիածնում, երկրորդը՝ 1962 թ. Բնայրիթում։ Այս ձեռնարկը հնասորեն բահավոր գիտություն է հոգեբանության հիմնական հարցերի մասին նրա կարդացած դասախոսությունների, որոնք նետ խնամքով գրի են առնված նրա կողմից և ամփոփ ձևով կազմ-

ված: Ինչպես հեղինակն է նշում, նա «օգտվել է ոռության և օտար հոգեբանների գործերից, որոնք նիմք են կազմել իր ուսումնասիրությանց Բուխարեստի պետական համալսարանում իր ուսանողության շրջանին» (1931—1936 տարիներին): («Հոգեբանության դասեր», Ս. Էջմիածին, 1961, էջ 3): Միաժամանակ հեղինակը ավելացնում է, որ օգտվել է ժամանակակից ոռության հոգեբանների գործերից: Միաժամանակ, ձեռնարկից օգտվելու դեպքում դաշտախուններին նա տալիս է մեթոդա-մանկավարժական մի շարք խորհուրդներ և հեարթեր, որոնց թվում հատկապես հետևյալները. ա. Հոգեբանական հարցերը լավագույն ձևով պարզաբնակություն հապատակով ընդլայնված ձևով օգտագործել բազմաթիվ բնորոշ, ուսանելի օրինակներ՝ կյանքի տարբեր իրադրություններից վերցված, բ. օգտվել գիտական նորագույն մասնագիտական գրականությունից՝ դասավանդվող գիտելիքները և փաստերը հարստացնելու և թարմացնելու համար. գ. Ուշադրություն ընելով զննական հյութների տեղին և հետևողական օգտագործման վրա հոգեբանական տարբեր հարցեր բացարելիս. դ. Ուսանողներին համանարարել գեղարվեստական (հատկապես հայ) գրականության ընթերցում խորամուխ լինելու համար երկերի հերոսների հոգեբանության մեջ՝ նրանց բնավորության և վարքի դրական, և՛ բացասական գծերը ավելի ճիշտ ու հեշտ վերլուծելու և ըմբռնելու համար: Պետք է ընդգծել, որ հոգեբանության որևէ դասի արդյունավետության ապահովումը անհնար է առանց վերլիիշչալ դիդակտիկական մեթոդների և սկզբունքների հետևողական կիրառման:

Ինչ վերաբերում է «Հոգեբանության դասեր»-ի բովանդակությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանում ընդգրկված են հոգեբանության հիմնահարցերը՝ համաձայն ձեռնարանական ուսումնական պլանի և ծրագրի. սա հշանակում է, որ դրանում շշափիլու են ժամանակակից հոգեբանությանը վերաբերող և՛ ընդհանուր բնականոն, և՛ ախտաբանական երևոյթների սահմանումները, նկարագրությունները, բացարությունները, դրանց տիպերը (տեսակները), առանձնահատկությունները, ուսումնասիրման մեթոդները և սկզբունքները, ինչպես նաև այդ երևոյթների բնախոսական և անառողմական հիմքերը և մեխանիզմները: Այստեղ պետք է ավելացնել նաև հոգեբանական գիտության հիմնական հյութերը և նրա կապերը հարակից գիտությունների հետ:

Սույն ձեռնարկի ինքնատիկ գծերից մեկն այն է, որ մեղինակը չի հիշատակում հոգեբանական կամ իմաստափրական ոչ մի ուղղություն, ոչ մի դպրոց կամ տեսություն, չի մեջբերում ոչ մի հոգեբանի կամ բնախոսի անուն, այլ պարզապես գիտականորեն վերլուծում, համարդում և ընդհանրացնում է հոգեբանական գիտելիքները, դրանց համակարգը, փաստերը և օրինաչափությունները՝ ակնառու և մատչելի դարձնելով պարզ ու բարդ հոգեկան երևոյթները, դրանց տարբեր դրսուրումները համոզիչ օրինակների միջոցով, որոնք հաճախ ոչ միայն հեշտ են հիշվում, այլ նաև ուսանելի են և դաստիարակելի: Այս ձեռնարկի միջոցով հոգեբանությունը դառնում է անառուն, առարկայական, հոգեբանների տարբեր մերունդների հավաքական փորձարարական և տեսական ուսումնասիրությունների արգասիքը, անկիրք շարադրանքը, պատմա-տրամարանական զարգացման շարահարումը՝ առանց տեսական և փաստագրական, արժեքաբանական սին զնահատումների, ենթադրությունների և ժամանակալիրեալ վարկածների: Այս առումով հման մոտեցումը ուսումնական հյութերի մերկայացման նկատմամբ օգնում է ուսանողին լուրացնելու գիտական բովանդակու-

թյունը՝ առանց խճճվելու խնդրական հարցերի մեջ, որոնք հաճախ առաջանում են տարբեր տեսակետների առկայությունից և առնակատյա բախումից: Այլ հարց է, թե դասախոսը, համաձայն հարցերի բարդության և բազմակարծիքության, լրացուցիչ բացարձություններ է տալիս ուսուցման ժամանակ պրոբլեմային իրադրություններում և ընդհանուր հայտարարի բերում ուսումնական նպատակապահ հավաքական բնեարկումը:

Սվետորդ չէ այստեղ եշել, որ ֆրանսիական հոգեբանության տիտաններից Հանրի Պիերոնը 1928 թ. իր «Փորձարարական հոգեբանություն» մենագրության մեջ նոյնպես, առանց հոգեբանների և հոգեբնախոսների անուններ օգտագործելու, ստեղծել է փորձարարական հոգեբանության ամբողջական համակարգ՝ այն վերածելով գիտելիքների, սահմանումների, սկզբությունների, մեթոդների և տեխնիկական-լաբորատոր գործիքների ընդհանուր, միասնական կառուցվածքի:

«Հոգեբանության դասեր» դասագիրքը հիմա էլ ճեմարանական ուսանողների կողմից սիրով ընթերցվում է և հանդիսանում առույգ, հուսալի աղբյուր հոգեբանական ճանաչողության և հետաքրքրությունների մշակման համար:

Բացի ընդհանուր հոգեբանության վերաբերյալ հայացքներից, Վեհափառ մշակել է նաև մանկավարժական և հայ ազգային հոգեբանության միշտը հարցեր, որոնք առանձին հոդվածի նյութ են կազմում:





ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՍԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

«ԶԱՍՏՈՒԱԾ ՓԱՌՈՒԵԼՈ ճԱՄԲԻՆ ԵԱ ԳՈՒԱՅ Ս. ԷՉՄԻԱՅԻՆԸ ու իմ Հայ-
րենիքը եւ խոնարհուեցի ճակատագրի առաջ: Վազգէն Ա»:

Սիրելի Վեհափառ Տեր,

Մրբ. Հայրեր, տիկնայք ու պարունայք,

Թոյլ տվեք շրաժանել Վեհափառ Հոր այս կարծիքը: Վեհափառ Տեր,

Աստված ողորմած եղավ մեր հանդեա, Զեր ժողովրդի հանդեա. գուալ Զեզ
ու բերեց և գիտեր, որ բերում է չարչարելու, տանջելու մեր փրկության հս-
մար: Բայց Տերը գիտեր նաև, որ փոխառուց է լինելու, որ Զեզ էր տնօ-
րինված հրաշագործ մի աշխատանք, ինչպես նաև բախտը՝ տեսնելու և
օրինելու հայ ժողովրդի հազարամյա երազանքը՝ ազատ ու անկախ Հայա-
տանի հոչակումը:

Երեսունութ տարին հազարամյակների մեջ մեծ թիվ չէ, բայց այդ ըն-
թացքում կատարված աշխատանքը և՛ ծավալով, և՛ բոլորակությամբ կը-
հիշվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության մեջ որպես զարմանահրաշ
մի ժամանակաշրջան, երբ անհամադեա ծաղկում ունեցան մշակույթի բոլոր
ասպարեզները, այդ թվում նաև՝ առջատոր:

Մեր գնահատականը ճիշտ կընկալի, եթե նախապես մի փոքր անդ-
րադառնանք այն խնդրին, թե ինչ ժառանգություն հասավ Վեհափառ Տի-
ռոշը, և ինչպիսին էր իրավիճակը Մայր հողի վրա և Մայր Աթոռ Ս. Էջ-
միածնում: Այստեղ տիրում էր անտարբեր և անբարյացակամ պետական
կեցվածք, հիմնականում թելադրված կենտրոնից, բնականեն զարգացման
ճանապարհները փակ, արգելակումների և վախի մեջ՝ հազիվ լսվում էր Հայ
Ոռորեկական Եկեղեցու զարկերակի բարախումը:

Ամենայն Հայոց Հայրապետը ամենից առաջ պետք է գտներ
և ապա փորձեր շարունակել անցյալից Եկող կապերը, առանց որոնց
անհնարին էր Եկեղեցու լիարժեք գործունեությունը: Մեր ժամանակներում
անհրաժեշտ էր նաև նորովի գնահատել և վերականգնել այն ամենը, ինչ
հավաքված էր Մայր Աթոռում հեռավոր ժամանակներից, նրանց տպով
նաև գիտական արժեքավորում:

Նախկինում հայ մշակույթը հիմնականում գործել է Եկեղեցու շորջ՝
հաղորդելով ստեղծագործություններին գործածական, կիրառական իմաստ,

Անդրգրավելով մեծ մասամբ ժողովրդական վարպետներին: Պրոֆեսիոնալ-ները գործի մասնակցել են առիթից-առիթ, իսկ հայկական գուղքօջախներին պատվիրելու համ կատարված նվիրատվությունները կրել են տեղի կնքը: Եվ այս է պատճառը, որ արվեստի շատ գործեր չեն, որ ճեղքի են հոգեւոր շրջանակը՝ մտնելու համար ընդհանուր մշակույթի ոլորտը:

Հաստատենք, որ Վեհափառ Տիրոջը հաջողվեց ոչ միայն իրագործել վերը նշյած խնդիրները, այլ նաև կյանքի կոչել, կննդանացնել ասպարեզներ, որոնք համարվում են կորուված կամ մեռած:

Այս 38 տարիներից 34-ում են եղան այդ աշխատանքների մասնակիցը և ականատեսը այդ տարիներին ստեղծվեցին եկեղեցական արվեստի բազմաթիվ գործեր, որոնք մտան նաև հայ աշխարհիկ արվեստի հարսանությունների մեջ:

Վեհափառ Հայրապետը ամենից առաջ ձեռնամուս եղավ դուրս մղելու եկեղեցիներից օտար, պատահական, ցածրանաշակ արվեստի գործերը՝ սկսելով Մայր տաճարից: Նրանց տեղը գրավեցին մեր դասական նկարչության հեղինակների սրբապատկերները, նոր գործված վսրագույրները, խաչվառները, մոմակալներ և եկեղեցական այլ պարագաներ՝ հավասի տըներին Անրարկենով հայաշոնչ ոգի:


Այս գործի համար պետք եղավ պետությունից ետ ստանալ եկեղեցական նկարչության զգալի թվով գործեր, որոնք ժամանակին բռնազարդվել են: Դրանք վերականգնան ու նորոգման աշխատանքներից հետո գետեղվեցին համապատասխան տեղերում: Այս աշխատանքները կատարվեցին Սահկու-Պետերբուրգի հրավիրված մասնագետների կողմից:

Կցանկանայի ձեր ուշադրությունը թենու այն ասպարեզների վրա, որոնցում գործեցին պրոֆեսիոնալ արվեստագետները՝ նոր որակ հաղորդելով Մայր Աթոռի արվեստի գործերին:

Նախ թվարկենք ասպարեզները՝ հրատարակչական գործ, նկարչություն և քանդակագործություն, ոսկերչություն ու արծաթագործություն, տաք մետաղի մշակում, փայտարվեստ, գործվածքեղեն, թանգարանների բարեկարգություն և հիմնադրություն:

Այժմ կանգ առնենք այն ասպարեզների վրա, որոնք նորույց են մեզանում՝ շատ հնում թողած լինելով իրենց հետքը: Նախ նշենք վաղամենիկ Ակարիչ Հովհաննես Մինայանի որմանակարները Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, առաջին և լուրջ, ինչպես նաև խոչը և հաջող փորձ՝ վերականգնելու անցյալի ավանդույթը: Դրան հաջորդեց տաք մետաղի մրշակման զարթոնքը: Մի արվեստ, որից մատուցեն ունենալը թանգարաններում և Հեթում թագավորի ջահը՝ պահպանված Էջմիածնում: Հրաշալի մոմակալներ՝ Մայր տաճարի և Նոր Վեհարանի համար, չափեր, ցանցանդեր (արվ. Վ. Օհանյան), հայաշոնչ գործեր, որոնք դարձան ելակետ, և այսօր մեր մշակույթի այդ ժամանքը ապրում է լիարժեք կյանքով:

Էջմիածնում կատարվեցին առաջին և լուրջ փորձերը՝ ստեղծելու հայան կահույք թե՛ եկեղեցիների ներքին հարդարանքի և թե՛ վանական շինությունների համար: Դրանցից նշենք Ս. Հովհաննես վանքի դռներն ու մոմավաճառի սեղանը, ապա վանքի բակում գտնվող վանատան և սեղանատան ներքին կահավորումը, ինչպես նաև Էջմիածնի Մայր տաճարի ներքին կայքը, սա զարթոնք է փայտարվեստի, որտ անկասկած կունենա իր շարունակությունը և ազդեցությունը, (Ակ. Գ. Խանջյանի համագծերով, վարպետներ՝ Տեր-Թաղենույան և Վ. Կարապետյան): Եվ վերշապես գործվածքեղենի



Ա. ՄԵՍՐՈՎ ՄԱԶՄՈՅ

մասին: Գորգերով, ասելնագործություններով, վարագույրներով և այլ գործներով Մայր Աթոռող հարուստ էր, սրաց ավելացավ գորելենը, այս արվեստը մեզ մոտ չի եղել. ասում են գորելենը ցուրտ կամ սառը երկրի մշակույթ է:

Արդիական գորելենի արվեստը պաօք Հայաստանում կա և զարդարությունը, բայց դասականը նորույթ էր, որը իրագործվեց Վեհափառի կամքով «Խօման տեսիլք», «Հայոց այբուրեն», «Վարդանանք» և «Վերածնվող Հայաստան» գործերով (Ակ. Գ. Խանջյան): Այս գործերի ժերմ ընդունելությունը մեկ անգամ ևս ապացուցեց, որ Վեհափառ Հայրապետը քաջ գիտե, թե ինչ է ուզում, ինչի համար և երբ: Ես կարծում եմ, որ բոլոր արվեստագետները, որոնք աշխատակցում են Վեհափառ Տիրոջ նետ, կասեն, որ նրա նետ աշխատելը հեշտ է, քանի որ նրա իմացական աշխարհը մեծ է, միաժամանակ նաև՝ դժվար, քանի նորից նրա իմացական աշխարհը մեծ է:

Աննախադեպ ծաղկում ապրեցին ոսկերչական և արծաթագործական ասպարեզները: Այստեղ գործեցին այնպիսի վարդետներ, ինչպիսիք են՝ Փ. Չոլոյանը, Բ. Արզումանյանը, Լ. Բերբերյանը, Մ. Թամրազյանը: Ոչ միայն այս ժամանում, այլ նաև մյուս ժամաներում գործած վարդետների, արվեստագետների անուններն ու նրանց կատարած աշխատանքները են չեմ թվարկելու. դրանք մանրամասն մեկնարանված են պրոֆեսոր Վ. Հարությունյանի «Եկայր շինեսցոյք» գրքում, բայց չեմ կարող մի քանի խոսք չառել Բ. Արզումանյանի և Ժ. Չոլոյանի ստեղծած գործերի, հատկապես «Հայոց այբուրենի» «Ռոկք խաչի» մասին, որոնք նորու նորու եկան Մայր Աթոռի շրջանակներից և մտած մեր արվեստի գանձերի շարքը: Այս աշխատանքներում առկա են գեղագիտական հորինվածքի բարձր թոփշը և կատարդական անթերի վարպետությունը: Դիտողները ոչ միայն հմապվում են վերը նըշվածով, այլև նրանց զարմացնում է հայ մողովոյի բացառիկ սերը դեպի իր այբուրենը: Իզուր չե, որ ասվել է՝ ոսկոց ամեն քան տեսել էկաք աշխարհում, բացի այբուրենից: Ժամանակը չի ներում, որպեսզի առանձ ինունմ բազմաթիվ եկեղեցական գավազանների, մատանիների, խաչերի, կաթուանների, աղավնիների մասին, որոնցից յուրաքանչյուրը արվեստի ուշագրավ երևույթ է և գալիս է լրացնելու այդ ժամերի արժեքների հավաքածուն:

Հրատարակչական գործունելությունը, որը միշտ եղել է Մուրք Էջմիածնի ուսադրության կենտրոնում, Վեհափառի օրոք մի նոր թափ և որակ ստացավ. եղան հրաշալի լուսընծայումներ, որոնցից միայն երկուսը կնշեմ «Խաչքարերը» (Բեղ. Լ. Ազարյան) և «Էջմիածնի գանձերը»: «Խաչքարեր» գիրքը առաջին փորձ էր կազմելու ընտրված և ի մի բերված խաչքարերի մի արում համատեղ տեսնելու համար հայ մշակովիք եղակի այդ կորողները: Դա հնարավորություն էր տալիս մասնագետներին թե՛ հայ և թե՛ օտար, լայնորեն ծանոթանալու և գնահատելու քանիակագործական արվեստի այդ յուրահատուկ ստեղծագործությունները: Խակ «Էջմիածնի գանձերը» ոչ միայն գրքային արվեստի նվաճում էր, այլ նաև մեծ ու փառավոր տարածումը հայ եկեղեցական արվեստի սրանչելի ստեղծագործությունների: Ըստ քերը թերեւս գիտեն, որ Լիսաբոնի Կյուլպենկյան հաստատությունը 100 համարակալված օրինակ պատվիրեց այդ գրքից և տարածեց աշխարհի կարևոր մշակութային կենտրոններում այդպիսով այն սեփականությունը դարձնելով աշխարհի արվեստաեր հասարակականության:

Եպ, վերշապես, թանգարանային վերանորոգման և հիմնադրման դըմքարին ասպարեզը, որը վեր է ամեն գնահատականից: Այդ մասին հանգա-

մանրեն կխոսի արվեստաբան Մանյա Ղազարյանը, բայց ես չեմ կարող շանել, որ այս կարևոր գործը կատարյալ դարձրեց եկեղեցական արվեստի հայաշունչ դեմքը՝ այցելուներին գերելով հայ ժողովրդի բազմաշնորհ ունակություններով և նրա հոգու գեղեցկությամբ:

Անգնահատելի է Ամենայն Հայոց Հայրապետի վաստակը: Նա իր գահակալության 38 տարիների ընթացքում հայրենիք վերադարձրեց արվեստի բազմաթիվ գործեր՝ նկարներ, գործվածքներ, քանդակներ, ձեռագրեր, նշանավոր հայ գործիչների արխիվներ: Ականատես եմ եղել, թե ինչպիսի գգայտն վերաբերմունք էր ցուցաբերում Հայրապետը յուրաքանչյուր գործի նըկատմամբ, ինչպիսի անհանգստություն էր ապրում, մինչև որ այն կարողանում էր հասցնել հայցեատիրոջը: Այդ գործերի թվում են եղել Այվազովսկու, Մախոյանի, Մահտեսյանի, Ալիազյանի և այլոց գեղանկարները, ինչպես նաև Թորոս Ռոսլինի և անանուն գրիչների ու մանրանկարիչների ձեռագրեր:


Այս ամենը արվել է 38 տարիների ընթացքում, հսկողության և երկրության գգացողության տակ, բայց պեսք է ազնիվ լինել և ասել, որ Վեհափառի ոչ մի ձեռնարկում և ցանկություն չի մերժվել տուայիտար հասարակարգի հայ դեկավարների կողմից: Սակայն դա չէր խանգարում, որ Կենտրոնից եկած շրջաբերականերով հաճախ խափանվեր կամ արգելվեր այս կամ այն գործը: Կատարվել է մեծ աշխատանք՝ շնորհիվ Հայոց Հայրապետի իմացության, իմաստության, նվիրումի, անխախտ հավատի և անձնական նմայքի:

Սիրելի Վեհափառ Տեր, թույլ տվեք նվաստիս վերջացնել սաելիքս Աստվածորդու՝ Քրիստոսի հետևյալ խոսքերով—«Ես չասացի, որ դուք չեք չարչարվի, ես չասացի, որ դուք չեք տաճչվի, այլ ես ասացի, որ դուք կհալթեք»:

Վեհափառ Տեր, Դուք հաղթեցիք և դեռ պիտի հաղթեք:

Աստված թող Ձեզ պահի և պահպանի Մայր Աթոռի և հայ ժողովրդի համար:





ՊՐՈՖ. ՎԱՐՍԶԴՎԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նախագահ Մայր Աթոռի
ճարտարապետական հանձնաժողովի

ՄԵՐ ՇԻՆԱՐԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ (Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի ծննդյան 85-ամյակի առթիվ)

Դարերի ընթացքում հայ կաթողիկոսներից շատերը իրենց կրոնա-մշակութային ազգանվեր գործունեությունը զուգակցել են շինարարական գործունեության հետ ու պատմության մեջ բարի հիշատակ թողել: Միայն Ներսէս Գ Կաթողիկոս՝ Զվարթնոցը կառուցողն է նրանցից արժանացել շինարարի կոչման:

Մեր ժամանակներում ավելի լայն ընդգրկումով այդպիսին եղավ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ն: Մուրը Լուսավորչի գահածառանց դառնալու առաջին իսկ տարվանից (1955 թ.) առ ովտեց. «Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերազարդելու մեր հայրենի սրբավայրերը, վանքերը և եկեղեցիները, որպիսիք են Ս. Գայանեն, Խոր Վիրապը, Օչականը, Ս. Գեղարդը և որիշները, որոնք հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան և հրոշակած տաճարներ աղոթքի և ովտի ու զմայելի հուշարձաններ հայ ճարտարապետության փառքի»:

Խոսքը գործի վերածելով՝ իր գահակալության բոլոր տարիներին Վազգեն Ա-ն ծավալեց աննախադես լայնընդգրկուն ու բազմաբնույթ շինարարական գործունեություն: Եթե Ակատի ունենանք, որ դա իրագործվեց այնպիսի ժամանակներում, երբ բովանդակ երկրում դեռևս իշխում էր կրոնահալածու կաշկանդիչ մթնոլորտ, և պա Վազգեն Ա. Կաթողիկոսի կառուցղական իրագործուները հիրավի սիրանք պիտի համարվեն:

Նա կարողացավ իր շինարարական ծրագրերն իրականացնել՝ անհրաժեշտ հյութական միջոցներ ապահովելով սիլուռի առանձին կազմակերպությունների ու մեծ թվով բարերարների (որոնց անունները թիշատկված են ոոր Վեհարանի պատին փակցված մարմարա տախտակներին) կատարած հվիրատվություններից, ինչպես նաև մասնահանում կատարելով Եկեղեցու եկամուտներից:

Նկատի ունենալով, որ գործ է ունենալու հայկական պատմա-ճարտարապետական մեծարժեք հուշարձանների հետ, ուստի խոսափելու համար հնարավոր սխալներից ու ցանկանալով ապահովել մասնագիտական պատշաճ մակարդակ, ևս խնդրեց Հայաստանի Կռուպարությանը 1956 թ. իրեն տրամադրել խորհրդատու մի հանձնաժողով։ Դրա անդամները եղան վաստակավոր ճարտարապետ Միքայել Մազմանյանը (նախագահ), ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Վարագրատ Հարությունյանը (գիտական քարտուղար, 1971 թվից՝ նախագահ), Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Բարեկան Սոռքելյանը, ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Խորաբելյանը, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, պատմական գիտությունների դոկտոր Կարո Ղաֆարյանը, ճարտարապետության դոկտոր Հովհաննեսյանը, ճարտարապետության թեկնածու Ալեքսանդր Սահինյանը, վաստակավոր ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը, վաստակավոր Ժինարար, ինժեներ-կոճարուկոտոր Կոնստանտին Ալթունյանը և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գայիկյանը։

Հանձնաժողովի կազմը բարերար դեր կատարեց շինարարական տաղբեր տեսակի իրագործությունների նկատմամբ լիարժեք մասնագիտական ու մեթոդական հսկողություն սահմանելու, քննարկվող նախագծերում ու կոունյունական հարցերում խորամուխ լինելու առումով։ Ի սկզբանե, որպես այդ հանձնաժողովի անդամ, հարկ եմ համարում նշել մի կարևոր ճշմարտություն։ Կաթողիկոս Վազգեն Ա-ի շինարարական գործունեության արդյունքները թերևս այնպես փայլուն չեն լինի, եթե Հայաստանի պետական մարմինները ձցուցաբերենին մշտական աջակցություն։

Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի վթարային վիճակը վաղուց մոտահանգույթուն էր առաջացրել։ Այդ մասին Գնոր Զ Շորեցյանը մի քանի անգամ լիմել էր Վերադաս մարմիններին։ Նրա մահվանից հետո, նախքան նոր կաթողիկոս ընտրությունը, 1954—1955 թթ. Հայաստանի կառավարության շահերերով ու միջոցներով Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում իրականացնեցին կոնստրուկտիվ համակարգի հուսափի ամրացման, ողջ կառուցվածքի վերանորոգման, կտորի թիթեղապատման, որմնանկարների վերականգնման և լրացման ու այլ կարգի աշխատանքներ։*

Սակայն նախատեսված աշխատանքը դրանցով սպառված չէր։ Այս կատարիեց Վազգեն Ա-ի գահակալության տարիներին, շնորհիվ հայ մեծ բարերար Գալուստ Կյուլպենիլյանի 400 հազար դոլարի չափով տրամադրած միջոցների։

Նախքան աշխատանքների ծավալումը, ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանը տաճարի ընդհատակում կատարեց պեղումներ, որոնք պահպեցին գիտական կարևոր հայտնագործություններով։ Դրանից հետո տաճարի հատակները (գերայալ խորանները, ավանդատներն ու քանդարանակին մասի սենյակները) սալարկվեցին մարմարով։ Տաճարի պատերի կրողունակությունը վերականգնվեց, դրանց մեջ հեղուկ շաղախի ներարկման միջոցով։ Ըստ արագետական առեղծագործության մի հրաշալի կոթող եղավ Ռաֆայել Խորաբելյանի նախագծով կառուցված Ավագ խորանի մարմարակերտ խաչկալը։ Նույնական նկարագրով են բնութագրվում նրա էսքիզներով իրականացված հշման սեղանը, դասը ատյանից անջատող մարմարյա բազդիքները

* Այս մասին տես Վարագրատ Հարությունյան, Էջմիածնի Մայր տաճարի հիմնական վերանորոգումը, «Լրաբեր հասարակական գիտությունների»։

ու բրոնզաձուլլ դունակները: Տաճարի ներքին բարեգարդման մաս կազմեցին լուսամուտների երկարյա վանդակները (պատրաստված Գրիգոր Խաչեցյանի էպիգլուֆով), մկրտության նոր պահանջ (ճարտ. Ա. Գալիլյանի նախագծով), դրա պատիճ ամփոփված դրմանկարը Քրիստոսի պատկերով (Ակարիչ Հովհաննես Միհևայան), բյուրեղապալյա նոր ջամերը և այլն: Նոր ու հնշելով զանգերով փոխարինվեցին Մայր տաճարի նիւ զանգերը: Դրսից տաճարի բոլոր կոյմերի հարթակները սպառկվեցին, ու շրջապատը բարեկարգվեց: Սվելի ուշ լիովին վերականգնվեց տաճարի հարավային զանգակատունը, որը փուլ էր եկել 1921 թվին ու վերականգնումը մնացել էր թերավարության մեջ:

Չուգամենաբար վերականգնման ու բարեգարդման աշխատանքներ կատարվեցին Մայրավանքի տարածքում գտնվող շենքերում, սկզբեցին կառուցվել ենորերը: Սուանձնապես հիշատակության արժանի են նիւ և նոր Վեհարանների ու Ղազարապատի միարանական սեղանատան, ինչպես նաև ավանդական Տրդատա դռան վերականգնման արդյունքները: Կիսափարխուղ կամ շարձիթողի վիճակի դրանք հատնեցին իրենց ճարտարապետական կոր հրճչեղորժամբ, ներքնամասների տեսքի հոյակապությամբ, շինարարական բարձր որակով:

Նորոգվեցին տպարանի, ճեմարանի և Երեմյան խցերի շենքերը, դրանցից առաջինը լրացվեց երկրորդ հարկով, երկրորդին կցալառուցվեց նոր մաս: Մայրավանքի բակի հարավային պարագիծը լուսացվեց հյուրանոցի նոր շենքով, իսկ հյուսիսայինը՝ ժամացույցի աշտարակով: Բակի կանաչապատման և ընդհանուր բարեկարգման մաս կազմեցին Եղեննի հուշարձանն ու «Կարճաղբյուրը» (ճարտ. Ռ. Խարայելյան), Մկրտիչ Խրիմյան Կաթողիկոսի հիշատակին նվիրված «Ծերեկի» աղբյուր-հուշարձանը (ճարտ. Արեգ Խարայելյան):

Կանաչապատման և բարեկարգման նույնպիսի աշխատանքներ կատարվեցին Նոր Վեհարանի բակում: Տեղադրված ճարտարապետական փոքր ձևերի ու «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» հոյակապ շենքի տեղադրությամբ բակը բերվեց վերշնական բարետես վիճակի:

Սյսպիտվ անցավում անբարետես վիճակում գտնվող Հայոց Առաքելական Եկեղեցու Կենտրոն Սուրբ Էջմիածնի Մայր տաճարն ու Մայրավանքի ողջ համալիրն ստացան իրենց արժանի ու վայելու տեսքը՝ դեպի իրենց գրավելով հավատացյալների ու հյուրերի տարեց-տարի ավելացող բազմությունը:

Հետագա տարիներին Վեհափառ Հայրապետի շինարարական գործունեությունն ընդգրկեց գործող բազմաթիվ վանքեր ու եկեղեցներ, ու այդ ողջորդյամբ նույնական բացառքը բացառիկ հարուստ եղավ: Ներկա հաղորդաւայր հնարավոր չէ թեկուզ հակիրճ կերպով անդրադանալ դրանցից ամեն մեկում կատարված աշխատանքին (այդ մասին ավելի մասրամաս տեղեկություններ են բերված Վազգեն Ա-ի գահակալության տարիների շինարարական գործունեության պատմությանը նվիրված մեր «Եկայր շինեցուը» գրքում՝ լույս տեսած 1989 թվին), ուստի ստորև ներկայացնում ենք միայն այդ վանքերի ու եկեղեցների թվարկումը:

Էջմիածնի սուրբ Հոյփսիսէ տաճարութ և բակում կատարվեցին վերանորոգման ու բարեկարգման մեծածավալ աշխատանքներ: Տաճարի ներսում Ալեքսանդր Սահինյանի դեկուվար ո թամբ կատարված պետք և բով Ա Ապես գիտական կարևոր հայտնագործություններ եղան, իսկ տաճարի արևելյան

կողմում բացվեցին ավելի հիմ մատուի մնացորդները: Հիմնական վերանդրության ենթարկվեցին սուրբ Գյոյաներ տաճարը, Էջմիածին քաղաքի սուրբ Ծողակար և սուրբ Աստվածածին եկեղեցիները (վերջինիս կցակառուցվեց մի նոր զանգաշտարակ), բոլորի բակերը բարեկարգվեցին, իսկ սուրբ Գյոյաներ տաճարի բակում կառուցվեց մատաղատան շենք:

Վեհափառ Հայրապետի հասողկ ուշադրության առարկան դարձավ Զավականի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Հիմնովին վերակառուցվեց ու բարեզարդվեց մեծ սրբի դամբարանը, եկեղեցու պատերը ծածկվեցին բարձրարվեստ որմնանկարներով, որոնց հեղինակն է նկարիչ Հովհաննես Մինասյանը:

Հիմնական վերակառուցման ենթանի առաջնորդանիստ սուրբ Սարգիս եկեղեցին, որի կողքին կառուցվեց առաջնորդարանի շենքը: Սուրբ Սարգիս եկեղեցու վերակառուցումը մեծածախ ու աշխատատար եղավ: Այն կատարվեց լոնդոնաբնակ բարերար Սարգիս Քյուրքյանի տրամադրած նյութական միջոցներով, բարդ ու հետաքրքիր մի նախագծով, որի հետինականը էին ճարտարապետներ Ռաֆայել Խարաբյանն ու Արծրուն Գալիկյանը: Եկեղեցու արտաքին պատերի բարձրարվեստ բանդակապատումը կատարվեց շնորհալի բանդակագործ Արտաշեն Հովհեփիյանի կողմից: Ինչպես Աշեց նրա օճման առիթով Վազգեն Ա կաթողիկոս իր քարոզում, սուրբ Սարգիս եկեղեցու վերակառուցմամբ «քաղաքամար Երևանն օժնվեց մի նոր զարդով, հայկական ճարտարապետության մի նոր կրթողով, աղոթքի սրբանշելի նոր սրբավայրով»:


Տարիների անդույ շանքերով պատշաճ տեսրի բերվեցին Գեղարդավանքի ու Խոր Վիրապի վանական համալիրները, Էջմիածնի Ծողակար, Երևանի Զորավոր և սուրբ Հովհաննես, Բջնիի սուրբ Աստվածածին, Սիսականի սուրբ Հովհաննես, Խորագավթի սուրբ Գևորգ եկեղեցիները:

Մասնակի վերաշինության ու նորոգումների ենթարկվեցին Աշտարակի սուրբ Մարինե, Մրգավանի սուրբ Հակոբ, Նոր Բայազեղի քաղաքացին, Վարդենիսի սուրբ Աստվածածին, Գյումրիի Ցոթ Վերք, Հրազդանի սուրբ Աստվածածին, Հովհեփերյանի և Ստեփանավանի եկեղեցիները:

Համապատասխան ուշադրություն դարձեց նաև Աերքին սփյուռքի եկեղեցներին: Վերանորդման ու բարեզարդման աշխատանքներ կատարվեցին Ախոցայի, Ախլքալաքի, Թրիլիսի սուրբ Գևորգ և սուրբ Էջմիածն, Բաքվի, Կիրովարատի, Օրջոնիկիձեի, Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի հայկական եկեղեցիներում:

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը եկեղեցաշինության ասպարեզում օգտակար եղավ նաև սփյուռքին՝ այդ գործում ներգրավելով հայրենիքի փորձառու ճարտարապետներին: Միլանի սուրբ Քառասուն մանկանց և Նյու Յորքի սուրբ Վարդան եկեղեցիների եսքիզային նախագծերի հեղինակը տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Խարաբյանն է, Մոնտեվիդեոյինը՝ նոյն Ռաֆայել Խարաբյանն ու տղերի հեղինակը: Վիեննայի սուրբ Հովհաննես եկեղեցին կառուցվել է վաստակվոր ճարտարապետ Էդվարդ Մրացյանի նախագծով:

Նշված նախագծերը նոյնապես անցել են Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի քննարկման բովով. արված դիտողությունների հիման վրա դրանք հեղինակների կողմից վերամշակումների են ենթարկվել, ապա հանձնարարվել իրականացման համար:



ԽՈՐ ԿՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Նոր շենքերի նախագծման ու կառուցման գործում շինարար Կաթողիկոսի Աերդրած ջանքերը նույնպես արժանի են հիշատակության։ Առակառույց շենքերի թվին են պատկանում Գեղարդավանքի վանատունը (ճարտ. Ա. Գալիկյան), «Հայկաշեն» ամառանոցի շենքը Բյորականի մերձակայքում (ճարտ. Ռ. Խորաբելյան), Մայր Աթոռի վանատունը և «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատան» շենքը, որտեղ ատեղծվեց իրոք եկեղեցական արվեստի գանձեր պարունակող մի թանգարան (երկուսն էլ ճարտ. Բ. Արզումանյանի նախագծով), Արարատյան թևմի առաջնորդարանի շենքը Երևանի սուրբ Սարգիս եկեղեցուն մոտ (ճարտ. ճարտ. Հ. Խաչատրյան, Ա. Գալիկյան): Երիցատներ են կառուցվել Աշտարակի Մարինե, Հրազդանի սուրբ Սատվածածին, Էջմիածնի Շողակաթ և սուրբ Սատվածածին, Երևանի Զորավոր եկեղեցիների բակնում, աղբյուր-հուշարձաններ՝ սուրբ Էջմիածնի տաճարի և նոր Վեհարանի, սուրբ Հոփիսիմե, սուրբ Գայանե, Շողակաթ եկեղեցիների բակերում ու Գեղարդավանքում։ Մատաղատուն է կառուցվել սուրբ Գայանե տաճարի բակում (ճարտ. Ա. Գալիկյան), նոր զանգաշտարակ՝ Էջմիածնի բաղարացին սուրբ Սատվածածին եկեղեցուն կից (ճարտ. Թ. Գևորգյան), տնտեսական բնույթի շենքեր՝ Մայրավանքի հարավային կողմից բակերում։

Այսպիսի արդյունավետությամբ է բնութագրվում Վեհափառ Հայրապետի ոչ լիկ հիշատակված շինարարական գործունեությունը, որն արժանի է բարձր դրվագատանքի։

«Ի վայելումն ազգին Հայոց» բառերով են ավարավում Վեհափառ Հայրապետի շինարարական արձանագրությունները։ Դրանցում մեծ խորհուրդ կա, քանզի իր կառուցղական իրագործուները արժանահիշատակ պարզեցին հարազատ ազգին, այնպիսի պարզեց, որով առ ծանրակշիռ Աերդրում է կատարել հայկական հուշարձանների վերականգնման ու հայ ճարտարապետության զարգացման ազգանվեր գործում։

Արվեստաւոր և արվեստներին հովանավոր Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինի գահակալության տարիներին զգայիրեն հարստացան Մայր Աթոռի պատկերասրամը և գեղարդվանքի սուրովեցիք եկեղեցական գեղանկարչության և սպասքի, նկարազարդ վարագույրների, եկեղեցական հանդերձանքի և մետաղամշակման հազվագյուտ նմուշներ։ Նկարիչ Գրիգոր Խանջյանի չանքերով դրանք հանգրվանեցին «Ալեք և Մարի Մանուկյան Գանձատանը»՝ կազմավորելով ցուցադրման արդիական պայմաններով օժտված մի բացային հարուստ թանգարան։

Ճարտարապետ-նկարիչ Բաղդասար Արզումանյանի էսքիզներով և ուկերիչ Ժիրայր Շոլոյանի կատարմամբ են ստեղծվել հայրապետական ուկելու գավազանը, հայոց ուկեգիր այբուրենք և սուրբ Խաչատրյան գործերը։ Մեծ է եղել նաև նկարիչ Գրիգոր Խանջյանի Աերդրումը։ Նրա էսքիզներով են ստեղծվել «Հայոց այբուրենք», «Վարդանամեք» և այլ գորեկենները, ինչպես նաև ազգային նկարագրով հատկանշվող կահույքի հմուշները։

Զափազանց հարուստ է Վեհափառ Հայրապետի պատվերով և տարբեր արվեստագետների ստեղծագործական ջանքերով իրականացված գեղարդվանքան այլ կարգի գործերի տեսականին։ Դրանց թվին են պատկանում սուրբ Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի նոր վարագույրը (հեղ. Ա. Գալիկյան), Հայ Եկեղեցու սրբերի (Ա. Գրիգոր Լուսավորիչ, Ա. Խաչակը—Ա. Մեսրոպ, Ա. Ներսես Շնորհակի ամուսները կրող եկեղեցական շքանշականները (հեղ. Բ. Արզումանյան), նույն ներինակի էսքիզներով և ու-

կերիչ Ծիրայր Զովոյանի վարպետ ձեռքբերով պատրաստված ուկելող սկիբը և հայրապետական գավազանագլուխը, աղջնակերտ կաթոսաներն ու փայտակերտ գրակալները և այլն: Դրանք բոլորը ստեղծված են ազգային արվեստի պահպանության նորովի մեջնարաննան միտումով: Նույնական բառկանչելելով են բնորոշվում նոր Վեհարանի և Մայր տաճարի բազարությունը ու աթոռները, Հոհիսահմետի վահատան ընդունելորժությունների սրբաթի ողջ կահավորանքը, որոնց հեղինակն է շնորհաշատ նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանդես գալով որպես մեկնասա, մեծ չափով հպատակ է գեղանկարչության, քանդակագործության և կիրառական արվեստի տարրեր հյուդերի զարգացմանը, պարմաներ ստեղծել արվեստի մեծարժեք ու մնայուն նոր գործերի իրականացման համար, որոնցով էապես հարստացան Մայր Մայուսի թանգարանների համարածուները:

Սյուօր Հայոց Հայրապետը առաջացած տարիքում շարունակում է մընալ նվիրյալ շինարարի պատվավոր դիրքում: Այժմ նրա գլխավոր մասնակիությունը Երևանում կառուցվելիք Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարն է, որի հիմնարկեքի հանդիսավոր արարողությունը նա անձանը կատարեց 1991 թ. գարնանը: Տաճարի կառուցումը պիտի ավարտվի 2001 թվին և այն պիտի նվիրվի Հայաստանում քրիստոնեության պետական կրոնակելու 1700-ամյակին:

«Իմ հայացքը ուղղելով դեպի ապագան,—ասաց Վեհափառ Հայրապետը հիմնարկեքը օրինելիս—իմ հոգու աշքերով տեսնում եմ այն հոյակապ տաճարը, որ պիտի բարձրանա այստեղ, և սուրբ խաչը պիտի պլան դեպի երկինք»:

Հուանք, որ կառուցվելիք այդ հոյաշեն տաճարի (նախագծի հեղինակն է Վաստակավոր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանը) օճման արարողությունը նոյնապես կատարի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը:

Ուստի քաջառողջություն և արևշատություն մաղթենք մեր սիրելի Վեհափառին:





ՄԱՆՅԱՅՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՄԵՆՅԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա.Ի ԹԱՆԳԱՐԱՆՅԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հնագույն ժամանակներից Հին Արևելքի երկրներում, ապա և Հունատանում, Հունում և Բյուզանդական կայսրությունում գոյություն են ունեցել գանձատներ: Գանձատները կից էին թագավորական պալատներին, իշխանական տներին, տաճարներին ու վանքերին: Գանձատներում պահպանում էին ինչպես դրամական, նոյնպես և արվեստի բարձր արժեք երկայնականություններ: Ակղքնական շրջանում այդ գանձատներում պահպանվում էին նաև մատյաններ, որոնք ժամանակի ընթացքում առանձնացվեցին, և աղդամուկ ստեղծվեցին դիվանատները: Աղդամուկ գանձատներ կային նաև Հայաստանի քաղաքներում և վանքային համալիրներում Տիգրանակերտ, Արտաշատ, Վաղարշապատ, Դիմի, Անի, Սիս, Աղթամար, Էջմիածին և այլն:

Էջմիածնի վանքի շորու թանգարաններում Մայր տաճարի, Հին Վեհարանի, Նոր Վեհարանի և «Ակեր և Մարի Մանուկյան գանձատանը» կուտակված են Պատմական Հայաստանի արհեստավորության կենտրոններում պատրաստված պղնձագործական, ոսկերչական, փայտի գեղարվեստական փորագրության, ասեղնագործության, դաշագործության, գորգագործության, ինչպես նաև գեղանկարչական բարձրարժեք ստեղծագործություններ:

Էջմիածնի վանքի գեղարվեստական հայտարարությունները կուտակվել են ովհատավոր-հավասարացյալների և վիրատվություններից, վանական-նվիրակների հոգևոր կննություններ այցելելոց, մայրավանքի պատվերներից, ինչպես նաև կաթողիկոսների անձնական նվիրատվություններից:

Հայոց կաթողիկոսները բարձր են գնահատել մայրավանքի ոնեցվածքը:

Թանգարանները շատ ավելի ուշ շրջանի երևոյթ են: Դրանք առաջացել են Եվրոպայում, 15—16-րդ դարերուն:

Սուրբ Էջմիածնում թանգարան հիմնելու գաղափարը առաջացավ 19-րդ դարի 70-ական թվականներին:

Մայր Աթոռի Ս. Էջմիածնի մշակութային վերածնունդը կապված է Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հետ, որի իր բազմակողմանի գործունեության գոգքները հասուն վերաբերմունք է ցուցաբերել դեպի մայրավանքի թանգարանային գործը:

Անցյալում առանձնակի գնահատականի են արժանացել սրբությունները և թանգարածքը մետաղները: Վեհափառ Հայրապետը առաջին անգամ մայրավանքի հարատությունները դիտարկեց արվեստի տեսակետից: Աշխարհ մաս եկած, առաջնակարգ թանգարաններ այցելած, արվեստի գնահատման սեփական ճաշակ մշակած Վեհափառը յուրաքանչյուր ստեղծագործությունները նկատի ունենալով:

Սրբեաստի արժեքների նկատմամբ Վեհափառ Հայրապետն ուներ ուրույն մոտեցում, ամենից առաջ նա գգում էր նյութական և հոգևոր մշակույթների արժեքների միասնականությունը:

Երկրորդ՝ նրա համար գոյություն չունեղ Արևմտյան և Արևելյան Հայատանի արվեստ, ինչպես նաև հայրենի և սիյուռքահայ արվեստագետն: Աշխարհագրական մեծ շրջանակներ ունեցող արվեստի արժեքները նա դիտարկեց որպես միասնական հայկական արվեստ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Էջմիածնի մայրավանքի գեղանկարչական ստեղծագործությունները, որոնք Հովհաննեան տոհմի առաջին երեք սերնդի աշխատանքներն են, դեռևս Խրիմյան Կաթողիկոսի օրոք պոկվել էին Մայր տաճարի և Հին Վեհարանի պատերից, ոլորվել և անհնամ թափվել ավանդատների պատերի տակ: Կիրառական արվեստի ստեղծագործությունների մի մասը դրված էր արկերի մեջ: Դրանք առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղափոխվել էին Սովորվանելու Լազարյան ճեմարանի պահոցներում և միայն 1920-ական թթ. վշրադավել վաճք: Մյուս մասը անհնամ թափված էր ավանդատան անկյուններում, թաղված փոշու մեջ, սարդուտացների հարևանությամբ: Վեհափառ Հայրապետը կարգադրեց այդ ամենը կարգի բերել, վերանորոգել (հատկապես գեղանկարչական աշխատանքները), մաքրել (արծաթով ասեղնագործված խորանի մեծ վարագույրը), լվանալ և համապատասխան դասակարգումով տեղադրել թանգարաններում: Հին Վեհարանում ցուցադրվեցին կաթողիկոսներին պատկանած գալաքանները, նրանց օգտագործած սպասքը, անձնական իրերը, ծիսական հագուստները (շորշառ, վակաս, թագ, խոլոր, բազար, արտախորակներ, հողաթափեր և այլն), ինչպես նաև տարբեր ժամանակներում ստեղծված կաթողիկոսների դիմանեկարները: Նոր Վեհարանի երկու հարկերում տեղ գտան նոր և նորագույն ժամանակների նայ նկարիչների գեղանկարչական աշխատանքները. Գ. Բաշին-Զայյան, Ստ. Ներսիսյան, Վ. Սուրենյանց, Հ. Արլազովսկի, Վ. Մահմույսյան, Հ. Մահմուսյան, Է. Չահրեն, Կ. Աղամբան, Հ. Փուշման, Ս. Սարյան, Հ. Կոչյան, Ե. Քոչար, Գ. Խանջյան, Գաղում, Մ. Առաքելյան, Պ. Կիրակոսյան, Սիհնաւ և շատ ու շատ որիշներ:

Միջնադարյան և ոչ շրջանի հայկական արվեստի հիմնական ստեղծագործությունները համապատասխանաբար ցուցադրվեցին Մայր տաճարի թանգարանում և «Ալեք և Սարի Մանուկյան գտնատանը»:

Որո՞նք են դրանցից ամենակարևորները:

«Հավուց Թառի Ամենափրկիչը»՝ 9-րդ դարի փայտի գեղարվեստական փորագրության գլուխօղործոցներից մեկը, որի վրա պատկերված է Խոսչից Քրիստոսի իշեցման տեսարանը: Այն հետաքրքիր է ոչ միայն ժամանակի սրբապատկերային մեկնարանման տեսակետից, այլև փորագրության բացադրիկ վարպետությամբ: «Խոստակերաց Սուրբ Նշանը» (1300 թ.), որի պահպանակի ծաղկազարդ և սրբանկարչական հարդարանքը ուկերիչ վարպետի և աղջանդի վկայությունն է: Այս աշխատանքը իր պատվալոր տեղը կարող է գրավել ժամանակի ոսկերչական արվեստի համակարգում: «Գրիգոր Լուսավորչի խաչվարք» (1215—1251), որը ծագում է Անֆից և ցուց է տալիս նայոց ասեղնագործական արվեստի այն մակարդակը, երբ թեկերի գունային հարաբերությունները նրբագոյն երանգներով աստղածում են ոչ միայն հորինվածքի մոնումենտալ արտահայտչականություն, այլև՝ պատկերված անձանց դիմանկարչական շեշտվածությունը: Սուանձնակի արժեք են Անրիկայցնում «Փիլիպոս Կաթողիկոսի արծվագորգը» (1651), «Մեծ խորանի վարպետը», որը գործվել է Կ. Պոլոսի նշանավոր նկարիչ, փորագրի և հրատարակիչ Գրիգոր Մարգիսանցու հախանկարներով և Անրիկայցնում է Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրությը:

Ցուրաքանչյուր կրոնական կենտրոն հատուկ արժեքավորում է ստանում իր մասունքներով: Էջմիածնի թանգարաններում պահպանվում են դեռևս 10-րդ դարում պատրաստված մասնատութեր, Աջեր, ինչպես օրինակ՝ Գրիգոր Լուսավորչի, Ս. Թադեոսի, Հակոբ Մծբնա Հայրապետի Աջերը և այլն: Մասնատութերի մեջ հիշատակության արժանի են «Սուրբ Գեղարդի պահարանը», «Նոյի տապանի մասնիկով մասնատությը», Ս. Բարդուղիմեոսի մկոյշի պահարանը և այլն: Սուանձնակի հնատարքություն են Անրիկայցնում ձեռագրերի և ամետարանների պահպանակները, որոնցից մեկը ոսկեճառով է և պատրաստվել է 13-րդ դարում: Նշանակալից են դաշե վարագույնները, որոնց համար պատրաստվում էր միայն մեկ կաղապար և ապա ոչնչացվում: Դրանց պատրաստման կենտրոններն են Եվլոյիան, Մադրասը, Նոր Ջուղան և Դաքքան: Արտավագ հնատարքությունն են Անրիկայցնում տարբեր տեսակի խաչերը՝ խորանի, կրծքի, ձեռաց, որոնց զգալի մասն ընդելուզված է թանձնարժեք կամ կիսաթանկարժեք քարերով: Շապիկների օճիբների, սկիբների ծածկոցների, փորք վարագույնների ասեղնագործությունները Անրիկայցնում են Կեսարիաի, Սերաստիաի, Կարինի, Երզնկայի, Ուրմայի, Կ. Պոլոսի: Կ. Պոլոսի անձնան ասեղնագործական դրառոցները: Աշտեղ հարթակարն ու ուռուցիկ կարը նրբորեն գորգակցվում են տարատեսակ վերադիր կարերին:

Գեղանկարչական ստղածագործությունները մեռավոր հիշատակներ և արթնացնում Ալեքսանդր, Փիլիպոս, Սիրեն և Դուկաս կաթողիկոսների մասսին, որոնք, Մայր տաճարը Ակարազարդելու հապատակով Էջմիածնի հրավիրեցին Նաղաշ Հովհաննեսին և նրա որդիներին՝ Հակոբին և Հարությունին (սրբներ են Ակարազարդել Հիմ Վեհարանի առաստաղն ու պատերը), ինչպես նաև տաղանձավոր գեղանկարիչ Հովհաննես Հովհաննանին, որի շրերթային դիմանկարներն ու թեմատիկ պատկերներն այսօր ել գեղարվեստական հաճույք են պատճեռում դիտողին: Արժեքավոր հարատությունն են Գրանսիական և իրավական արվեստի 17—18-րդ դարերի կոմպոզիցիոն պատկերները, բականյան, իտալո-բյուզանդական և ուռասկան սրբանկարները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» ստացին հարկում հատող մի սրահ է առանձնացված տարբեր ժամանակ-ներում Վեհափառ Հայրապետին նվիրաբերված գեղարվեստական արժեքների ցուցադրման համար:

Վեհափառ Հայրը միայն թանգարաններ չստեղծեց: Նա խոր գիտակցեց թանգարանային գործի գիտական կողմը: Հարկավոր էր քարտադրել, կատալոգային տվյալներով մեծ Մայր Մատոյան ստեղծել, ևս դա հեշտ գործ չէր: Հարկավոր էր լուրաքանչյուր ստեղծագործության համար անձնագիր ստեղծել: Նորին Սրբությունը այդ և իրականացրեց: Այժմ Էջմիածնի մայրավանքի թանգարանների ցուցանուշները հանդես են գալիս իրենց լիիվ գեղարվեստա-գիտական պատկերով, այնպես, ինչպես դա կատարվում է աշխարհի խոշորագույն թանգարաններում:

Այստեղ կարելի չէ չանդրադառնավ և չիշել մայրավանքում թանգարանային մի կարևոր նորամուծություն: Դա ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» գորելենի շռնդալից մուտք էր հայ կերպարվեստ: Հայոց Հայրապետն ուզեց արվեստի նոր գործ ունենալ վաճռում: Դա եղավ նրա նոր ավանդը: Գաղափարն իրենն էր, թեման՝ իրենը, իրագործում՝ տաղանդավոր արվեստագետ Գրիգոր Խանջյանին:


Կողեմ խոսք ավարտել մի շատ սրտառուց օրինակով:

Ինչպես հայտնի է, շատ խնդրատուններ են տալիս Վեհափառ Հոր մոտ: Մի օր նրան տեսնելով ցանկություն հայտնեց գեղշկական հագուստով, լաշակը գիխին մի մամիկ: Հայտնեցին Վեհափառին: Հրավիրեց Նոր Վեհարան և կարգադրեց, որ նրան որոշակի գումար տան: Մամիկը հրաժարվեց ընդունել: Ուզեց Վեհափառ Հորն անձամբ տեսնել: Վեհափառն ընդունեց: Մամիկը՝ Սրբության, համբուրեց Վեհափառ Հոր Աջք, շրջազգեստի ամենատակի շերտի գրանից հանեց մի մին ու կեղտուուշ թաշկինակ, բացեց այն և դրեց Կաթողիկոսի առաջ:


— Վեհափառն Հայր,—ասաց Սրբության,—այս ոսկե՝ մատանիները, շրջաները և մյուս իրենը իմ հարազատներինն են, որոնք թուրքի յաթաղացին զնի դարձան Մեծ Եղենի օրերին: Ես փոքր եղենս լի: Մորս վերջին խորքերը սրանք եղան: «Սրո՞նկ, աղջիկս, վերցրո՞ւ մեր զարդերը և փախի՞ր»: Վերցրեցի ու մի կերպ ազատվեցի մամիկ: Երկար կյանք ևս ապրել: Արդեն կանգնած եմ մահվան շեմին: Ծառ ծանր օրեր եմ ապրել: Ոչ մի իր շեմ վաճառել և ինձ վրա շեմ ծախսել: Արանք իմ հարազատների հագիների խորհրդանշիներն են: Հանձնում եմ Ձեզ: Այստեղ է սրանց տնչը: Իմ հարազատներին եմ հանձնում Ձեզ»: Սրբությի մամիկը նորից համբուրեց Վեհափառի Աջք ու զնաց:

Վեհափառը հոգված էր: Նա մտածում էր: Մտածեց, որ այսպիսի իրերով անհրաժեշտ է հավերժացնել բոլոր ժամանակներում զոհված հայ համատակների հիշատակը: Եվ ստեղծեց «Ուկյա այբուբենը» հայ ժողովրդի հարատևության, լուսավորության խորհրդանշիչը և «Ուկյա Խաչը» հայ ժողովրդի հավատի խորհրդանշիչը: Դրանք այժմ պահպանվում են Նոր Վեհարանում:

Եթե իրոք գոյություն ունեն այդպիսի անձանց հոգիներն այնտեղ, վերաբերում, թող նրանց օրինանքին միանան մեր մալթանքները, որպեսզի Աստված երկար կյանք պարզի Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Երկար կյանք պարզի, որպեսզի մեր ժողովրդի համար այս ծանր օրերին Վեհափառ Հայրը կարդանա իր բարի, ազնիվ, մաքրու սրտով բարեխսու լինել Աստծու առաջ:



ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԻ ՄԱՍՈՒՆՔ



Հ. Ի. ՓԱՓՍԶՅԱՆ

ՄԵԾԱԳՈՐԾ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Հայրապետը բոլորեց իր մեծագործ կյանքի 85-րդ տարին, որի վերջին կեսը, մոտ չորս տասնամյակ, նա զբաղեցնում է Հայ Առաքելական Եկեղեցու Հոլվապետի բարձրագույն պաշտոնը:

Մեր Եկեղեցու 1700-ամյա պատմության մեջ քիչ հայրապետների է վիճակվել այսքան երկարատև գահակալություն և քերին է հաջողվել մեր ժողովրդի կյանքում խաղալ այնպիսի կարևոր դեր, ինչպիսին ունեցավ Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը:

Մեր ժողովրդի վերջին դարների պատմության մեջ նա իրավամբ պետք է դրվի այնպիսի աշանավոր կաթողիկոսների շարքում, որպիսիք են Սիմեոն Երևանցին, Ներսես Աշտարակեցին և Մկրտիչ Խոհեմանը: Նա ստանձնեց այդ դժվարին պաշտոնը մի բեկումնային շրջանում, երբ Եկեղեցու իրավունքների բռնադատման տասնամյակներից հետո, նորից սկսել էր ընդգրծվել նրա դերը աշխարհասիրության հոգևոր և քաղաքական միավորնան գործում:

Վազգեն Ա.-ի մեծագույն ծառայությունն այն է, որ նա խորապես հասկացավ Հայ Եկեղեցուն վերապահված այդ կարևոր դերը և իր Վիթխարի հեղինակությամբ ու կազմակերպչական անդու աշխատանքով աննախընթաց շափով բարձրացրեց Հայ Եկեղեցը հելինակությունը՝ հասցնելով այն համընդհանուր ճանաչման:

Տարագիր հայ արհեստավորի ընտանիքի մինունար գավակը—մկրտության անունով Լևոն-Կարապետ Պալճյան—իր նախնական կրթությունը՝ ստուգական Բոլիարենսի հայոց դպրոցում, բարձրագույն ուսումնառությունը՝ շարունակել է Ռումինիայի Պետական համալսարանի գրականության և Կիբե-

լիսովայության ֆակուլտետում: Այս հաստատություններում նրա ձեռք բերած հարուստ ու բազմակողմանի գիտելիքները մղում էին նրան դեպի կրթական-մշակութային գործունեություն: Դպրոցական-մանկավարժական բեղմնավոր գործունեությանը զուգահետո, երիտասարդ, եռանդուն մտավորականը 1920—30-ական թվականներին հանդես է եկել գրական-մշակութային կյանքի տարբեր ասպարեզներում: Բիմնադրել և խմբագրել է «Հերկ» գիտական, մշակութային և հասարակագիտական ամսագիրը, որտեղ լույս տեսած նրա հոդվածներում շոշափվում էին հայ ժողովրդի պատմության և մշակութային կյանքին վերաբերող խնդիրներ: Երիտասարդ մտավորականի ծավալած մանկավարժական գործունեությունը հայկական դպրոցներում որպես սիրված ուսուցիչ և ապա՝ դպրոցի տնօրեն, բարձր էր գնահատվում տեղի հայ ազգայինների կողմից՝ արժանանալով հարատև քաջալերանքի:

1940-ական թթ. սկզբներին ուսմինահայ գաղութում Լևոն-Կարապետ Պալճանի արժանիքները ընդհանուր ճանաչում էին գտել հասարակության բոլոր խավերի կողմից: Դա արտահայտվեց թեմակալ առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի վախճանումից հետո, թեմական խորհրդի որշմամբ, որով առաջարկվում էր առաջնորդական թափուր տեղի համար նկատի ունենալ Լևոն-Կարապետ Պալճանի թեկնածությունը որպես առաջնորդական տեղապահ:

Մեր ժողովրդի համար բողոքորչ եղավ 1943 թ. սեպտեմբեր 29—30-ին Սրբներում տեղի ունեցած նկեղեցական այն արարողությունը, երբ Հուսատանանի հայոց թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Մազլըմյանը ձեռնադրեց Լևոն-Կարապետ Պալճանին՝ վերանվանելով նրան S. Վազգեն վարդապետ: Ուղիղ 50 տարի առաջ տեղի ունեցած այդ արարողությամբ սկսվեց Հայ Սուպերկական Եկեղեցու անձնվեր գործիչներից մեջի բազմարդուն հայրենաշեն գործունեությունը, որ պիտի ճշանավորվեր հետագա հինգ տասնամյակների բազում մեծագործություններով:

Այդ թվականից սկսած վարդապետի, ծայրագով վարդապետի, իսկ 1951 թ. արդեն եպիսկոպոսական նոգենոր աստիճանով, որեւէս ուսմինահայ թեմի թեմակալ առաջնորդ, Վեհափառ հայրապետը մեծ եռանդով լծված էր իր հովվական սրբազն գործին՝ միշտ նպատակ ունենալով տեղի հայ համայնքի մեջ վառ պատել սերն ու նվիրվածությունը Մայր Հարենիքի ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմամբ:

Անգնահատելի էն 1941—1945 թթ. Ռումինիայի համակենտրոնացման ճամբարներում գտնվող խորհրդային բանակից գերի ընկած հայ զինվորների նկատմամբ Վազգեն եպիսկոպոսի կողմից ցուցաբերված մեծ հոգատարությունն ու անձնվեր շամբերը, որոնց մասին մեծ երախտագիտությամբ հիշում և պատմում էին գերության դառն տառապահներին ապրած հայագիտության անվանի երախտագորներ՝ Աստոր Մնացականյան ու Հակոբ Անապանը, գրող-գրականագետ Խամսակ Գրլյանարյանը և շատ ուրիշներ:

Իր ժամանակին շատ բարձր գնահատվեցին նաև թեմակալ առաջնորդ Վազգեն եպիսկոպոսի շամբերը ուսմինահայության հայրենադարձության կազմակերպման գործում:

Այդ տարիներին Վեհափառ Հայրապետը միաժամանակ հարատացնում էր իր աստվածաբանական գիտելիքները՝ հետևելով Բոխարենստի բարձրագույն հոգենոր դպրոցի աստվածաբանական դասընթացներին:

Ստեղծագործական մղումները թելադրում էին նրան շանասիրությամբ զբաղվել նաև ազգային-հասարակական ու գրական հարցերի քննությամբ:

և պարբերաբար հրապարակել ուշագրավ ուսումնասիրություններ: Ընթերցողների լայն շրջանակներում ճանաչում են գտել հատկապն «Անձնավորության գաղտնաբարի մասին, փիլիստիքայական ընույթի տրակտատը, որը ընդգծված է անձնավորության դերը ուժացման դեմ պայքարում, «Հայերը Ֆ. Վերֆելի Մուսա Լեռան բառաստմ օրերը վեպում» վերլուծական ուսումնասիրությունը, որտեղ վեր են հանված վեպի արժանիքները գեղարվեստական, գաղտնաբարական և արդիականության առումով, «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ» հետաքրքիր աշխատությունը, որտեղ մեծ վարպետությամբ գիտական խորությամբ մեկնաբանված է Խրիմյանի խրառական-դաստիարակչական աշխատությունների հշանակությունը մանկավարժական-դաստիարակչական տեսակետից: Զափազանց ուշագրավ ուսումնասիրությունն է «Սեր պատարագը» խորագիրը կրող աշխատությունը, որտեղ մեծ վարպետությամբ մեկնաբանված է Հայ Եկեղեցու Պատարագի խորհուրդը ազգային ճակատագիր հետ սերտորեն շաղկապնակ: «Ս. Գրիգոր Նարեկացու աճճն ու գործը» խորագիրը կրող ուսումնասիրության մեջ աստվածաբանական հմուտ վերլուծությամբ մեկնաբանված է Նարեկացու աղոթքների զորությունը, որն ուղղ անհատը իմբռավերլուծությամբ, անցնելով տառապալից ճանապարհով, ձգտում է հասնել բարյական մաքրագործման:

Հավատարիմ Հայ Եկեղեցու անվանի գործիչների ավանդներին, Վեհափառ Հայրապետը դեռևս թեմակալ առաջնորդի պաշտոնում հանապազ հետևում էր այն ճշմարտությանը, որ իշխանությունները գալիս են ու գնում, իսկ Հայրենիքը ու ժողովուրդը ապրում են հավետ: Ուստի, մի կողմէ թողած քաղաքական հանգամանքները, նաև աշխատում էր իր համայնքի ներսում միշտ վառ պահել սերը դեպի Հայրենիքը ու Եկեղեցին: Իր քարոզներով և գրավոր եւլոյթներով նա ճանաչված էր որպես խոհեմ և հեռատես ազգային-եկեղեցական գործիչ: Ահա թե ինչու, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքշյանի վահանավելուց հետո, 1955 թ. գարնանը, մեր ժողովուրդը ամենուր անհամբեր սպասում էր, թե երբ պիտի Ս. Էջմիածնից աստացի հայոց նոր Հայրապետի ընտրության որակի լուրը, Մայր Աթոռում գումարված Համագոյային Եկեղեցական ժողովը, բարձր գնահատելով Վազգեն Եպիսկոպոսի վերոհիշյալ և այլ առարինի հատկանիշները, ձայների ճնշող մեծամասնությամբ նրան ավանդեց Ս. Գրիգոր Լուսավորչի հայրապետական գահը: Հետագայում, անդրադառնալով այս իրողությանը, Վեհափառ Հայրապետը գրում էր. «Հավատացեք, թե բոլորովին հեռու էր մեզմե ցանկությունը գրավելու այն տեղը, որ կգտնվինք Մենք ապօք: Ավելին, ընտրության արդյունքը դիմավորեցինք գրեթե վիճառության և երկրուի զգացումներով: Անհարաբեկի մտահոգություններով սկսանք մեր գործը, վասնզի իբրև մեկը, որ ավելի մոտեն ծանօթ էր Մայր Աթոռի Աերքին կյանքի կացության, հստակ կերպով կտեսնեինք, թե որպիսի բազմազան դժվարություններու առաջ պիտի գտնվելինք»:

Արտակարգ կամք, խորաթափանց ու հեռատես վարքագիծ էր պեսք որդեգրել՝ խորհրդային համակարգում գտնվող հոգևոր կենտրոնը վերստին նորոգելու և նրա հեղինակություններ բարձրացնելու համար ոչ միայն բուռ երկրում, այլև հարևան հանրապետություններու սկսանք մեր գործը, վասնզի իբրև մեկը, որ ավելի մոտեն ծանօթ էր Մայր Աթոռի Աերքին կյանքի կացության, հստակ կերպով կտեսնեինք, թե որպիսի բազմազան դժվարություններու առաջ պիտի գտնվելինք»:

Հայրապետը իր շորջը հավաքված գործունյա և բանիմաց հոգևորականների հետ միասին կարողանում էր քայլ առ քայլ բարեկալել Մայր Աթոռի Անրքին կառույցն ու Այութական պայմանները, որոնք իրականացվեցին շնորհիվ դիվանատան և տնտեսական-ֆինանսական բաժինների կազմակերպման, որոնց գործունեությունը օրավոր ընդլայնելով՝ տվեց իր շոշափելի արդյունքները: Հնարավորություններ ստեղծվեցին պատշաճ տեսքի բնորդու և վերանորոգելու Մայր տաճարն իր շրջապատով և ծալվելու հսկայական վերանորոգչական աշխատանք Մայր Աթոռին կից ստեղծված անվանի ճարտարապետներից, ինձեւներներից և արվեստագետներից կազմված գիտական հանձնաժողովի հսկողության ներքո: Կարճ ժամանակում վերանորոգվեցին ու կանավորվեցին դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներից անավարտ մնացած, կիսավեր վիճակում գտնվող Վեհարանն ու մերձակա այլ շենքեր:

Ճարտարապետ Վարագդաս Հարությունյանը «Եկալք շինեցոր» խո-
րագիրը կրող իր գրքում ի մի է բնորդ Վեհափառ Հայրապետի ծավալած
Վիթսարի շինարարական գործունեությունը, որը կմնա պատմության մեջ
որպես անջին հիշտառ:

Հուշարձանների պահպանության պետական կոմիտեից մեկ առ մեկ էջ-
միածնի տօնօրինության էին հանձնվում ժամանակին առգրավված վանքերն
ու եկեղեցիները, որոնք, մեծ ժամանք վերանորոգվելով, բացում էին իրենց
դռները հավատացյալ ժողովրդի առաջ: Հետզինեւ սկսեց ավելանալ գոր-
ծող եկեղեցիների ու վանքերի թիվը:

Գահակալության ամբողջ շրջանում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի
աշխատանքները եղել են Վեհափառ Հայրապետի հաստուկ ուշադրության ա-
ռարկան: Որպես մանկավարժական գործունեության հարուստ փորձ ու քելմ-
ավոր անցյալ ունեցող անձնավորություն, նա մեծ հոգածություն էր ցուցա-
բերում այդ հաստատության նկատմամբ՝ շանալով առավել բարձրացնել նրա
ուսումնական մակարդակը և այն ապահովել արդի պահանջները բավարա-
րոդ հոգևորական և աշխարհական որակյալ դասախոսներով: Պայմաններ
ստեղծվեցին, որպեսզի ճեմարանական դասընթացն ավարտած առվել շնոր-
հալի երիտասարդ հոգևորականները իրենց գիտելիքները հարատացնեն ոո-
սական, ֆրանսիական, անգլիական, ավստրիական, գերմանական, հունական
և այլ աստվածաբանական բարձրագույն ուսումնական հաստատություննե-
րում: Վերջին երեք տասնամյակներում հոգևոր ճեմարանը տվել է բազում
շրջանավարտներ, որոնցից շատերն այսօր, որպես բարձրաստիճան հոգևոր-
ականներ, հովական, թեմական, քարոզչական ու վարչական պատասխա-
նատու ծառայության են կոչված ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ Հայ
եկեղեցու ներքին և արտասահմանյան թեմերում:

Վեհափառ Հայրապետը հայ ժողովրդի կրոնաբարոյական ու ազգային-
հայրենասիրական դաստիարակության գործում հաշնակալից և պատասխա-
նատու դեր է վերապահել իր խկ անմիջական հսկողության և դեկապարու-
թյան մերք հրատարակող Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածն» ամ-
սագրին: Ամսագրի էջերում հայրափառական հովածաներով հանդես են գա-
լիս նաև հանրապետության ճանաչված գիտնականներ:

Նորատեղծ տպարանի հիմքի վրա գուգանեարար ընդլայնվում էր
նաև Մայր Աթոռի հրատարակչական գործունեությունը: Կարճ ժամանակում
հաջողվեց լույս ընծայել գգալի թվով անհրաժեշտ կրոնական գրականու-
թյուն: Հայատացյալների համար մեծ նվեր էր Նոր Կտակարանի արևելա-

հայերեն նոր թարգմանության հրատարակությունը: Հանրապետության հմտութաբարգետների մասնակցությամբ իրագործվեց նաև Սատվածաշնի նոր աշխարհաբար թարգմանությունը, որն այժմ խմբագրման ընթացքի մեջ է և առաջիկա տարի հանձնվելու է տպագրության:

Բարձր են գնահատվել հատկապես ճանաչողական հաշմակություն ունեցող գունավոր բարձրորակ տպագրությամբ լուս տեսած «Հայկական Եկեղեցներ», «Հայկական խաչքարեր», «Աղջամար», «Էջմիածնի գանձեր» և այլ գեղարվեստական բարձր ճաշակով կազմված ալբոները:

Ընորհիվ Վեհափառ Հայրապետի անձնական արժանիքների և վայելած հեղինակության մեր Եկեղեցին իր պատվավոր տեղն է գրավում քրիստոնեական Եկեղեցիների շարքում, հավատարիմ մեր նախնիներից ժառանգած քրիստոնեական լայնախոն ոգուն, Աերկան ժամանակաշրջանում ևս շարունակում է սերտացնել իր Եղբարական հարաբերությունները բոլոր քրիստոնեական Եկեղեցիների հետ էկուունիկ ոգով: Հայ Սուպերելական Եկեղեցին մեծ հարգանք է վայելում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում, իր մասնակցությունն է քերում Եվրոպական Եկեղեցիների և Խաղաղության Քրիստոնեական կոնֆերանսներում՝ առաջնորդվելով տարբեր դպավանություն ունեցող Եկեղեցիների միջև բարեկամական անկեղծ կապեր և համագործակցություն հաստատելու գաղափարով:

Մեր Եկեղեցու կապերի ընդլայնմանն ու համաշխարհային ճանաչմանը մեծապես նպաստում էին հատկապես Վեհափառ Հայրապետի հանդիպությունները քրիստոնեական քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և նրա այցելած երկրների դեկազրների հետ, իսկ փոխադարձ այցելություններով հավատվում էին նրանց բացառիկ հարգանքը Վեհափառ Հայրապետի հեղինակության մկանմամբ:

Մեր Եկեղեցու նվիրապետական Աթոռներն ու թեմերը կատարած նորին Սրբության հայրապետական այցելություններն ու ի ամիսուս աշխարհի ցըրքած հայության դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածնն ունեցած նվիրումն ու երկուղածությունը քաջալերող նրա ոգեշունչ քարոզմերը վիժիարի Աերգործություն են ունեցել Եկեղեցու միասնության գաղափարի համազգային ճանաչման և հայկական համայնքների կապերի սերտացման ու համերաշխության գործում: Այսպէս կոչված «սառը պատերազմի» տարիների տիտր նետեանքը հանդիսացող Մեծի Տաճա Կիլիկիո նվիրապետական կաթողիկութական Աթոռում տեղի ունեցած՝ մեր Եկեղեցու միասնությունը խաթարող երևույթները համբերատար ընթացքով վերացնելու ուղղությամբ կատարված քայլերը հնարավոր դարձրին նպաստավոր նող պատրաստելու՝ տարածանությունները հարթելու և հարաբերությունները կարգավորելու համար, մեր Եկեղեցու ավանդական նվիրապետական կառուցմերի ոգուն համապատասխան:


«Մեկ ազգ, մեկ Եկեղեցի» հաշմարեանն է միշտ ուղեցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին նրա ողջ հայրապետական գահակալության ընթացքում: Այն առավել լայն ու ընդգրկուն բովանդակություն ստացավ հատկապես մեր անկախության պատմական հոչակտումից նետու, եթե Վեհափառ Հայրապետը սրտի անհուն քերկրանքով ազգընտիր խորհրդարանի ամբիոնից իր օրինանքի և քաջալերանքի իմաստուն խորը ու հայրական հորդորն ուղղեց ազատ և անկախ հանրապետության խորհրդարանի պատգամագործներին՝ ասելով. «Նշանակալից երևույթ է, որ այսօր, եթե մեր մողովուրդը, եթե մեր Հայրենիքը գտնվում են նոր ճանապարհներ որոնելու ճականությունը»:

տագրական կացության մեջ, ներկա է այստեղ նաև Հայոց Հայրապետը: Ես ողջունում եմ ձեզ հայրական սիրով... Սյոօր իմ բոլոր մտածումները, մաղթանքները և սպասումները ոգում եմ արտահայտել մեկ ամփոփ բանաձևով, որ ընդունված է մեր Եկեղեցու կյանքում: Այդ է «Ազատութիւն յերկրայականս, միութիւն ի կարևոր և սէր յընդհանուրս»: Այսինքն՝ ազատություն բոլոր այն հարցերում, որոնք դրվում են ձեր առաջ ի բննություն, ազատություն մտածում և արտահայտության այն բոլոր հարցերում, որոնք քննարկելի են, որոնք կարիք ունեն լուսաբանվելու, որոնք վիճելի են նոյնիսկ: Սա մեր Եկեղեցու հին բանաձևումներից մենք է, որ, ինչպես նկատեցիք, լիովին համապատասխանում է մեր օրերի ժողովրդավարական սկզբունքներին: Երկրորդ՝ «միություն ի կարևոր»: Սա էլ պատմական փորձառության արդյունք է, սիրելի Եղբայրներ և քոյքեր, որպեսզի միանանք հիմնական հարցերի մեջ, որոնք վճռական նշանակություն ունեն մեր ժողովրդի կյանքի ճանապարհը գծելու և ավելի լուսավոր ապագա գտնելու: Ուրեմն բախտորոշ հարցերուն պետք է ստեղծվի այդ միությունը, բոլոտորոշ՝ մեր ազգի գոյաւումնան, մեր Հայրենիքի պաշտպանության և անվտանգության տեսակետից, որովհետև մեր օրերում և նաև գալիք օրերում կարող ենք կանգնել վտանգի առջև, հետևաբար այդ գիտակցությամբ՝ կարևոր, հիմնական նշանակություն ունեցող հարցերի մեջ պետք է լինի միություն, միասնություն: Եվ երրորդ՝ սեր: Մերը, որ մայրն է բոլոր բարիքների մարդկային կյանքում առհասարակ, նաև հասարակական կյանքում: Այս դեպքում սեր ասելով պետք է հասկանանք հատկապես Եղբայրասիրությունը: Մենք բոլորս, որոք բոլորդ մեկ ազգի հսկացատ զավակներն ենք, ամեն բանից վեր և անկախ բոլոր տեսակետներից, գաղափարական դիրքորոշումներից: Ի սկզբանն մենք մենք ազգ ենք և, հետևաբար, նոյն ազգի զավակներն ենք՝ համախմբված սուրբ Արարատի լանջերի շուրջ հազարավոր տարիներից ի վեր, նախաստեղծման օրերից սկսյալ: Մենք միայն պաօպտիա հայությունը չենք ներկայացնում, այլ՝ ամբողջությունը հայ ժողովրդի սկզբից մինչև մեր օրերը: Այդ գիտակցությամբ ուրեմն մենք բոլորս պետք է զենք նկատենք իբրև Եղբայրներ, գործակիցներ, ուղեկիցներ՝ փոխադարձ սիրով ու բարի կամեցողությամբ, մեկս մյուսի հանդեպ ներողամտությամբ»:


Վեհափառ Հայրապետի ողջ գործունեությունը բնորոշվում է որպես անմասցորդ նվիրում իր ազգին ու ժողովրդին ծառայելու սուրբ գործին, որպես «հովիվ քաջ, որ զանձ իր դնէ ի վերայ ոչխարաց»: Այդ նշանաբնույթը էր տոգորված նաև Վեհափառի՝ մեր Հանրապետության առաջին ազգընահի նախագահի երդման արարողության պահին ասսած օրհնանքի խոսքը.

«...գիտենք, որ երդման այս արարողությունը հանդիսանում է նաև զոհաբերումի մի արարողություն: Զի գիտակցում ենք, թե այս ժամից սկսյալ, Դուք ինչպիսի ծանրածանը պատասխանատվություն եք ստանձնում, բոլորին ծանրը և բոլորին մտահոգող, մերօյա տագնապալի պայմաններում: Այս՝, մենք Զեզ գոհարերում ենք Հայրենիքի պատարագի սեղանի առաջ: Մենք տարակոյս չունենք, որ Դուք, ավելի ստոգությամբ՝ քան մենք, Զեր Շոգու արքերով տեսնում և ապրում եք Գոդգութայի Զեր ճանապարհը՝ պատրաստ դիմագրավելու ամեն վտանգ, ամեն տառապանք, սրբազն մի պարտականություն կատարելու ազնիվ տեսիլքով»:

Անձնական վարրով և բոլորանվեր գործունեությամբ Վեհափառ Հայրապետը բազմիցս հաստատել է իր նոչակած գաղափարների ճշմարտացիությունը՝ բոլոր դմվարին պահերին կանգնած լինելով հարազատ ժողովրդի



ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒԾԱՐՁԱՆ





PRINCETON UNIVERSITY LIBRARIES

կողքին, հանդես գալով ավերիչ երկրաշարժից աղետյալ ժողովրդի վերքերի ապաքինման համար իր ծավալած անձնվեր գործունեությամբ, տարբեր եկեղեցական և բարեգործական հաստատություններից առացվող մարդասիրական օգնության բաշխմանը, ավերված վայրերի վերանորոգմանը, ինչպես նաև մեր նորանկախ պետության այլ կարևոր ձեռնարկումներին իր գլխավորությամբ Մայր Աթոռի ցուցաբերած բարոյական և Այութական աշակցությամբ։ Վեհափառ Հայրապետը հատկապես մեծ հախանձախնդրություն է դրսերում «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեության նկատմամբ։

Դժվար է սպառիչ խոսք ասել իր առաքինի վարքով, ազգանվեր ու հայրենաշեն գործունեությամբ մեր ժողովրդի համընդհանուր սիրուն ու նվիրումին արժանացած Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ի մեծագործ կյանքի և համազգային ճամաչում գտած նրա ամենաբարձր արժանիքների մասնին։ Եվ հասկանալի ու բնական է, որ ոչ միայն պատարագից հետո, այլև համերգներում և ամենուր այնքան սրտաբոխ ու սրտառուշ է հնչում անման Կոմիտասի հորինած Հայրապետական մաղթերդի հոգեզմայլ մեղեղին։

Ամէն հայի սրտից բխած,
Լսի՞ր այս ձայն. ո՞վ Աստուած,
Երկար կեանք տոր Հայրապետին,
Երկար օրեր՝ Հայոց Հօր...





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Վեհափառ Տեր,

Հայաստանի գրողների միության և անձամբ իմ անունից խորին սկզբանաբար ողջունում եմ Ձեզ և շնորհագինս շնորհավորում Ձեր բազմավաստակ ու բազմաբեղուն կյանքի 85-ամյակը:

Ձեր Հայրապետական մոտ բարաւուն տարիների մեծագրօրություններու Դուք արժանավոր ժառանգն ու հետուորդը դարձաք Հայոց այն սրբազնագոյն կաթողիկոսների, որոնց համատեղության մեջ անմահորեն շողարձակում են Սահման Պարթևի, Ներսես Ծինարարի, Ներսես Շնորհալու, Խորհման Հայրիկի, Գարեգին Ա-ի և այլոց մեծափառ անունները:

Թեև Ձեր Հայրապետության տարիների մեծագոյն մասը համընկալ մեր երկրում հոգևոր կյանքի համար անբարենպատ ու դժվարին ժամանակների, բայց Ձեր հոգեկան կորովի, իմաստուն ու նրամիտ բարարակացացակալ իր ծնկածալ վիճակից, հասալ նորոգ ծաղկումի ու կենացնակության:

Վեհափառ Տեր,

Մենք Ձեզ գիտենք ոչ միայն որպես հայ ժողովորի բազմազբաղ Հովվապետի, Հայ Եկեղեցու նվիրապետության բարենորոգչի, այլև որպես լուսամիտ մտավորականի, խորագետ ու բանիթուն գրականագետի: Ձեր երիտասարդական տարիներին իսկ գրած հոդվածները խիստ այճմալական են նաև պյառ, իսկ Դուստուսկու մասին մենագրությունը թերևս առաջին էր հայ գրականության մեջ, որ ամբողջ խորությամբ բացահայտեց, թե մարդկանին խնճի ու հավատի ինչպիսի բացարձակացում է ապրում համամարդկանին այդ հանճարի ստեղծագործություններում:

Մենք խիստ բարձր ենք գնահատում նաև Ձեր այն շանչերը, որոնք ուղղված են Հայ Առաքելական Եկեղեցու միասնությանը և գոհունակության

բերկրալի գգացմունք են ապրում ի տես Զեր և Մեծի Տաճա Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի բարեկամության, դրա մեջ տեսնելով այդ միասնության առհավատչյան:

Վեհափառ Տեր,

Թերի կլիներ մեր խոսքը, եթե շնուրելինք, որ մեզ միշտ մեծագույնն իրացրել է Զեր խստաբեր, խոհեմ, առաքինափայլ բարձն ու կենցաղը, որնք այս ծանր, դժվարին, հատկապես հոգեւորին ու մարդկային առաքինություններին սպանացող ժամանակներում ոչ սիայն դաս պիտի լինեն շատերին համար, այլև օրենքի ուժ ստանան:

Թող Ամենատեսն ու Ամենազորը Երկար, շատ երկար կյանք պարզեցի Զեզ:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ
Հայաստանի գրողների միության նախագահ





ԲԱՆԱՍԵՂԾՈՒՀՈՒ ԽՈՍՔԸ ԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ


Թանկագին Վեհափառ,

Սկսած այն օրից, երբ Դուք բարձրացել եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրական գահին, մենք բազմիցս բախտ ենք ունեցել շնորհավորնու Զեր տարելիցները, և այդ շնորհավորանքները լցված են եղել անխառն ու միատարր ուրախությամբ, առանց դառնության, առանց ստվերի: Մենք Զեր համարել ենք երշանիկ կաթողիկոս, որովհետև Զեր գահակալությունը համընկել էր համեմատաբար երշանիկ ժամանակների, երբ, ճիշտ է, դանդաղորեն ցրվում էին Ս. Էջմիածնի վրա 1920 թվականից ի վեր կուտակված ամպերը, և Դուք բախտավորությունն ունեիք ի բնե Զեր մեջ եղած կարողությունները իրացնել լիովին, ամրացնել մինչ այդ երերու դարձած Մայր Աթոռը, բեկոր-բեկոր հավաքել ու վերականգնել մեր ժողովրդի հոգեկանությունը սնող ու պահպանող Նկեղեցին՝ մեր հավատի տունը:

Զեր, Վեհափառ Տեր, վիճակվեց տեսնել հայոց նորօրյա պետականության հիմնադրերը, որին բերեցիք Զեր հայրապետական օրինությունը և դրանով իսկ պետական այրերի հետ միասին բաժանեցիք այդ ճակատագրական պահի պատիվն ու պատասխանատվությունը:

Ծանր է հիմա մեր հայրենիքի վիճակը, և նոյն համեմատությամբ ծանր է Զեր վաստակաբեկ ուսերին իշած բերը, բազմաթիվ ու բազմազան: Ուստի այսօր մենք Զեր 85-րդ տարելիցը շնորհավորում ենք ոչ առաջիկ հանքային թերևաշունչ ուրախությամբ, այլ խորապես հասկանալով Զեր նոգոյն տագնապմերն ու ներհակույցները, շնորհավորում ենք նոյն սիրով ու որդիական ակնածանորով և աղոթում, որ դեռ երկար մնա Զեր հովանավոր Աջք Հայաստան աշխարհի վրա, որ որքան կարելի է շուտ վերականգնվի Զեր հոգոյն խաղաղությունը, և Դուք նոյն խմասուն հանդարսությամբ, լույս ու լուսավորը տեսնելու Զեր պայծառամտությամբ մեզ աներերությունն ու հավատ ներշնչեք հայ ժողովրդի հաստատուն ապագայի նկատմամբ:

ՄԻԼՎԱՆ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ



ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Մանկավարժական գիտությունների
թեկնածու

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱՇՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Սյուօր, իմարկե, անվիճելի է այն փաստը, թե ինչ անգնահատելի դեր և խաղացել Հայ Եկեղեցին և կրոնը, և ինչ մեծ ավանդ են ունեցել կրոնի նայ գործիչները նայ ժողովրդի գոյատևման, նրա անցած փորորկալից հանապարհին ազգային ինքնագիտակցության ոգու պահպանման, ինչպես փյունիկ վեր հառնելու, նրա զարգացման, հոգևոր-մշակութային արժեքների ստեղծման, մատառ սերնդի դաստիարակության գործում:

Սյունել տեղին է նշել Պերճ Ծիկամեր անունով եգիպտահայ մի մտավորականի «Արև» (1.9.92 թ.) օրաթերթում տպագրված «Հայ Եկեղեցին և նայ նոգերականներու դերը դաստիարակության մեջ» հոդվածի հնտևյալ մտքերը. «Հոգերական ուսուցիչները, միշտ քաղաքացիական պատ մտայնութեան և ըմբռնումին համամիտ եղած են և մեր դպրութեան արի առաջնորդներն ու ջահակիրները հանդիսացած են: Հոգերական ուսուցիչները իրենց աշակերտներուն առանձնապես ցոյց տուած են կեանքի պայծառ ու առաքինի ուղին, յաջողութեան և յարատնութեան լուսար ճամբան, զերծ պահելով զանոնք, փորձութիւններէ, զանազան ապիկար ու խարդախ գործերէ ու ժխտական ձեռնարկներէ: Հոգերական տիպար ուսուցիչներու շրջնորին է, որ հաւատքի ուժն ու զօրութիւնը քափանցած են մեր ներաշխարհին, մտքին ու հոգիին մէջ: Մեր Սուրբ Եկեղեցին եւ մեր Դարոցը, մեր հոգերականներն ու մեր ուսուցիչները, լիակատար ամբողջութիւն կը կազմեն, ազուցուած են իրարու և անբաժնելի մասնիկներն են մեր Քրիստութեայ, կրթասէր ու պատուական ժողովուրդին».

Սյս հարցը, ըստ իս, քավականին լայն ընդգրկում ունի և մեծ ծավալի ուսումնասիրության թեմա է, նիրավի՝ անտակ մի օվկիանոս:

Այդ իսկ առումով սոյն հոդվածում ես ուզում եմ անդրադառնալ նայ ժողովրդի այդ նվիրյալներից միայն մեկին:

«Հայոց քրիստոնությունը ազգային եղալ ի սկզբանն և այդպես է: մը-նաց Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Ս. Մեսրոպ Մաշտոցի տառերու

գուտով և Ս. Վարդանի արդարության և ազատության շեփորումով» (գիրք 3-րդ, էջ 64):

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի այս խոսքերով եմ ուզում շարունակել խոսքը, մի մարդ, որի յորաքանչյուր միտքը տողորված է վաս հայունասիրությամբ և խորին լավատեսությամբ հայ ժողովրդի պայծառ ու «արևալառ» ապագայի նկատմամբ: Եվ նրա յորաքանչյուր խոսքը մի լուսաշոր պատգամ է մեզ՝ հայերին, առանձնապես երիտասարդությանը, որին է վիճակվելու կերտել մեր ժողովրդի ապագան:

Վազգեն Առաջինը, նույն ինքը՝ Լևոն-Կարապետ Արքահամի Պալճյանը, Բոլիարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի գործնական մանկավարժության բաժինն ավարտելուց հետո, երկար տարիներ (1929—43 թթ.) դասավանդել է Բոլիարեստի հայկական դպրոցներում: Պալճյան մանկավարժի աշխատանքի խկական գևանատականն իր սաների անորոշ շերտությամբ ու մեծ սիրով ասված հետևյալ խոսքերն են.

«Մանկավարժ էր ամբողջ հոգով, ամբողջ էուրիամբ: Նա ապրում էր իր ուսուցչական աշխատանքով: Եվ զարմանալի չէ, որ հետագայում, երբ նրան վիճակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գալիսոնը, նա շրածարվեց մանկավարժական աշխատանքից: Վազգեն Պալճյանը մանկավարժ էր «Կամոքն Աստուծո», և նա պարզապես չէր կարող ապրել առանց աշակերտների: Ազգասեր էր ու հայրենասեր և այդ մտայնությունն էլ հետևողականորեն ներարկում էր իր աշակերտների մեջ: Դասավանդման ժամանակ օգտագործում էր ամեն մի հնարավոր առիջ՝ հայ ժողովրդի ներուսական շրջանի պատմությունից այլևսայլ հայրենասիրական դեպքեր պատմելու, այդ դեպքերը վերլուծելու, դրանց հիմնա վրա մեզ դաստիարակելու համար: Մի խոսքով, այ. Պալճյանը մանկավարժ էր ըստ կոչման» (բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանչյան):

«Վեհափառի արքայական խոսքը՝ իր հարատությամբ ու բազմերանգությամբ, վաղ մանկության օրերից ողեցուց աստղ է եղել ինձ համը և աշխարհի խճանկած ճամփաների խաչմերուկներում շլորած որրուկ աղջնակիս միշտ հիշեցրել, թե որտեղից եմ գալիս և որ եմ քաղերս ուղղելու, որպեսզի ապահովարա պահել կարենամ մեր ուկերենիկ մայրենին» (ժողովրդական արտիստուիտի Վ. Վարդենսյան):

«Նախ որպես ուսուցիչ գրավիչ էր իր արտաքինով: Առույգ էր, աշխոյժ, երիտասարդ և մանկավարժի պահվածք ուներ: Զայնը հնչուն էր, ախործապոր, փոքր ինչ մետաղական ներանգներով: Միշտ նագնակած էր կոկիկ ու անթերի, և դա իր մեջ մի տեսակ պարտավորեցնող բան ուներ մեզ, աշակերտներին նկատմամբ: Որպես ուսուցիչ շատ հոգատար էր, մինչև վերջ նվիրված իր աշակերտներին: Անվենորդեն ուրախանում էր նրանց հաջողություններով և վշտանում նրանց անհաջողություններից» (Գ. Ա. Տիրացյան, Հանգիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն):

«Լավ մանկավարժ լինելու հետ մեկտեղ, պարուն Պալճյանը լավ հոգեբան էր, և պատահական չէր, որ նա հետագայում դասավանդեց նաև «հոգեբանություն» առարկան:

Պարուն Պալճյանը բարյացակամ էր և միաժամանակ պահանջկուտ, բազմակողմանիորեն զարգացած և միշտ պատրաստ իր գիտելիքները հաղորդելու աշակերտներին: Նա մեզ մղում էր դեպի աշխատասիրությունը և գիտելիքները, ասելով. «Երբ երեկոյան գլուխտ դնում ես բարձին, հիշիր, թե

այսօր ինչ նոր բան են սովորել»: Մենք պ. Պալճյանին անվանում ենք ուսուցիչ ճիշտ այնպես, ինչպես ուսուցիչ են անվանել Մեսրոպ Մաշտոցին» (Հակոբ Սոսաբելյան, Երևանի թժկական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի վարիչ, դոցենտ):

Իր երկարատև մանկավարժական գործունեության ընթացքում թե՛ Ռումինիայում (Բուխարեստի Հայկական Ազգային վարժարանում—14 տարի) և թե՛ Հայաստանում (Եջմիածնի հոգևոր ճնշարանում) Կարապետ Պալճյանը, նոյն ինքը՝ Վագգեն Սոսաբելյանը, կրթել ու դաստիարակել է բազմաթիվ աշակերտներ, որոնք իրենց ազնիվ ու բնումնավոր աշխատանքով նրանքականից ներդրում են ունեցել երկու համբաւայությունների կրթական, մշակութային, հասարակական կյանքում:

Կարապետ Պալճյանը ոչ միայն շնորհաշատ և հմուտ մանկավարժ է եղել, այլ նաև ունեցել է բնումնավոր գրիչ: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ մանկավարժական, հոգեբանական, փիլիսոփայական, գեղարվեստական և կրթական բնույթի աշխատություններ, որտեղ նա իր խորերը, մտորումներն ու տեսակետներն է արտահայտել հայուննիքի, հայ ժողովրդի, հայրենասիրության, կրթույթան ու դաստիարակության, լեզվի, հոգեբանության, մշակույթի և կրոնի վերաբերյալ:

Կարապետ Պալճյանի բազմաթիվ հոդվածներում, կոնդակներում և առողջութեան վեմ են հնչում հայ ժողովրդի մասին բնութագրական խորերը. «Ժողովուրդ մը, որ մոտ երեք հազար տարիներու պատմության մը ծառանգորդն է, ժողովուրդ մը, որ երկու հազար տարիներու հավատք մը և կազմակերպված Եկեղեցի մը ունի, ժողովուրդ մը, որ Եվրոպական իմաստով կատարելութան բարձունքները հասնող մշակութային արժեքներ ստեղծած է, ժողովուրդ մը, որ աշխատելու և արդյունաբերելու անսպաս ուժ ու կորով ունի, ժողովուրդ մը, որ իր հայրենիքի ազատության համար զոհաբերության և հերոսության անհման էշեր գրած է իր պատմության ընթացքին, այդպիսի ժողովուրդի մը զավակները չեն կրնալ մոռնալ և չեն մողցած իրենց մայր ժողովուրդը, իրենց մայր հայրենիքը» (Խոսք հայրենիքի մասին, Բուխարեստ, 1956, էջ 16): Եվ շարունակելով գրում է.

«Մեր հինավորդ ազգի պատմությունը կենդանի հուշարձան մըն է՝ մարդկային աշխարհի հորիզոննին վրա բարձրացող, շաղախած ու մարմին առած հահատակներու արյունով, բարիին ու գեղեցիկին ծառանցելու ստեղծարար հանճարով և սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազն կիրքով: Ազգ մը չապրի միայն իր նրբական բարիքներով, չապրի միայն հանճարեղ անհատներու գործերով, այլ կապրի նաև իր պատվի և արժանապատվության զգացումներով, իր «մենք»-ի գիտակցությամբ և գոհաբերության ոգիով, իր ազատ և հապարտ ապրելու կամրջ, մեկ խորսով՝ իր բարոյական նկարագրով» (Էջ 126):

Կարապետ Պալճյանի հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է ու համապարփակ: Նա արժեքավոր ու ինքնատիպ մտքեր ունի, ինչպես վերը նշեցինք, ոչ միայն մանկավարժության, այլև հոգեբանության, գրականության, փիլիսոփայության և կրոնի վերաբերյալ: Նա ապրել ու հիմա էլ ապրում է իր ժողովուրդի ցավերով ու բազում հոգեերով, սակայն առ դրվագություններից դուրս գալու պայծառ ակնկալիքով և խոր հավատով՝ վաղվա «լուսաշող» ապագայի նկատմամբ. «Մեր առջև դրված են այսօր հոգևոր-բարոյական, դաստիարակչական և ընկերային բազում հարցեր: Մարդկային աշխարհը մեր դարուն կապրի շրջան մը՝ ոգեկան տագնապի,

բարդական անհավասարկշուրջան և ընկերային խոր հսկատթյուններու: Մարդոց և ժողովուրդներուն կպակսի հոգեկան ապահով կովան մը, առողջություն մը, առաջնորդող լույս մը» (Էջ 67): Իսկ այդ առաջնորդող լույս նա և ևնուն է ծովզվորին կրթելու, դաստիարակելու, Երան դեպի ապահով կյանք տանելու մեջ: Իրավացիորեն նա գրում է. «Ժողովորդի դաստիարակի մը ճպատակն է՝ հեղաշրջուս առաջ բերել այդ ժողովորդին կյանքին մնաց դաստիարակչական աշխատանքով, կրթական միջոցներով՝ բարձրացնելու համար ժողովուրդը դեպի ավելի լուսավոր ու ազատ գիտակցություն մը, դեպի ավելի բարյական ըմբռնումներու հորիզոն մը, դեպի մշակութային ավելի բարձր արժեքներու հսկացողություն և նաև դեպի տնտեսական ավելի բարգավաճ և ընկերային ավելի արդար վիճակ մը» (Էջ 21)*:

Կրնաք, քրիստոնեությունը ինչպես մյուս ժողովուրդների կյանքում, այսպես էլ հայ ժողովրդի պատմության ռեթացրում զգալի ներ է խաղացել գիտության, արվեստի ու կրթության բնագավառում։ Հիշենք մեր հոչակալոր բանաստեղծ Նարեկացուն, բանաստեղծ և գիտնական Անահիտ Շիրակացուն, Տաթևացուն, որոնք բրոյն են եղել են օրիստոնականացած համարակալաւ Եղի-

Հավատիք շնչով է ստեղծված ամբողջ ուկեդարյան հարուստ գրականությունը: Վանքերի գավիթներում կրթվել ու դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ և իրենց հաջորդներին են փոխանցել քրիստոնեության լույսը: Կրոնը մեր ժողովորդի պատմության հազարամյակների ընթացքում եղել է ժողովորդի ոգին, ոգեշնչման աղբյուրը, միհիթարությունը՝ օրիսաական պահերին:

Հայ Սուպերկանական Եկեղեցին մեծ ավանդ է ունեցել սերունդների դաւա-
տիարակության գործում, և այժմ էլ, եթե ժողովրդի մեջ խորհրդացին երկար
քննից հետո նորից հզորակում է քրիստոնեական հավատքը, Եկեղեցին ա-
մեն շահեր գործադրում է՝ մեր ազգը լուսավորելու և հավատքի բերելու հա-
մար:

«Քրիստոնյա լլալ» իր հոդվածում Կարապետ Պալճյանը գտնում է, որ հայ երեխան պետք է ստանա քրիստոնեական դաստիարակություն, որ մեր ազգային վարժարանները, մեր մատուց, մեր գրականությունը, մեր հանուային մշակութային կազմակերպությունները մեր սկրիռներին պետք է դաստիարակեն քրիստոնեական ոգով՝ ամոր պահեղով նրա մեջ ազգայինը, վսեմը և մարդկայինը: Նա գրում է. «Եկեղեցին, հոգեորականը պետք է ներկա լինեն հասարակական, ազգային կյանքի մեջ, սակայն որպես միաւոր, հաշուարար և խաղաղարար գործոն, ազգի և հայրենիքի գերագույն շահերի գիտակցությամբ»:

Կարպետն Պալճյանի մանկավարժական հայացքներն ամփոփված են մի շարք հոդվածներում «Մեր հարազատ լեզուն», «Անձնավորության գաղափարի մասին», «Խոր հայրենիքի մասին», «Բնազդ և գիտակցողություն», «Քրիստոնյա ըլլալ», «Մտերիմ համակենք հայ ծնողներուն» և հիմնականում «Խրիմյան հայրիկ որպես մանկավարժ» մեծ աշխատության մեջ: Գիրքը լույս է տեսել 1943 թ. Բուխարեստում: Գրքում հանգանառուեն քննված են Մկրտիչ Խրիմյանի տեսական-իդիլիստիկայական հայացքները մարդու, երա պատմա-դաստիարակչական ների և հասարակության հետ երա ունեցած փոխհարաբերության մասին (գլուխ Ս. Խրիմյան որպես մուածող): Ներկայացված են լուսավորություն տաղածելու, իր ժողովրդին մտավոր բարձր մշակույթի հաղորդակից անելու, անձնական և հասարակական տընտեսություն կազմակերպելու Խրիմյանի տեսակետները (գլուխ Բ. Լուս, գի-

տոթյուն, տնտեսություն): Վերլուծված են կրթության և հրա խրիմյանական ըմբռնման հատկանշական առանձնահատկությունները (գլուխ Գ, Կրթության ըմբռնում): Վերլուծված են նաև անհատի կատարելագործման այն եղանակները, որ առաջարկում է Խրիմյանը ընդհանուր առմամբ (գլուխ Դ, Անհատի կատարելագործում) և կանաց հարցում մասնավորապես (գլուխ Ե, Կնոջ դաստիարակությունը):

Քննված են համայնքի՝ որպես հասարակական միավորի ըմբռնումը Խրիմյանի մոտ (գլուխ Զ, Համայնքի ըմբռնում) և հողի՝ որպես «կենացանի իրականության» առարկայացած գիտակցությունը (գլուխ Է, Հողի սեր): Առանձին գիտում (գլուխ Ը, Խրիմյան և հայ գաղութները) տրված են Խրիմյանի վերաբերությունը գաղթաշխարհի հայության վերաբերյալ և հրա առաջարկած գիտա-մանկավարժական եղանակներն ազգային ձևու ու բովանդակությունը պահպանելու համար: Նախավերջին՝ «Քննական ակնարկ» գըլխում Կարապետ Պալճյանն ի մի է բերել իր եզրակացությունները Խրիմյան-մանկավարժի մասին «այնպես, ինչպես անոնք ի հայու կուգան Բեղինակին գործերու ընթերցումնեն»: Վերջին՝ 10-րդ գիտում (Ժամանակագրական ուրվագիծ Խրիմյան Հայրիկի կյանքնեն) տրված է Մկրտիչ Խրիմյանի կյանքի և գործունեության համառոտ աղյուսակը: Սակայն գիրքը, ինեւով 19-րդ դարի Հայոց մեծ Պատրիարքի և Կաթողիկոսի՝ Խրիմյան Հայրիկի ընկերային, մանկավարժական հայացքների խոր ու համակրողմանի ուսումնասիրություն, միաժամանակ ընդգրկում է Կարապետ Պալճյանի խիստ արժեքավոր մտքերն ու խոհերը մանկավարժության, անձի զարգացման ու դաստիարակության վերաբերյալ:

Միանգամայն արդարացի է Կարապետ Պալճյանի այն միտքը, ըստ որի մարդը ն ընությունը մի օրգանական ամրողություն են կազմում: Նա մարդուն ընությագրում է որպես կենսարանական էակ և որպես հոգեւոր, սոցիալական, ստեղծագործող, կառուցող ու աշխատող էակ: «Ամեն մարդ իր ծնունդով իսկ անքակտելի կերպով կազմած է իր ու անոր ընաշխարհին, միասին մեկ օրգանական ամրողություն մը կազմելով: Նոյնանալ ժողովը դիմի հետ որպես կենսարանական էակ, նոյնանալ ազգին պատմության և մշակույթի հետ որպես բարոյական հոգեւոր էակ, նոյնանալ հայրենիքի հողին ու ջորին հետ որպես աշխատող-ստեղծագործող էակ, վերշապես նոյնանալ հայ պետությունը ամրացնող ու անոր ապագան պահպող իշեալներուն հետ որպես կամեցող և կառուցանող բաղարական էակ: Ահա ճրշմարիտ պատկերը ամրողական հայուն»:

Ըստ Շետաքրիի Է Կ. Պալճյանի կողմից «մանկավարժություն» գիտության ձևակերպումը և ընությագրումը. «Մանկավարժությունը՝ «դպրոցական գիտելիք» մը չէ միայն, այլ ընկերային գիտություն մը, մարդկային ընկերությունը բարենորոգելու և կատարելագործելու աշխատանքին նվիրված առաքելություն մը, որուն կաշխատուկին հոգերան ու բնուրյագետը, ընկերաբան ու պետական մարդը»: Սրա հետ սերտողն կազմած են հրա մտքերը մանկավարժի մասին. «Մանկավարժը մարդ մըն է, որ գիտակցությունը ունի մարդուն և անոր կյանքին անկատարության, բայց միաժամանակ կիսավատա անոնց բարելավման և զինված գիտությամբ ու անահման սիրով ու նվիրումով կանցնի գործի: Մանկավարժը միայն դպրոցի մեջ հերեխա կրթողը չէ: Մանկավարժը կրթողն է, դաստիարակողն է սոհասարակ: Որովհետև միայն երեխան չէ, որ պետք է դաստիարակել: Դաստիարակին գործը երեխայով կախի, բայց կանգ չառներ երեխայության ըր-

ջանի վերջավորությունը: Ավելին, դաստիարակչական գործին բուն նպատակը երեխայության շրջաննեն անդին կգտնվի, անոր նպատակն է հասուն նարդոց ընկերությունը բարեփոխել:

Խիստ ուսանելի են մանկավարժ Պալճանի մտքերը մայրենի լեզվի մասին՝ այն համարելով ազգի գոյապահպահման կարևոր գործոն, ծողովորդի հոգեկան նկարագիրը պահող կենդանի ուժ, ծողովորդի հոգեծին որդի և նրա հավիտենականությունն ապահովող անգնահատելի արժեք: Կուզենայի մեջ բերել նրա խոսքերն ամբողջությամբ. «Լեզուն կենդանի մարմին մըն է, —օրգանիզմ մը, —ժողովորդին հովզերեն և մտրումներեն ծնած, զարգացած ու ծաղկած, ան մշտառն կենդանության ու աճման մեջ գրւնցվող, և ինըն ալ իր կարգին այդ ժողովորդին յուրահատող զգալությունը, մտածեակերպը, հոգեկան նկարագիրը պահելու պաշտոնն ունեցող կենդանի ուժ մըն է: Ամեն անհատ կզգա ու կմտածէ այն լեզվով, զոր կիսուի իբրև մայրենի լեզու: Հոգին, գիտակցությունը անկախ չեն խոսված լեզվեն: Այս վերջինը իր դրոշմը, իր գոյնը, իր կաղապարելը, իր շունչը կպարտադրե մտածումին և զգացումին: Լեզուն ժողովրդի մը հոգեծին որդին է, որ հասունության հասնելով, իր ծնողը կպահէ, կպահանձն և կառաջնորդէ: Լեզուն հավիտենական ճշմարտություն է, կենդանի ուժ և արժեք այն իմաստով, որ կապահովէ ժողովրդի մը հավիտենականությունը: Լեզուն կենդանի իրականություն մըն է, որ կյանք կառնէ ժողովորդեն և կյանք կուտա անոր, այդ, ան կրնա և մեռնիլ, բայց իր հետ կթաղէ նաև այդ ժողովորդը որպես ազգային ամբողջություն, կթաղէ նաև անոր մշակույթը»:

Եվ որպես անբաժանելի մի ամբողջություն Կ. Պալճանը վերցնում է ժողովորդ, հայրենիք, սեփական լեզու և մշակույթ միասնացած, բանի որ անհնարին է երկար ժամանակ մեկը պահել առանց մլուսի, որովհետև, իրոք, ամեն մի ժողովորդ այն չափով է ժողովորդ, որ չափով որ ունի սեփական երկիր, սեփական լեզու, մշակույթ և ինքնավար հակարական կյանք:

Կուզենայի հանգամանորդեն անդրադառնալ մանկավարժ Պալճանի մտքերին ընտանեկան դաստիարակության անգնահատելի դերի մասին՝ անձնափորության ձևավորման ու զարգացման գործում:

Կարապետ Պալճանը մեծ տեղ էր տալիս ընտանիքում երեխայի ֆիզիկական, աշխատանքային, բարութական դաստիարակությանը՝ շեշտը դենդրոլույ հատկանելու անձնական օրինակի դաստիարակչական մեծ ազդեցության վրա: Հայ նրա անձնական օրինակով դաստիարակել՝ հշամակում է «կյանք կյանքով բարեփոխել»: Անձնական օրինակը, հիրավի, «հոգեբանական մի բարդ ամբողջություն է», մի անգնահատելի երևոյց՝ իր հզոր մերգործությամբ ու մետանըներով: Նա գրում է. «Պետք է ամենափոքր հասակեն ինկ, ընտանիքում վարժեցնել երեխան՝ բարին գործել, ճշմարիտ խոսի, արդար դատել, որպես կենցաղի բնական կերպեն: Իսկ այդ կերպը, այդ բարին ընելու հնարալիությունը պես է ատեղծել երեխայի մեջ, ոչ թե միայն խրատով, «խոսքի» քարոզով, մտավորական միջոցներով, այլ ամեն բանե վեր՝ կենդանի, գործնական օրինակով, կյանքի փորձով: Անձնական օրինակի ուժով դաստիարակել՝ այդ կյանքակե կյանքը կյանքով բարեփոխել, այդ կյանքակե կենդանի իրականություն մը ուրիշ կենդանի իրականության մը ազդեցությամբ առաջնորդել ու ձևավորել: Օրինակը, հոգեբանական բարդ ամբողջություն մըն է, որ բնական կերպով հասորդիչ ուլալու, փարակիչ ըլլալու հատկությունը ունի, մանավանդ, երբ աև կուգա կազմված տարեց անձի մը կողմեն, որուն վրա երեխան բացարձակ վատահություն

ումի, անձի մը կողմէն զոր երեխան կհարգեն ու կսիրե (Խոսք հայրենիքի մասին, էջ 65):

Մանկավարժ Պալճյանն ընդունում է ժառանգականության գործոնը և գտնում, որ դեռ իրենց փոքր հասակում արդեն երեխաներն ունեն ապագա թերությունների սաղմերը: Եվ մենք ուզենք, թե չուզենք, գոյն լինենք դրանց, թե ոչ, պետք է տեսնենք, որ դա իրականությունն է: Հետևաբար, հարուրուվին չի ընդունում ֆրանսիացի մանկավարժ ժան Ժան Ռուսոյի ազատիարակության գաղափարը, ըստ որի երեխան ծնվում է որպես հրեշտակ և հասարակությունն է, որ նրան փշացնում է: Եվ եթե նա հասարակությունից հեռու, կտրված առանձին ապրի, ինչպես «ծաղկեն իր թաղարի» մեջ, ապա կդառնա կատարյալ բարոյական մի նկարագիր: Այս տեսակետը մանկավարժ Պալճյանը համարում է բանաւողջական, ոոմանոիկ և միաժամանակ սխալ, քանի որ, իր խորին համոզմամբ, դաստիարակության գործը պետք է տարվի հետևողականորեն, կազմակերպված, երեխան պետք է մեծանա կարգապահության տակ մինչև այն տարիքը, երբ ինքը հոգեկեն և մտավորապես կկարգավորվի, կգիտակցի և այսուհետև կկարդանա ինքն իրեն ազատ կերպով վերաբնիկել ու կատավարել:

Կարապետ Պալճյանը միջամտություն ասելով չեր հասկանում «Քիրու միջոցներ և կաշկանդումներ», այլ որ այն պետք է լինի «սիրով, գործով, համոզելով», բայց միշտ հետևելով, որ եթե պետք լինի, որոշ բաներ արգելել երեխան նոյնիսկ պատճել, որպեսզի երեխան փոքր հասակից իմանա, որ որոշ բաները թույլատրելի չեն: Այդպիսի դաստիարակությունը, ըստ նրա, ավելի «շինարար կդառնա, և արդյունքները բարի կըլլան»: Իսկ այս աշխատանքն առավելապես նա վերագրում է մայրերին ընտանեկան հարուկի տակ՝ մինչև դպրոցական տարիքը և նաև դրանից հետո: Նա չափից աւլուի է կարևորում մոր դեռք երեխայի դաստիարակության գործում: Նա ասում է, թե աշխարհի ցանկացած կետում ինչպիսի կատարյալ դպրոց է լինի, չի կարողանա ամրողական կերպով փոխարինել ընտանեկան դաստիարակությանը, մոր ուղղակի կրթական, դաստիարակչական աշխատանքին, քանի որ երեխան իր աճի, ձևավորման և զարգացման ընթացքում կարիք ունի մայրական գորգուրանքի, գորովի ու միրո: Որովհետև այդպես երեխայի հոգին կազմվանա, կծաղկի և իր մեջ քաքնված բոլոր դրական գծերն ի հայտ կգտն: Բոլորովին շնումացնելով դպրոցի դերը, նա մնում է հարազատ այն ճշմարտությանը, ըստ որի դպրոցի հետ մեկտեղ դաստիարակչական գործը պետք է առաջ տանեն նաև մայրերը:

Մեծ երախտագիտությամբ ու խորին հարգանքով է խոսում Կ. Պալճյանը հայ կնոշ մասին: «Հայ կիները իրենց զգայուն սրտով և բնական խառնվածքով ու շնորհներով շատ ավելի ընդունակ են պահապան հրեշտուկ դառնալու հայ Եկեղեցին և հայ ընտանիքին: Սնասառուի մեջ անգամ հայ կիները փարած մնացին իրենց հավատքին և իրենց մայրենի-լեզվին: Ամազ-սերու վրա իսկ գրեցին հայուն այրուրենք և բրհստունեակամ հոյսով իմակեցին իրենց աչքները: Մեծ և տոկու ազգերու ճակատագիրը մանավանդ կիներու, մայրերու ձեռքին մեջ է: Անոնք է, որ կդաստիարակեն ու կհասցնեն մեծ հայրենասերներ, մեծ առաջնորդներ, հերոսներ և ստեղծագործողներ: Մեր Եկեղեցին շատ բան կպարտի հայ կիներում՝ մեր պատմության ընթացքին: Ցավի և որախության, վտանգի և անապահովության, միջագ-գային բոլոր փոխորիկներուն մեջ մեր քոյրերը և մայրերը ծանրագույն թե-որ կրած են իրենց ուսերուն վրա»:

Նա գոնում է, որ հայ աղջիկները պետք է լավ կրթություն և դաստիարակություն ստանան, որ նրանց պետք է դաստիարակել հայկական ոգով, որովհետև նրանք պետք է դառնան ապագա մայրեր և նրանք պետք է իրենց զավակների մեջ ներշնչեն հայության ոգին, շունչը, մտածելակերպ և զգայությունը: Պալճանը գրում է. «Մանկավարժ մը կըսէ, թե երեխան կդաստիարակած այն, ինչ որ Աստված ստեղծած է, և մայրը՝ դաստիարակած»:

Հնարավոր չէ շանդրադանալ Կ. Պալճանի մտքերին անձի ինքնաճանաչման և ինքնաքննադատության վերաբերյալ: Որպեսզի մարդն ինքն իշխեն ճանաչի և ինքնաքննադատության հետարկի, ըստ նրա խիստ անհրաժեշտ է «քացարձակ անկեղծություն՝ անվախ և վճռական», որը բավականին դժվար գործ է, իսկ շատ-շատերի համար՝ հոգեկան անկատարելիություն: Եթի մարդն ինքն իր հանդեպ բացարձակ անկեղծ է, դա միանգամայն կարելի է «քարհական հերոսություն» համարել, որին, ցավոք, շատ քշերը կարող են հասնել: Պալճանը գրում է. «Առանց անկեղծության ամեն բան կը ձախողվի: Ու չկարծիի, թե այնքան դյուրին բան է ինքզինքը ճանչնալու անկեղծությունը ունենալ. այդ հնարավորությունը, այդ հոգեկան ուժը, կախում ունի մեծ չափով մարդու ստացած դաստիարակութենեն: Մակերեսային դաստիարակություն մը, արտաքին փայլ ունեցող դաստիարակություն մը կտանի դեպի ինքնակեղծում ու կցամքեցնե ինքզինքը ճիշտ ճանչնալու անկեղծության աղբյուրները: Հաճախ այդ աղբյուրները այնքան կանհետին, որ այդպես սիսակ դաստիարակված անհատը ինքն ալ չի գտար ինքզինք կեղծումը, ինքն ալ անկեղծորդն կհավատա իր կեղծ վիճակին իրականության: Իրական դաստիարակություն մը պետք չէ ծածկել բնությունը և անոր իրական կողմերն ու թաքու ծալքերը: Ավելին՝ պետք է զանոնք փնտրել և դուրս, լույս աշխարհ բերել: Այսպես միայն, բացարձակ անկեղծությամբ միայն կարելի է իրականացնել ինքնաճանաչումը»:

Լիովին համամիտ լինելով Կ. Պալճանի այս խոսքերին, ովում եմ ավելացնել, որ ինքնախարքանքը շատ շարիք է բերում. մեծամտություն, ինքնախավանություն, շմահավանություն, դիմացինին զգնահատելու, նումացնելու հատկություն, ինքնասիրահարվածություն, քամահրանք ուղիղի նկատմամբ, ամեն լավի ժխտում և բնավորության ալ բացասական գծեր, որոնք միայն կիաթարեն այդ մարդու հոգեբանությունը:

Կարծես թե այսօրվա համար գրված լինեին Կ. Պալճանի 1943 թ. արտահպտած հետևյալ մտքերը՝ ուղղված մեր հայ երիտասարդությանը. «Մեր երիտասարդությունը, մանավանդ մտավորական երիտասարդությունը պետք է լավ լիրոնել այն իրողությունը, թե մշակութային անհատը, բարոյական մարդը անհրաժեշտորեն կապված պետք է մնա օրգանական ամբողջության մը, այսինքն իր ծողովորի համայնքին. և թե այդ իր բնական ու մտերիմ շրջանակեն դուրս՝ կակսի ալլասերումը ոչ միայն ազգային ալլ առև մարդկային տեսակետեն, որովհետև եթե քո սեփական ազգեղ Բեռնասաւ, ուրիշ ազգի մեջ երբեք իրապես չես կրնար մուտք գործել»:

Խորս ողում եմ ավարտել իմաստաեր, մանկավարժ և հոգեբան, խիստ ազգաւեր և հայրենասեր, մեր ժամանակի կրոնական մեծ գործիշ Կարսպես Պալճանի, նոյն ինքը՝ Սմենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի լավատեսական հետևյալ խոսքերով.

«Հայ ազգը հոգեկան արժեքերու ծնունդ է և հոգեկան արժեքերու ծնունդ, տվող ծողովորդ: Հայ ծողովորդը ալ բանի չի տենչար, բայց միայն

ունենալու ափ մը ազատ հող, բաժակ մը լոյս և խաղաղ կրամք, շարունակելու համար իր առաքելությունը, արդարացնելու համար իր կոչումը աշխարհի ժողովորդների մեծ ընտանիքին մեջ:

Թե որպես Հայաստանյաց Եկեղեցվոր սպասավոր, թե որպես հայ ժողովրդի հարազատ զավակ, կաղոթեմ և կիսավատամ, թե բարիին ուժերը պիտի հաղթանակին աշխարհի վրա և խաղաղության սպիտակ աղավնին պիտի շներկվի արյունով»:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Խրիմյան Հայրիկ որպես մանկավարժ, 155 էջ, 1943 թ., Բուխարեստ:
2. Մտերիմ նամակներ հայ ծննդմերուն, «Արագ» օրաթերթ, 1937 թ., Առ. 546 (սեպտեմբեր 23), 1-ին հ. և 1937 թ., Առ. 554 (նոյեմբեր 7), 2-րդ հ.:
3. Խոսք հայրենիքի մասին, Բուխարեստ, 1945 թ., 27 էջ:
4. Բնագդ և գիտակցություն Անդրադարձ, 1938, Առ. 9:
5. Մեր հարազատ լեզուն, «Էջմիածին» ամսագիր, 1950 թ., Առ. 3, մարտ—ապրիլ:
6. Անձնավորության գաղափարի մասին, Բուխարեստ, 1938 թ., էջ 40:
7. Հոգեբանության դասեր, Էջմիածին, 1961 թ., 119 էջ:
8. Հայրենի արևին տակ, Բուխարեստ, 1954 թ., 112 էջ:
9. Քրիստոնյա ըլլալ, «Հերկ», 1938 թ., № 11:

ՆՐԱ ՄԱՍԻՆ

1. Վազգեն Ա—Հայրապետ Հայոց, Համառոտ տարեգորություն (1908—1955):
 2. Վազգեն Ա—Հայրապետ Հայոց (Կենսագրություն, Կոնդակներ, Ծառեր, Քարոզներ) Էջմիածին, 1958 թ., Ա գիրք:
- Գիրք Բ—Կոնդակներ, Ծառեր, Քարոզներ, 1960 թ., Էջմիածին:
- Գիրք Գ—Կոնդակներ, Ծառեր, Քարոզներ, 1976 թ., Էջմիածին:



ԿՅԱՆՔ՝ ՀԱՆՈՒՆ ՄԵԾ ԳՈՅԱՄԱՐՏԻ

Նա մեկն է մեծագոյն հայերից մեր պատմության ընթացքի: Խակ Արա ձայնը՝ ձայնն է Արդարության ու ժողովրդի, քանզի ազգը նույնիկուն է Ամենայն Հայոց: Ամա թե ինչու ազգն այսօր ամենայն սիրով, սրտով ու երախտագիտությամբ է հզում նրա կեևաց տարիների գումարը հորելանը, որը հավասարվել է 85-ի: Մի հորելան, որն իմաստավորված է հայրենաշեն գործերով, մանկավարժական ու թարգմանչական վաստակով, կառուցողական ու խաղաղապիրական ռազմարդոյուն գործունեությամբ և հայասահամանության մեծ մտահոգությամբ: Արդեն քանի՛ տարի է, որ Հայոց Հայրաբանն իր լսելի ձայնն է բարձրացնում հանուն աշխարհում խաղաղության և հշավակում պատերազմները: Ու հիմա, երբ աշխարհը տարութերվում է այստեղ ու այնտեղ ծագող ու թեմացող պատերազմներով ու եղբայրապան կոիվերով, առավել ցայտուն-հստակ են երնում պատմության առջև այդ գործունեության կարևորությունը, այդ ճանապարհի ձեռքբերումները և նրա մարգարեական հախազգուշացումները: Այդ իրական խաղաղության գինը հայրենի հողի համար:

Եվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում է այնքան պարզորոշ զգացվում ու տեսանելի դառնում նրա կառուցող ու նորոգող հայրապետական աջի գորությունը: Այդ, դրա վկան նաև այսօր այնքան պայծառացած Մայր Աթոռն է, Հայաստան աշխարհի հոգևոր թեմերը, մեր վաճք-եկեղեցիները: Եվ ոչ միայն հոգևոր, այլև ազգանվեր գործունեությունը, երբ նրա հայրապետական աջն ու գավազանը, նրա միտր-հոգին և ամենօրյա անդարսում գործունեությունը ազգամիավորիշ կամուրջ հանդիսացան Հայոց երկու հատվածների միջև, որոնք Մայր երկիրն ու աշխարհափյուն հայությունն են:

Նրա հայրապետական շրջագայություններն ու այցելությունները տարբեր մայրցամաքների ազգայիններին ու գաղթօջախներին հնարավոր դարձուին այդ գաղափարի իրականացումը՝ ազգը միավորել Մայր Հայրենիրի շուրջն ու Մայր երկիրը դարձնել բոլոր հայրենաշեն գործերի առանցքը, քանզի չկա հայ ժողովորդ առանց Մայր հողի և չկա հայի ճշմարիտ հավատ մեր սորք ու Առաքելական Եկեղեցոց դորւս:

Եվ նա իր հնդիմակությամբ ու հնայրով, իր հայրապետական խոսքով ու անդուզ գործունեությամբ միավորել-համախմբել է ազգ ու ժողովորդ, երկիր ու արտերկիր և նրանց շահերի կիզակետը դարձրել՝ Հայրենիքը:

Ու հիմա, երբ այդ արգասաքեր կենաց տարիները հասել են 85-ին, մշտապես հարստացնելով մտքի իմաստությունը և հոգու ամրությունը, և առավել խորացնելով մտահոգությունը ազգի Գոյամարտի համար՝ առավել է մեծացել նաև նրա հանդեկ մշտապես եղած ժողովրդական սեր-հարգաճը:

Այդ բնական հարգաճըն է տածում և Հայոց Հայրապետի հանդեկ «Զորավար Անդրանիկ» հայոց համագօյին միությունը: Եկ՝ որ Անենայն Հայոց Հայրապետը նաև մեծ գնահատողն է Զորավարի գործունեության: Դեռևս 1979 թ. Փարիզում, Պեր Լաշեզ հայտնի շիրմատանը, ի լոր հավաքված ների և ի տես Անդրանիկ Զորավարի մահարձանի, անև այսպիսի խոսքերով է արտահայտվել նրա ու նրա զինակիցների հիշատակին: «Այս գերեզմանին առջև մեր հոգին և մտքի աչքերով կտևնենք վերջին հարյուր տարիներու ընթացքին մեր ժողովուրդի մղած անհավասար պայքարը իր արժանապատվության, իր գոյության և ազատության համար: Այդ կոչովի, ինչպես գիտեք, հայ ազատագրական շարժում, որուն արյունու ճանապարհին վրա կրաքրանա մերտական կերպարը զորավար Անդրանիկի:»

Կարևոր այն չէ, թե ինչպես մենք ազգովին, մերկա պայմաններու մեջ, պիտի կարենանք շարունակել Անդրանիկի կես թողած գործը, այլ կարևոր այն է, որ սրբությամբ պահենք գիտակցությունը, անսասան հավատքը, թե կուգա օրը արդարության:

Այս գիտակցությամբ կապինք մենք այսօր և պիտի ապրինք թե՛ Հայատանի և թե՛ Սփյուռքի տարածքին վրա: Եվ այս գիտակցությունն ու հավատքը պետք է ներշնչեք դուք ձեր զավակներուն: Այսպէս է, որ լավագույն ձևերով մեր հարգաճըն մատուցած պիտի ըլլանք մեր հերոսներուն, նաև զորավար Անդրանիկի հիշատակին:

Թող Աստված խալաղության և հավետ լույսի մեջ պահե Անդրանիկի և բոլոր Անդրանիկներու հոգիները, որոնք զովկեցան ազատության արյունու ճանապարհին վրա: Թող Աստված մշտանորդ ուժ ու եռանդ պարզեն հայ ժողովուրդին, որպեսզի ամ տակավ զորանա, աճի և միշտ հավատարիմ մնա մեր հերոսներու ուխտին և միշտ պատրաստ շարունակելու անոնց գործը:

Այս հավատքով է, որ կու գամ Հայատանեն և այս հոգիով է, որ աղոթք կկարդամ այսօր այստեղ:

Հիշատակն արդարու օրինությամբ եղիցի, ամեն:

Այս խոսքերով ինչպիսի մարգարեական կամսատեսում կար գալիք օրերի համար, որ այսօր օրերն են, մեր ժամանակը, որը դեռ մերկա է և հետագայում է պատմություն դանուալու: Այդ խոսքերը, որ հնչել են 1979-ին՝ բնավ էլ չեն եղել հավոր պատշաճի: Դրանք հավատամբ էին ու նպատակ:

Իսկ որքան հպարտությամբ ու արժանապատվությամբ էր լցված նրա գործունեությունն այն ճակատագրական օրերին, երբ սկսվել էր ազգային մեծ զարթոնքը: Բայց և որքան տագենապալի էր հովված հոտի ճակատագրի համեմա: Նա նորդորելով նորդորում էր ժողովուրդին՝ շփմել անխոնենք քայլերի և զգուշավոր լինել այդ հեղինեղով ու անստուգ ժամանակներուն: Հորդորում էր, քանզի քաջ գիտեր պատմությունն ազգի և հենց այդ պատմության տրամաբանությամբ էր գործում: Ու որքան էլ ճշմարիտ զգուշավորության էր մղում ժողովուրդին, ինը այնքան համարձակ էր իր գործունեության մեջ ու կնցվածքում և ըմբռատ դիմումներ էր հոդու երկրի այն ժա-

մանակվա բարձրագույն դեկավագներին: Պահանջում էր գործել արդարությամբ և աղետը հնապացնել իր ժողովրդից: Այս, խրոխտ էր Կեցվածքը և ձայնը՝ սթափեցնող, քանի ձայնն էր երկրի, ժողովրդի, աշխարհամայրութափառ հավատացյալ հոտի ու նախորդ սրբացած հայրապետների: Չայնն էր Արդարության: Եվ անհնար էր ունկնդիր չինել այդ ձայնին:

Եվ միշտ էր հետոնդական և նպատակային եղել այդ ձայնը ու նաև Զորավարի աղիջով: Նա հավատարիմ իրեն ու իր խոսքին, դեռ 1965-ին էր հուն Փարիզում ու Պեր Լաշեզում ասել խոսքը Անդրանիկ Քաջի մասին.

«Անդրանիկ, քաջ զավակ Բայ ժողովորդի, դուն ազատության զինվոր, դուն՝ արդար բազուկ, դուն՝ պաշտպան հավատ և հայրենյաց, դուն՝ մեր պատմության քարյուղներն լույս աշխարհ եկած նոր օրերու Մինք. ահա զայտի ես՝ Հայոց Հայրապետը, բեզի կուգամ Ս. Էջմիածնեն, Հայոց աշխարհեն, և քեզի ողջուն կբերեմ:

...Հայրենիքն ափ մը հոդ ես շբերի հետո գերեզմանիդ, վասնգի հոգիս կվկայի, թե հեռու չէ այն օրը, երբ ինքը՝ հայրենի հողը իր կործքը պիտի բանա և ընդունի աճյուններդ, ուր դուն պիտի հանգչիս հավիտյան»:

Իսկ այդ խոսքերն այն ժամանակ հնչել են որպես պատգամ ու կտակ: Ու հիմա կրկին դրանք է հիշեցնում «Զորավար Անդրանիկ» միության հայագահ, փառարանված ըմբիշ Նորայր Մուշելյանը Վեհափառ Հայրապետի Աերկայությամբ հավաքվածներին, որոնք միության հափագահության անդամներն են ու միության համակիրները և եկել են շնորհանորդու Վազգեն Առաջին ազգընտիր Կաթողիկոսին՝ նրա ծննդյան 85-ամյակի բարեքաստիք աղիջով: Ն. Մուշելյանը հավաստում է իր խոսքում, թե Հայոց Հայրապետի պատգամը նաև անդրանիկապաշտների ուղեցույցն է: Եվ կամքը Զորավարի, Հայոց Հայրապետի և ժողովրդաց՝ կվատարվի. Անդրանիկի աճյունը կվերաթաղվի հայրենի հողում:

Իսկ անդրանիկյանները եկել են Հայոց Եկեղեցու իմաստուն Հովվապետին նաև ասելու.

— Վեհափառ Տեր, արևատություն Քեզ և Կենաց բազում տարիներ, որ կարենաս տեսնել Քո ժողովրդի իշերի կատարումն ու երազանքների իրականացումը:

Եթքանիկ օրեր Քեզ, որ մշտապես վայելես Քո հովված հոտի խորագույն սերն ու հարգանքը:

Եվ երանի այն օրվան, երբ Էջմիածնի Մայր տաճարում հոգեհանգստյան սուրբ պատարագ կմատուցվի Զորավարի հիշատակին, երբ նրա աճյունն այս տեղ կրերվի: Եվ տա Աստված, որ շուտ գա այդ նվիրական օրը:

Իսկ հետո, որպես անդրանիկյանների միության խորին հարգանքի ապացույց ու նշան Հայոց Հայրապետի համենայ, նրան է նվիրվում իր իսկ լուղաների մեծադիր դիմանկարը, որի հեղինակն է երգիչ ու նկարիչ Ստեփան Դավթյանը: Մատուցվում են նաև Զորավար Անդրանիկի հուշամեղալը և «Պայքար Արքարատի համար» խորիդանշական մարզական մեդալը: Իսկ քանդակագործ Տարիել Հակոբյանը Վեհափառին է ընծայաբերում իր Կերպած Կոմիտասի դիմաքանակը:


Եվ համարտ այս պատմական ու պատվական հավաքի՝ Վազգեն Առաջին Հովվապետն ասում է իր խոսքը հավաքվածներին, որը հնչում է որպես հայրապետական պատգամ ողջ ժողովրդին.

«Խորապես զգացված եմ Զեր խոսքերի համար և այն հիշատակության համար, որ կարդացիք իմ խոսքը այն ասուն Զորավար Անդրանիկի արձանի:

առաջ: Դա խկապես մի տեսակ ուխտ էր մեր կողմից, որ պահպանում ենք մինչև այսօր և համոզված ենք, որ կգա այն օրը, եթե Զորավար Անդրանիկի ամյուները կփոխադրվեն Հայաստան՝ մայրենի երկիր: Այդ վստահությամբ են միսիթարված եմ և շնորհավորում եմ նաև ձեզ մանալանդ, որ այդ գաղափարը վառ պահում եք Հայաստանում, Զորավար Անդրանիկի մեծ հիշատակը և նրան Հայաստան փոխադրելու այդ երազանքը: Այդ, իմ կարծիքով, ձեզ պատիվ է բերում և մաղթում եմ, որ շատ երկար ժամանակ չանցած իրականություն դառնա այդ՝ բոլորին միսիթարության համար: Ձեզ հաջողություն եմ մաղթում, ձեր բոլոր աշխատանքներին, գործերին, վստահ եմ, որ ձեզանից ամեն մեկը այս դժվարին օրեին, այս ծանր օրերին ինչ-որ մի աշխատանքով, ձեռնարկով փորձում է օգտակար լինել մեր վիրավոր երկրին, մեր Արցախին, մեր Ազատամարտիկներին և առհասարակ մեր կարիքավոր ժողովրդին: Փորձենք ամեն մեկս մեր տեղից մեր պարտականությունը կատարել և վստահ ենք, որ ի վերջո մեր Արդար գործը կավարտվի Հաղթանակով»:

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՈՒԿՅԱՆ





ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 14-ին, երեքշարթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դաჩլիճում, Մայր Աթոռի դիվանապետ և հոգևոր ճեմարանի վերատեսուց Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պողոսպալյանի բարձր նախագահությամբ, - աեղի ունեցավ 1993—94 թթ. ուսումնական տարվա վերաբացման հանդիսությունը:

Նախագահական սեղանի շորջ հոգևոր ճեմարանի վերատեսուց սրբազն հոր Կողքին տեղ էին գրավել Մայր տաճարի լուսարարական Տ. Հովհիկ արքեպիսկոպոս Սահմուրդանը և հոգևոր ճեմարանի տեսուց Տ. Անանիա եպիսկոպոս Արաքաջյանը:

Հոգևոր ճեմարանի նոր ոստմնական տարեշրջանի բացման հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միարանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայրավանքի պաշտոնությունը, մեծ թվով հյուրեր և ուսանողների ծնողներ:

Հանդիսությունը սկսվում է Տերունական աղոթքով: Այնուհետև հոգևոր ճեմարանի սաների կատարմամբ հնչում է Հայաստանի Հանրապետության հիմնը և Ճեմարանի քայլերգը: Որից հետո երաժշտության դասախոս Խորեն Պալյանի ղեկավարությամբ սաները կատարում են Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի «Հոյս փառաց» և Ներսէս Շնորհապի Հայուապետի «Հայրատունկ Այգոյն» հոգեպարար շարականները: Ապա հոգևոր ճեմարանի դասախարակ Տիրայր քահանա Գյուղճյանը Ս. Ավետարանից ընթերցում է «Սերմնացման առակը», (Մտք. ԺԳ 4—9): Ընթերցումից հետո ոստմնական տարեշրջանի բացման խոսքով հանդիսական է գալիս ճեմարանի տեսուց Տ. Անանիա եպիսկոպոս Արաքաջյանը: Մոքազն հայրը ուրախությամբ հշում է, որ վերաբացման տարվա հետ նոր հույսեր ու սպասելիքներ ենք ունենում, որ գալիք սերունդը ևս եկեղեցանվեր ոգով ու մտավոր կարողությամբ պիտի կարողանա բավարարել մեր ծովովրդի հոգևոր պահանջները ի Հայաստան և ի այլուս աշխարհի: Որից հետո Անանիա սրբա-

զանը ներկայացնում է տեսչությամբ և դասախոսական կազմին, որ հոգեոր անմարանը համարվել է նոր դասախոսմերով՝ հրավիրված այլ ուսումնական հաստատություններից:

Ծարունակելով խոսքը, ճեմարանի տեսուշն իր երախտագիտությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ դեպի ճեմարանն ունեցած հրա հայրական ջերմ հոգաւարության համար:


Սրբան հոր խոսքից հետո «Ե» լարանի սան Գեղամ Մսրտիրոսյանն արտասանում է մի հատված Ս. Գրիգոր Նարեկացոյ «Մատեան ողբերգություն»-ից: Այնուհետև երգախամբի կատարմամբ հնչում է «Յաղթող» և «Եղ Միածին ի Հօրէ» շարականները:


Վերջում Անանիա սրբազնը հրավիրում է հոգեոր ճեմարանի վերատեսուչ Ներսես արքեպիսկոպոսին իր օրհնությունները բաշխելու ուսանողներին և ներկաներին:

Սրբազն հայրը իր հայրական ողջույններն ու բարի մաղթանքներն է բերում հոգեոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

Վերատեսուչ սրբազնը սրտի բերկրանքով է խոսում այն իրադրյան մասին, որ համայն հայության ազգային և հոգեոր վերազարժունիք այս պայմաններում, Հայատանշայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության համար մի աննկարագրելի լայն ասպարեզ է բացվել: Մեր ժողովոդի զավակները, վերադառնալով իրենց հայությի արմատներին, մեծ խանդավառությամբ ու ոգևորությամբ են վերաբերվում մեր ազգային հոգեոր ու մըշակույթի արժեքներին: Իր խոսք ուղղելով սաներին, մասնավորապես նըշում է, որ ճեմարանի ուսանողները իրենց մտավոր և իմացական մակարդակով զարգացած և պատրաստ լինեն իրենց ուսերին կրելու մեր ժողովըրդի ճակատագիրը, սերտեն մեր մատենագրության բազմադարյան ժառանգությունը, միշտ ամուր, անշարժ պահեն Մեր Սուրբ Եկեղեցին. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Մայր Հայութենիքը:

Հոգեոր ճեմարանի սրյան հանդիսությունն ավարտվում է «Հայր մեր»-ի խմբովին երգեցողությամբ և Ներսես արքեպիսկոպոսի «Պահպանիչ»-ով:





ՍՈՒՐԲ ԷՇՄԻՎԾԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 4-ին, շաբաթ.—Նիկիոյ Սուրբ ժողովոյն երեք հարիստան և ութ հայրապետացն (325 թ.):

Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում և. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և. սեղանի վրա, և. պատարագ մատուցեց Տ. Թաղենու արդ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Տօն ծննդեան Սրբություն Կուսին Մարիամու յԱՅԱՎԵ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և. սեղանի վրա, և. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 11-ին, շաբաթ.—Տօն Սրբոյ Եկեղեցու ի հաւակատիս Սրբոյ Խաչին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում և. պատարագ մատուցեց Տ. Վագգեն արդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—ԽԱՉՎԵՐՍՅ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և. խորանի վրա, և. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետուր:

Երեկոյան ժամը 17-ին կատարվեց Խաչվերացի հանդիսավոր թափոր:

* * *

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:
Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատրագ մատուցեց S. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

Հավարտ և պատրագի կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն «վասն համօրէն Անջեցելոց»:

* * *

Սեպտեմբերի 18-ին, շաբաթ.—Տօն է Խաչի:
Այսօր Ս. Գյանեն վանքում և պատրագ մատուցեց S. Վազգեն արդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Սեպտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատրագ մատուցեց ոխտավորաբար Մայր Աթոռում գրունվող գերշ. S. Վաչե արքեպոս. Հովսեփյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ և պատրագի կատարվեց Հայրապետական մադթանք:

Ս. պատրագին Աերկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 21-ին, երեքշաբթի.—Մրբոց կուտանացմ՝ Փեփրոնեայ, Մարիեանեայ և Շուշանայ՝ դատերն Մնծին Վարդանայ:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում և պատրագ մատուցեց S. Մամիկոն արդ. Քիլեմյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց S. Վազգեն արդ. Միրզախանյանը:

* * *

Սեպտեմբերի 28-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատրագ մատուցեց ոխտավորաբար Մայր Աթոռում գրունվող Երուսաղեմի հալոց Ամենապատիվ S. Թորոգոմ արքեպոս. Մանուկյանը և «Հայր մեր»-ից առաջ բոլոնդակալից քարոզ խոսեց:

Հավարտ և պատրագի կատարվեց Հայրապետական մադթանք:

Ս. պատրագին Աերկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 2-ին, շաբաթ.—Մրբոց եօրանասնից և երկուց աշակերտացն Քրիստոսի:

Այսօր Ս. Սատվածածին եկեղեցում և պատրագ մատուցեց S. Մամիկոն արդ. Քիլեմյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 8-ին, Կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորացի վրա, և պատարագ մատուցեց ովտավորաբար Մայր Աթոռում գտնվող S. Վաշէ ծ. վրդ. Խօնատիովանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ.—Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսարովաց, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւիթ Անյաղթ փիլիխոփային, Գրիգորի Նարեկացոյն և Ներսիսի Կայեցոյն:

Այսօր Օշականի Ս. Մեսարով Մաշտոց եկեղեցում և պատարագ մատուցեց S. Մկրտիչ քին. Երանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ովտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. S. Շահնե արքեպոս. Ամենյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 16-ին, շաբաթ.—Սրբոց Աւետարանչացն՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու:

Այսօր Ս. Գայանե վանքում և պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահիանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց S. Տիրայր քին. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հոկտեմբերի 28-ին, շաբաթ.—Սրբոց Երկոտասանից վարդապետացն՝ Թերեւոսի, Գիոնէսիոսի, Մեղրեստրոսի, Աթանասի, Կիրդի Երուաղեմացոյն, Եփրեմի Խուրին Աստրոյ, Բրուդի Կեսարացոյն, Գրիգորի Նիւացոյն, Գրիգորի Սասուածաբանին, Եպիփանու Կիպրացոյն, Յովհաննու Ռոկերանին և Կիրդի Սլերսանդրացոյն:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում պ. պատարագ մատուցեց S. Վազգեն արդ. Միդզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 24-ին, կիրակի.—Գիւտ Խաչ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և նեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց: Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայուապետը:

* * *


Հոկտեմբերի 30-ին, շաբաթ.—Մրբոյն Յովհաննու Ռոկեբերան հայրապետին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում պ. պատարագ մատուցեց S. Տիրայր քհն. Գյլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և նեղանի վրա, և պատարագ մատուցեց S. Խորեն քհն. Մարտիրյանը:





«ЭЧМИАДЗИН»

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (СЕНТЯБРЬ—ОКТЯБРЬ 1993 г.)

1. Поздравительное послание президента Республики Армения Левона Тер-Петросяна Католикосу всех армян Вазгену I по случаю 85-летия со дня рождения, 20 сентября 1993 г. (стр. 3).

2. Приветственное послание президента национальной Академии наук Республики Армения Католикосу всех армян Вазгену I по случаю 85-летия со дня рождения, 20 сентября 1993 г. (стр. 4-5).

3. Поздравительная телеграмма президиума Фонда Матерей Республики Карабаха Католикосу всех армян Вазгену I по случаю 85-летия со дня рождения (стр. 6).

4. Научная сессия в зале заседаний национальной Академии наук Республики Армения, посвящённая 85-летию со дня рождения Католикоса всех армян Вазгена I, 27 сентября 1993 г. Помещены также вступительное президента национальной Академии наук Республики Армения Ф. Т. Саркисяня и слово благословения и благодарности Католикоса всех армян Вазгена I (стр. 7-11).

5. **Пион Акопян**—Научно-исследовательское наследие Католикоса всех армян Вазгена I (исследование)—(стр. 12—28).

6. **Доктор-профессор А. М. Тутунджян**—Психологические труды Католикоса всех армян Вазгена I (исследование)—(стр. 29—36).

7. Поздравительное слово художника Григора Ханджяна Католикосу всех армян Вазгену I по случаю 85-летию со дня рождения (исследование)—(стр. 37—40).

8. **Профессор Вараздат Арутюнян**—Наш Католикос-зодчий (исследование)—(стр. 41—46).

9. **Мания Казарян**—Музейная деятельность Католикоса всех армян Вазгена I (исследование)—(стр. 47—50).

10. **А. Д. Папазян**—Достославный Патриарх (исследование)—(стр. 15—57).

11. Приветственное послание председателя Союза писателей Республики Армения Ваагна Давтяна Католикосу всех армян Вазгену I по случаю 85-летия со дня рождения (стр. 58—59).


12. Слово писательницы Сильвы Капутикан Католикосу всех армян Ваягену I по случаю 85-летия со дня рождения (стр. 60).

13. **Назик Арутюнян**—Католикос всех армян Везген I—педагог (исследование)—(стр. 61—69).

14. **Геворг Деврикян**—Жизнь во имя великой борьбы за существования (по случаю 85-летия со дня рождения Католикоса всех армян Вазгена I)—(стр. 70—73).

15. Торжественное открытие учебного года в духовной академии Св. Эчмиадзина, 14 сентября 1993 г. (стр. 74—75).

16. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за сентябрь-октябрь месяцы (стр. 76—79).



ETCHMIADZIN*

OFFICIAL MONTHLY OF HOLY ECHMIADZIN (SEPTEMBER—OCTOBER 1993)

1. The congratulatory address of Levon Ter-Petrossian, President of Armenia's Republic, to Vasken I, Catholicos of All Armenians, on the occasion of His 85th birthday anniversary, 20th September 1993 (p. 3).

2. The greeting address of the presidency of the national Academy of Sciences of Armenia's Republic, to Vasken I, Catholicos of All Armenians, on the occasion of His birthday anniversary, 20th September 1993 (pp. 4—5).

3. The congratulatory cable to His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, of the presidency of Maternity fund of Karabagh's Republic, on the occasion of His 85th birthday anniversary (p. 6).

4. Scientific session in the big hall of the Republic's national Academy of Sciences, devoted to His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, on the occasion of His 85th birthday anniversary, 27th September 1993. It has been given also the inauguration address of Mr. Fadey D. Sarkessian, President of the Republic's national Academy of Sciences, and of His Holiness's address of blessings and thanks (pp. 7—11).

5. **Pion Hakobian**—The scientific research work of Vasken I (study)—(pp. 12—28).

6. **Dr.-Prof. Hovsep Tutundjian**—The psychological works of Vasken I, Catholicos of All Armenians (study)—(pp. 29—36).

7. **Painher Grigor Khandjian**—Greeting address on the occasion of the Catholicos of All Armenians' 85th birthday anniversary (study)—(pp. 37—40).

8. **Prof. Varazdat Harutiunian**—Our constructor Catholicos (study)—(41—46).

9. **Manya Ghazarian**—The activity in the field of museums of our constructor Catholicos (study)—(pp. 47—50).

10. **Hagop Papazian**—The emeritus Catholicos (study)—(pp. 51—57).

11. The greeting address of Vahagen Davtian, the President of the Republic of Armeniass' Union of writers, on the occasion of the 85th birthday anniversary of His Holiness (pp. 58—59).

12. The address of poetess Silva Kaputikian to the Catholicos of All Armenians, on the occasion of His 85th birthday anniversary (p. 60).

13. **Nazik Harutiunian**—Vasken I, Catholicos of All Armenians, as pedagogue (study)—(pp. 61—69).

14. **Gevorg Devrikian**—Life devoted for the struggle of existence, on the occasion of the 85th birthday anniversary of His Holiness (pp. 70—73).

15. Festivity of the Spiritual Seminary's reopening of the new school year, 14th September 1993 (pp. 74—75).

16. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of September—October 1993 (pp. 76—79).



„ETCHMIADZINE“

ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (SEPTEMBRE—OCTOBRE 1993)

1. Lettre de félicitation de M. Lévon Ter-Pétrossian, président de la République d'Arménie, adressée à Sa Sainteté Vasken Ier à l'occasion du 85e anniversaire de sa naissance (20 septembre 1993)—(p. 3).

2. Allocution du président de l'Académie Nationale de la République d'Arménie prononcée le 20 septembre 1993 dans la grande salle de l'Académie à l'occasion du 85e anniversaire de la naissance de Sa Sainteté Vasken Ier (pp. 4—5).

3. Télégramme de félicitation de la présidence du «Fonds de Maternité» de la République du Haut-Karabagh adressé à Sa Sainteté à l'occasion du 85e anniversaire de sa naissance (p. 6).

4. Symposium dans la grande salle de l'Académie Nationale de la République d'Arménie consacré au 85e anniversaire de la naissance de Sa Sainteté Vasken Ier (27 septembre 1993). Textes du discours d'ouverture de M. Fadey Sarksian, président de l'Académie Nationale de la République d'Arménie, et de l'allocution de Sa Sainteté Vasken Ier prononcés à cette occasion (pp. 7—11).

5. **Pion Hakobian**—L'héritage littéraire et scientifique de Sa Sainteté Vasken Ier (exposé)—(pp. 12—28).

6. **H. M. Toutoundjian**—Les travaux psychologiques de Sa Sainteté Vasken Ier (exposé)—(pp. 29—36).

7. Texte du discours de M. Grigor Khandjian prononcé le 27 septembre 1993 à l'occasion du 85e anniversaire de la naissance de Sa Sainteté Vasken Ier (pp. 37—40).

8. **Arshitecte Varazdat Haroutiounian**—Notre Catholicos, l'éminent Constructeur (exposé)—(pp. 41—46).

9. **Mania Ghazarian**—L'activité du Catholicos Vasken Ier dans le domaine de la création et de l'organisation des musées (exposé)—(pp. 47—50).

10. **Hakob Papazian**—Le Patriarche de grands mérites (exposé)—(pp. 51—56).

11. Lettre de félicitation de M. Vahaguen Davtian, président de l'Union des Ecrivains de la République d'Arménie, adressée à Sa Sainteté Vasken Ier à l'occasion du 85e anniversaire de sa naissance (pp. 58—59).

12. Lettre de félicitation de la poétesse Silva Kapoutikian adressée à Sa Sainteté à l'occasion du 85e anniversaire de sa naissance (p. 60).

13. **Nazik Haroutiounian**—L'activité pédagogique du Catholicos Vasken Ier (exposé)—(61—69).

14. **Guévorg Dévrkian**—Une vie consacrée à la lutte pour l'existence (à l'occasion du 85e anniversaire de la naissance du Catholicos Vasken Ier (pp. 70—73).

15. Solennité consacrée à la rentrée des classes du séminaire de St. Etchmiadzine (14 septembre 1993)—(pp. 74—75).

16. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois septembre—octobre 1993 (pp. 76—79).

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհավորական ողերձը Ամենայն Հա-	
լոց Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան 85-ամյակի առթիվ	3
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ողջույնի ողերձը	4
Ա. Ամենայն Ղարաբաղի Հանրապետության Մայրության Հիմնադրամի նախագահության շնորհավորական նեռագիրը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամե-	
նայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 85-ամյակի առթով	6
Գիտական նատարչան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում՝ նվիրված Նորին Սուրբ Օծություն Տ. Տ.	
Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 85-ամյակին	7
ՊՐՈՊ. ՀԱԿՈԲՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինի գիտա- թեսազոտական վաստակը	12
ԴԱԿ. -ՊՐՈՊ. Հ. Մ. ԹՈՒԹՈՒՆՉՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի մոգերանական աշխատությունները	29
Նկարիչ Գրիգոր Խանջյանի շնորհավորական խոսքը Ամենայն Հայոց Վեհափառ Հայ- րապետի ծննդյան 85-ամյակի առթիվ	37
ՊՐՈՊ. ՎԱՐՍ. ՎԱՐՈՒԹՅՈՒՆՑ ՀԱԿՈԲՅԱՆ—Մեր շինարար Կաթողիկոսը	41
ՄԱԿԱՆՑԱԿ ՎԱԶԱՐՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի թանգարանային գործունեությունը	47
Հ. Դ. ՓԱՓԱՋՅԱՆ—Մեծագործ Հայրապետը	51
Հայաստանի Հանրապետության գրողների միության նախագահ Վահագն Դավթյանի շնորհավորական ողերձը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 85-ամյակի առթիվ	58
Բանաստեղծութիւն Սիրվա Կապուտիկյանի խոսքը առ Հայրապետն Հայոց	60
ԴԱԿ. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մաս-	
կավարժ	61
ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԿՅԱՆ—Կյանք՝ հանուն մեծ զոյամարտի	70
Հոգևոր Շեմարանի վերաբացման հանդիսությունը	74
ՄՄ.ՅՐ Ա.ԹՈՐՈՍԻՄ—Եկեղեցական թեմ. լորեր	76
«Էշմիածն» օֆիցիալինի յարագական համարակալ էկամարտությունը	80
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	81
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	82

ԽԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՇՄԻԱԴՅԻՆ
«ԷՇՄԻԱԴՅԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 16.11.1993 թ.: Ստորագրված է տպագրության 17.01.1994 թ.:
Տպագրական 5,25 մամլչ լ+ 6 Աերդիր, բուլղ 70×108¹/₁₆, պատվեր 298:

Մայր Աքոռ Սուրբ Էջմիածնի տպարան

ISSN 0134—5249